

ԷՆԵՐԳԵՏԻԿ ԽԱՐՏԻԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
(1-ին մաս)

Նախաբան

Սույն Պայմանագրի Պայմանավորվող կողմերը,  
հաշվի առնելով Նոր Եվրոպայի համար 1990 թվականի նոյեմբերի 21-ին  
ստորագրված Փարիզի խարտիան,  
հաշվի առնելով Եվրոպական Էներգետիկ խարտիայի Հաագայի համաժողովի՝  
1991  
թվականի դեկտեմբերի 17-ին Հաագայում ստորագրված Եզրափակիչ  
փաստաթղթում  
ընդունված Եվրոպական Էներգետիկ խարտիան,  
հիշեցնելով, որ Հաագայի համաժողովի Եզրափակիչ փաստաթուղթը  
ստորագրած բոլոր  
կողմերը պարտավորվեցին պահպանել Եվրոպական Էներգետիկ խարտիայի  
նպատակներն ու  
սկզբունքները եւ բարեխիղճ բանակցությունների միջոցով, որքան հնարավոր է  
արագ,  
իրականացնել եւ ընդլայնել դրանց համագործակցությունը Էներգետիկ  
խարտիայի  
պայմանագրի եւ արձանագրությունների մշակման նպատակով եւ ցանկանալով,  
որ այդ  
խարտիայում նշված պարտավորությունները ձեռք բերեն հուսալի հիմք՝  
իրավաբանորեն  
պարտավորեցնող միջազգային փաստաթղթի տեսքով,  
ցանկանալով նաեւ սահմանել Եվրոպական Էներգետիկ խարտիայի մեջ  
հռչակված  
սկզբունքների իրականացման համար պահանջվող կառուցվածքային  
շրջանակներ,  
ցանկանալով իրականացնել Եվրոպական Էներգետիկ խարտիայի  
նախաձեռնության  
հիմնական գաղափարը, որը պետք է դառնա Էներգետիկայի մեջ կապիտալ  
ներդրումների  
եւ առելտրի ազատականացման միջոցների օգնությամբ տնտեսական աճի խթան,  
հաստատելով, որ Պայմանավորվող կողմերը բացառիկ նշանակություն են  
տալիս  
լրիվ ծավալով ազգային ռեժիմի, ինչպես նաեւ առավել նպաստավոր ազգի ռեժիմի  
արդյունավետ իրականացմանը, եւ որ կապիտալ ներդրումների նկատմամբ այդ  
պարտավորությունները կկիրառվեն լրացուցիչ պայմանագրին  
համապատասխան,  
ուշադրության առնելով միջազգային առելտրի հետեւողական  
ազատականացման  
խնդիրը եւ միջազգային առելտրի մեջ խտրականության անթույլատրելիության  
սկզբունքը, ինչպես դրանք ձեւակերպված են Սակագների եւ առելտրի գլխավոր  
համաձայնագրում եւ դրա հետ կապված Փաստաթղթերում, եւ ինչպես դրանք այլ  
կերպ  
նախատեսված են սույն Պայմանագրում,  
Էներգետիկ նյութերի ու արտադրանքի եւ դրանց հետ կապված սարքավորման,

տեխնոլոգիաների եւ ծառայությունների առեւտրում տեխնիկական, վարչական եւ այլ խոչընդոտները հետեւողականորեն հաղթահարելու վճռականությամբ համակված,  
ակնկալելով Սակագների եւ առեւտրի գլխավոր համաձայնագրին այն Պայմանավորվող կողմերի հավանական անդամակցությունը, որոնք ներկայումս չեն հանդիսանում այդ համաձայնագրի կողմեր, եւ ձգտելով սախատեսել այնպիսի ժամանակավոր առեւտրական համաձայնություններ, որոնք կօգնեն այդ Պայմանավորվող կողմերին եւ չեն խոչընդոտի այդպիսի անդամությանը նրանց պատրաստվելուն, հաշվի առնելով այն Պայմանավորվող կողմերի իրավունքներն ու պարտականությունները, որոնք հանդիսանում են նաեւ Սակագների եւ առեւտրի գլխավոր համաձայնագրի ու դրանց հետ կապված Փաստաթղթերի կողմեր, ուշադրության առնելով ընկերությունների, մոնոպոլիաների միաձուլման, հակամրցակցային պրակտիկայի եւ շուկայում մենաշնորհային դիրք գրավելու չարաշահման մրցակցության կանոնները, ուշադրության առնելով նաեւ Միջուկային գեների չտարածման պայմանագիրը, Միջուկային նյութերի արտահանման ղեկավար սկզբունքները եւ միջուկային նյութի չտարածման մյուս միջազգային պարտավորությունները կամ ըմբռնումները, ընդունելով Էներգիայի առավել արդյունավետ հետախուզման, արտադրության, փոխակերպման, պահպանման, փոխադրման, բաշխման եւ օգտագործման անհրաժեշտությունը, հիշեցնելով Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի Շրջանակային կոնվենցիան, Յեռավոր տարածություններում օդի վերսահմանային աղտոտման մասին կոնվենցիան եւ այդ կոնվենցիային կից արձանագրությունները, ինչպես նաեւ շրջակա միջավայրի վերաբերյալ մյուս միջազգային համաձայնագրերը՝ Էներգիայի հետ կապված ասպեկտներով հանդերձ, եւ ընդունելով շրջակա միջավայրի պահպանման միջոցների, ներառյալ շահագործումից Էներգետիկ կայանքների դուրսբերումը եւ թափոնների հեռացումը, ինչպես նաեւ այդ նպատակների համար միջազգային մակարդակով համաձայնեցված նպատակների եւ չափանիշների ընդունման հարաճուն անհրաժեշտությունը, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Մաս 1  
Սահմանումները եւ նպատակը

ՀՈԴՎԱԾ 1  
Սահմանումներ

Սույն Պայմանագրի նպատակների համար.

1) "Խարտիա" նշանակում է՝ Եվրոպական Էներգետիկ խարտիայի Հաագայի համաժողովի՝ 1991 թվականի դեկտեմբերի 17-ին Հաագայում ստորագրված Եզրափակիչ

փաստաթղթում ընդունված Եվրոպական Էներգետիկ խարտիան. Եզրափակիչ փաստաթղթի

ստորագրումը դիտվում է որպես Խարտիայի ստորագրում:

2) "Պայմանավորվող կողմ" նշանակում է՝ այն պետությունը կամ Տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպությունը, որը համաձայնել է պարտավորություններ վերցնել սույն Պայմանագրով, եւ որոնց համար Պայմանագիրը

ուժի մեջ է:

3) "Տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային Կազմակերպություն" նշանակում

է՝ պետությունների կողմից հիմնված այն կազմակերպությունը, որին նրանք հանձնել

են իրավասության որոշակի հարցեր, որոնց մի շարքը կարգավորվում է սույն Պայմանագրով, ներառյալ այդ հարցերի առթիվ նրանց համար պարտադիր որոշումներ

ընդունելու լիազորությունները:

4) "Էներգետիկ կյուբեր եւ արտադրանք"՝ Եվրոպական համայնքների Մաքսային համագործակցության խորհրդի համաձայնեցված համակարգի եւ զուգակցված անվանակարգության հիման վրա EM Յավելվածում ընդգրկված առարկաները:

5) "Տնտեսական գործունեություն Էներգետիկ հատվածում" նշանակում է՝ Էներգետիկ կյուբերի եւ արտադրանքի հետախուզմանը, արդյունահանմանը, վերամշակմանը, արտադրությանը, պահպանմանը, ցամաքային փոխադրմանը, հանձնմանը,

բաշխմանը, առևտրին, իրացմանը կամ վաճառքին վերաբերող տնտեսական գործունեություն, բացառությամբ այն կյուբերի եւ արտադրանքի, որոնք ներառված են

1-ին Յավելվածի մեջ, կամ այն գործունեությունը, որը վերաբերում է բազմաթիվ օբյեկտների միջեւ ջերմություն բաշխելուն:

6) "Կապիտալ ներդրում" նշանակում է՝ ներդրողի սեփականության մեջ գտնվող կամ նրա կողմից ուղղակիորեն կամ անուղղակի կերպով վերահսկվող ակտիվների բոլոր

տեսակները եւ ներառում է.

ա) իրական եւ անշոշափելի, ինչպես նաեւ շարժական եւ անշարժ սեփականություն

եւ ցանկացած գույքային իրավունք. այնպիսիք, ինչպիսիք են վարձակալությունը, գրավադրումը, հիպոթեքի եւ այլ գրավադրման հետ պահման իրավունքը,

բ) ընկերությունը կամ գործարար ձեռնարկությունը կամ բաժնետոմսերը, ավանդները կամ ընկերության կամ գործարար ձեռնարկության բաժնետիրական կապիտալին

մասնակցության մյուս ձեւերը, ինչպես նաեւ փոխառությունները եւ ընկերության կամ

գործարար ձեռնարկության պարտքի մյուս հանձնառությունները,

գ) դրամական միջոցների առթիվ պահանջի իրավունքները եւ, ըստ տնտեսական

արժեք ներկայացնող ու կապիտալ ներդրման հետ կապված համաձայնագրի, կատարման

պահանջի իրավունքները,

դ) մտավոր սեփականությունը,

ե) եկամուտները,

զ) Էներգետիկ հատվածում ցանկացած տնտեսական գործունեություն

իրականացնելու՝ օրենքին համապատասխան կամ ըստ համաձայնագրի կամ համաձայն օրենքի տրված ցանկացած արտոնագրի եւ թույլտվության ուժով հատկացված ցանկացած իրավունք:

Այն ձեւի փոփոխությունը, որի մեջ ներդրվում են ակտիվները, չի ներազդում դրանց՝ որպես կապիտալ ներդրումների բնույթի վրա, եւ "կապիտալ ներդրում" հասկացությունը իր մեջ ընդգրկում է բոլոր կապիտալ ներդրումները՝ անկախ այն բանից՝ դրանք Պայմանավորվող կողմի կապիտալ ներդրում իրականացնող ներդրողի

համար եւ այն Պայմանավորվող կողմի համար, որի տարածքում է կատարված կապիտալ

ներդրումը, սույն Պայմանագիրը ուժի մեջ մտնելու թվականներից առավել ուշ թվականից առաջ են գոյություն ունեցել, թե իրականացվել են դրանից հետո (այսուհետ՝ "ուժի մեջ մտնելու թվական")՝ պայմանով, որ Պայմանագիրը կիրառվում է

միայն այն հարցերի առնչությամբ, որոնք այդպիսի կապիտալ ներդրումներ են շոշափում ուժի մեջ մտնելու թվականից հետո:

Կապիտալ ներդրումը վերաբերում է ենթագետիկ հատվածում տնտեսական գործունեության հետ կապված ցանկացած կապիտալ ներդրման, ինչպես նաեւ այն

կապիտալ ներդրումներին կամ կապիտալ ներդրումների դասերին, որոնք Պայմանավորող

կողմը իր տարածքում նշել է որպես "Խարտիայի համապատասխան արդյունավետության

նախագծեր", եւ որոնց մասին այդ ձեւով ծանուցել է Քարտուղարությանը:

7) "Ներդրող" նշանակում է՝

ա) Պայմանավորվող կողմի առնչությամբ.

1) այդ Պայմանավորվող կողմի քաղաքացիությունը կամ հպատակությունն ունեցող

կամ, այդ կողմի գործող օրենսդրության համապատասխան, այնտեղ մշտապես բնակվող

Ֆիզիկական անձ,

2) ընկերություն կամ այլ կազմակերպություն՝ հիմնված այդ Պայմանավորվող կողմի գործող օրենսդրության համապատասխան:

բ) "Երրորդ պետության" առնչությամբ՝ Ֆիզիկական անձը, ընկերությունը կամ այն կազմակերպությունը, որը համապատասխանում է *mutatis matandis*-ին, այն պայմաններին, որոնք Պայմանավորվող կողմի համար նախատեսված են "ա" ենթակետում:

8) "Կապիտալ ներդրումներ իրականացնել" կամ "կապիտալ ներդրումների իրականացում" նշանակում է՝ "նոր կապիտալ ներդրումների իրականացում", գոյություն ունեցող ամբողջ կապիտալ ներդրումների կամ դրանց մի մասի ձեռքբերում

կամ տարածում ներդրումային գործունեության այլ բնագավառների վրա:

9) "Եկամուտներ" նշանակում է՝ կապիտալ ներդրումից ստացվող կամ դրա հետ կապված գումարներ՝ անկախ այն ձեւից, թե ինչպես են դրանք վճարվում, ներառելով

շահույթը, շահաբաժինները, տոկոսները, կապիտալ արժեքի աճից ստացվող եկամուտները, ռոյալթիի վճարումը, կառավարման համար վարձատրությունը, տեխնիկական աջակցությունը եւ այլ վարձատրությունները կամ բնամթերքով վճարումները:

10) "Տարածք"՝ Պայմանավորող կողմ հանդիսացող պետության առնչությամբ նշանակում է՝

ա) այն տարածքը, որը գտնվում է այդ պետության ինքնիշխանության ներքո՝ այն իմաստով, որ այդ տարածքն ընդգրկում է ցամաքը, ներքին ջրերը, տարածքային ծովը, եւ

բ) միջազգային իրավունքին ենթակա եւ դրան համապատասխան՝ ծովը, ծովի հատակը

եւ դրա ընդերքը, որոնց նկատմամբ այդ Պայմանավորվող կողմն իրականացնում է ինքնիշխան իրավունքներ եւ իրավասություն:

Պայմանավորվող կողմ հանդիսացող Տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային

կազմակերպության առնչությամբ տարածքներ նշանակում է այդպիսի կազմակերպության

անդամ պետությունների տարածքները՝ այդ կազմակերպության հիմնադրման մասին

համաձայնագրում նշված դրույթների համաձայն:

11)

ա) "ԳԱՏՏ" նշանակում է՝ "1974 թ. ԳԱՏՏ" կամ "1994 թ. ԳԱՏՏ" կամ երկուսն էլ՝ այն դեպքերում, երբ երկուսն էլ կիրառելի են,

բ) "1947 թ. ԳԱՏՏ" նշանակում է՝ Սակագների եւ առեւտրի գլխավոր համաձայնագիր, որը թվագրված է 1947 թվականի հոկտեմբերի 30-ով, որպես Յավելված

այն Եզրափակիչ ակտին, որը ընդունվել է Առեւտրի եւ զբաղվածության մասին Միավորված ազգերի կազմակերպության համաժողովի Նախապատրաստական հանձնաժողովի

երկրորդ նստաշրջանի ավարտին, ինչպես որ այն հետագայում ճշգրտված, ուղղված կամ

փոփոխված է,

գ) "1994 թ. ԳԱՏՏ" նշանակում է՝ Սակագների եւ առեւտրի գլխավոր համաձայնագիր, ինչպես այն սահմանված է Առեւտրի համաշխարհային կազմակերպության

հիմնադիր համաձայնագրի 1A հավելվածում, ինչպես որ այն հետագայում ճշգրտված,

ուղղված կամ փոփոխված է:

Առեւտրի համաշխարհային կազմակերպության հիմնադիր համաձայնագրի կողմը

դիտվում է որպես 1994 թ. ԳԱՏՏ-ի կողմ:

դ) "դրա հետ կապված Փաստաթղթեր" նշանակում է, համապատասխանաբար.

1) այն համաձայնագրերը, պայմանավորվածությունները կամ մյուս իրավական փաստաթղթերը, ներառյալ որոշումները, հռչակագրերը եւ ըմբռնումները, որոնք կնքվել են 1947 թ. ԳԱՏՏ-ի հովանու ներքո, ինչպես որ դրանք հետագայում ճշգրտված, ուղղված կամ փոփոխված են, կամ

2) Առեւտրի համաշխարհային կազմակերպության հիմնադիր համաձայնագիրը, ներառյալ դրա 1-ին Յավելվածը (բացի 1994 թ. ԳԱՏՏ-ից), դրա 2-րդ, 3-րդ, եւ 4-րդ Յավելվածները, ինչպես նաեւ դրան վերաբերող որոշումները, հռչակագրերը, ինչպես

որ դրանք հետագայում ճշգրտված, ուղղված կամ փոփոխված են:

12) Մտավոր սեփականությունը ներառում է հեղինակային հարակից իրավունքները,

ապրանքային պիտակները, աշխարհագրական ցուցումները, արդյունաբերական գծագրերը,

արտոնագրերը, ինտեգրալ սխեմաների տոպոլոգիայի նախագծերը եւ չիրապարակված

տեղեկության պահպանությունը:

13)

ա) "Էներգետիկ խարտիայի Արձանագրություն" կամ "Արձանագրություն" նշանակում

Է՝ պայմանագիր, որի կապակցությամբ բանակցությունները հավանության են արժանացել, եւ որի տեքստը ընդունվել է Խարտիայի այն համաժողովի կողմից, որտեղ

հանդես են գալիս երկու կամ ավելի թվով Պայմանավորվող կողմեր՝ սույն

Պայմանագրի

ընդգրկման կամ, Խարտիայի 3-րդ բաժնին համապատասխան,

համագործակցության

բնագավառների շրջանակներում ցանկացած կոնկրետ հատվածի կամ

գործունեության

տեսակի վերաբերյալ սույն Պայմանագրի դրույթների համալրման, լրացման,

ընդլայնման կամ զարգացման նպատակով,

բ) "Էներգետիկ խարտիայի հռչակագիր" կամ "Հռչակագիր" նշանակում Է՝

չպարտադրող փաստաթուղթ, որի կապակցությամբ բանակցությունները

հավանության են

արժանացել, եւ որի տեքստը հաստատվել է Խարտիայի համաժողովի կողմից,

որտեղ

հանդես են գալիս երկու կամ ավելի թվով Պայմանավորվող կողմեր՝ սույն

Պայմանագրի

դրույթների համալրման կամ լրացման նպատակով:

14) "Ազատորեն փոխարկվող տարադրամ" նշանակում Է՝ այն տարադրամը, որը

լայնորեն փոխարկվում է միջազգային տարադրամային շուկաներում եւ լայնորեն

օգտագործվում է միջազգային գործարքներում:

## ՀՈԴՎԱԾ 2

### Պայմանագրի նպատակը

Սույն Պայմանագիրը սահմանում է իրավական շրջանակները՝ Էներգետիկայի բնագավառում փոխլրացման եւ փոխադարձ շահի հիման վրա երկարաժամկետ համագործակցությանը աջակցություն ցույց տալու նպատակով՝ Խարտիայի նպատակներին

եւ սկզբունքներին համապատասխան:

## Մաս 2

### Առեւտուրը

## ՀՈԴՎԱԾ 3

### Միջազգային շուկաները

Պայմանավորվող կողմերը աշխատում են առեւտրային պայմաններով միջազգային

շուկաներ մուտք գործելուն աջակցություն ցույց տալու նպատակով եւ, ընդհանուր առմամբ, Էներգետիկ նյութերի եւ արտադրանքի բաց եւ մրցակցային շուկայի զարգացման նպատակով:

ՀՈԴՎԱԾ 4  
ԳԱՏՏ-ի եւ դրան առնչվող Փաստաթղթերի չնվազեցումը

Սույն Պայմանագրի մեջ ԳԱՏՏ-ի կողմեր հանդիսացող կոնկրետ Պայմանավորվող կողմերի միջեւ հարաբերություններում ոչինչ չպետք է նվազեցնի ԳԱՏՏ-ի եւ դրա հետ կապված Փաստաթղթերի դրույթները, ինչպես դրանք կիրառվում են այդ Պայմանավորվող կողմերի միջեւ:

ՀՈԴՎԱԾ 5  
Առեւտրի հետ կապված ներդրումային միջոցներ

1) Պայմանավորվող կողմը չպետք է առեւտրի հետ կապված ոչ մի այնպիսի ներդրումային միջոց կիրառի, որը անհամատեղելի կլինի ԳԱՏՏ-ի 3-րդ կամ 11-րդ հոդվածի դրույթների հետ, դա չպետք է վնասի ԳԱՏՏ-ի եւ դրա հետ կապված Փաստաթղթերի, ինչպես նաեւ 29-րդ հոդվածի գծով այդ Պայմանավորվող կողմի իրավունքներն ու պարտավորությունները:

2) Այդպիսի միջոցները ներառում են ցանկացած այն ներդրումային միջոցները, որոնք հանդիսանում են պարտադիր կամ ստիպողաբար իրականացնելի միջոցներ ազգային

օրենսդրության համաձայն կամ ցանկացած վարչական որոշման համապատասխան, կամ

որոնց կատարումն անհրաժեշտ է որեւէ առավելություն ստանալու համար, եւ որոնք պահանջում են.

ա) ձեռնարկության կողմից հայրենական ծագման կամ որեւէ հայրենական աղբյուրից արտադրանքի գնումներ կամ օգտագործում՝ անկախ այն բանից, թե ընդամին

վերապահված են որոշակի արտադրանք, արտադրանքի ծավալ կամ արժեք կամ ծավալի կամ

դրա տեւական արտադրության արժեքի բաժին, կամ

բ) ձեռնարկության կողմից ներմուծվող արտադրանքի գնումների կամ օգտագործման

սահմանափակումներ՝ նրա կողմից արտահանվող տեղական արտադրանքի ծավալի կամ

արժեքի հետ կապված մեծությամբ,

գ) ձեռնարկության կողմից իր տեղական արտադրության մեջ օգտագործվող կամ այդ

արտադրության հետ կապված արտադրանքի արտահանումը ինչպես ամբողջությամբ, այնպես

էլ ձեռնարկության կողմից արտահանվող տեղական արտադրանքի ծավալի կամ արժեքի հետ

կապված մեծությամբ,

դ) ձեռնարկության կողմից իր տեղական արտադրության մեջ օգտագործվող կամ այդ

արտադրության հետ կապված արտադրանքի արտահանումը արտասահմանյան տարադրամին նրա

մատչելիության սահմանափակման միջոցով արտասահմանյան տարադրամով ձեռնարկության

համար նախատեսված մուտքերի հետ շաղկապված գումարով, կամ,

ե) ձեռնարկության կողմից արտադրանքի արտահանումը կամ արտահանման համար

վաճառքը՝ անկախ այն բանից, թե այդ դեպքում վերապահվո՞ւմ է որոշակի արտադրանք,

արտադրանքի ծավալ կամ արժեք կամ ծավալի կամ նրա տեղական արտադրության արժեքի

բաժին:

3) 1-ին կետում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես խոչընդոտ այն բանի, որ Պայմանավորվող կողմը կիրառի առևտրի հետ կապված այն ներդրումային միջոցները,

որոնք շարադրված են 2-րդ կետի "ա" եւ "գ" ենթակետերում՝ որպես արտահանման,

արտասահմանյան օգնության, կառավարական գնումների կամ արտոնյալ սակագների կամ

քվոտային ծրագրերի խրախուսման իրավունքի պայման:

4) Չնայած 1-ին կետին՝ Պայմանավորվող կողմը կարող է ժամանակավորապես շարունակել առևտրի հետ կապված ներդրումային այն միջոցների պահպանումը, որոնք,

մինչ այդ կողմը կստորագրեր սույն Պայմանագիրը, 180 օր եղել են գործողության մեջ՝ կախված ծանուցման եւ աստիճանական վերացման մասին այն դրույթներից, որոնք

շարադրված են TRM Յավելվածում:

#### ՀՈԴՎԱԾ 6

#### Մրցակցությունը

1) Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ էներգետիկ հատվածում տնտեսական գործունեության մեջ մրցակցության ճանապարհին գործում է շուկայական աղավաղումները եւ խոչընդոտները նվազեցնելու նպատակով:

2) Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իր իրավասության շրջանակներում ապահովում է այնպիսի օրենքների առկայությունը եւ պարտադիր կատարումը, որոնք

տնտեսական գործունեության էներգետիկ հատվածում անհրաժեշտ եւ նպատակահարմար են

միակողմ եւ համաձայնեցված հակամրցակցային վարքագծի հիմնախնդիրների լուծման

համար:

3) Մրցակցության կանոնների փորձ ունեցող Պայմանավորվող կողմերը ըստ հարցումի եւ, գոյություն ունեցող ռեսուրսների շրջանակներում, պատշաճ ուշադրություն են դարձնում մրցակցության կանոնների մշակման եւ իրականացման

հարցերով մյուս Պայմանավորվող կողմերին տեխնիկական աջակցություն ցույց տալու

հարցին:

4) Պայմանավորվող կողմերը կարող են համագործակցել մրցակցության իրենց կանոններն ապահովելու ասպարեզում՝ խորհրդակցությունների եւ տեղեկության փոխանակման միջոցով:

5) Եթե մի Պայմանավորվող կողմը գտնի, որ այլ Պայմանավորվող կողմի



տարածքում որեւէ կոնկրետ հակամրցակցային վարքագիծ բացասաբար է ազդում սույն

հողվածում սահմանված նպատակների հետ կապված էական շահերի վրա, ապա այդ

Պայմանավորվող կողմը կարող է մյուս Պայմանավորվող կողմին տեղյակ պահել եւ

կարող է առաջարկել, որ այդ Պայմանավորվող կողմի մրցակցության հարցերի մարմինները պատշաճ գործողություն ձեռնարկեն ստիպողական կատարման ուղղությամբ:

Ծանուցող Պայմանավորվող կողմը այդպիսի ծանուցման մեջ մտցնում է բավարար

տեղեկություն, որպեսզի ծանուցվող Պայմանավորվող կողմին հնարավորություն տա ի

հայտ բերելու ծանուցման առարկա հանդիսացող հակամրցակցային վարքագիծը, եւ անում

է առաջարկություն այնպիսի հետագա տեղեկատվության եւ

համագործակցության

վերաբերյալ, որոնք ծանուցող Պայմանավորվող կողմն ի վիճակի է տրամադրելու:

Ծանուցվող Պայմանավորվող կողմը կամ, հանգամանքներից կախված,

մրցակցության

հարցերի համապատասխան մարմինները կարող են խորհրդակցություններ

անցկացնել

ծանուցող Պայմանավորվող կողմի մրցակցության հարցերի մարմինների հետ եւ որոշում

կայացնել այն մասին, թե հարկ կա՞ ձեռնարկելու գործողություն ստիպողական կատարման ուղղությամբ այն հակամրցակցային վարքագծի նկատմամբ, որի մասին

պնդվում է ծանուցման մեջ. նրանք լրիվ չափով ուշադրության են առնում ծանուցող

Պայմանավորվող կողմի խնդրանքը: Ծանուցվող Պայմանավորվող կողմը ծանուցող

Պայմանավորվող կողմին տեղեկացնում է իր որոշման կամ մրցակցության հարցերի

համապատասխան մարմինների որոշման մասին եւ կարող է, եթե նա այդ ցանկանում է,

ծանուցող Պայմանավորվող կողմին տեղեկացնել ընդունված որոշման հիմքերի մասին:

Եթե ստիպողական կատարման ուղղությամբ գործողություն է ձեռնարկվում, ծանուցվող

Պայմանավորվող կողմը դրա արդյունքների մասին եւ, հնարավորին չափ, ցանկացած

նշանակալի միջանկյալ եզրահանգումների մասին հաղորդում է ծանուցող Պայմանավորվող կողմին:

6) Ոչինչ սույն հոդվածում չի ստիպում Պայմանավորվող կողմին՝ ներկայացնելու տեղեկություն՝ տեղեկության բացահայտման, գաղտնիության կամ գործարար գաղտնիքների վերաբերյալ՝ իր օրենսդրության հակառակ:

7) 5-րդ կետում եւ 27-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված ընթացակարգերը սույն Պայմանագրի շրջանակներում հանդիսանում են բացառիկ միջոցներ ցանկացած այն

վեճի լուծման համար, որը կարող է ծագել սույն հոդվածի կատարման կամ մեկնաբանման կապակցությամբ:

ՀՈԴՎԱԾ 7  
Տարանցում

- 1) Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի՝  
դյուրացնելու Էներգետիկ նյութերի եւ արտադրանքի տարանցումը, ազատ տարանցման սկզբունքին համապատասխան, անկախ այդպիսի Էներգետիկ նյութերի եւ արտադրանքի ծագումից, նշանակման տեղից կամ սեփականության իրավունքից եւ գինը որոշելիս՝ առանց այդպիսի տարբերությունների հիման վրա խտրականության, ինչպես նաեւ  
չկիրառելով չհիմնավորված ոչ մի ձգձգում, սահմանափակում կամ գանձում:  
2) Պայմանավորվող կողմերը խրախուսում են համապատասխան կազմակերպությունների համագործակցությունը՝
  - ա) Էներգետիկ նյութերի եւ արտադրանքի տարանցման համար անհրաժեշտ այն շինությունների նորացման ուղղությամբ, որոնք նախատեսված են Էներգիայի փոխադրման համար,
  - բ) Էներգիայի փոխադրման այն շինությունների զարգացման եւ շահագործման ուղղությամբ, որոնք սպասարկում են մեկից ավելի Պայմանավորվող կողմերի տարածքներ,
  - գ) Էներգետիկ նյութերի եւ արտադրանքի մատակարարման խափանումների հետեւանքները նվազեցնելու միջոցների ձեռնարկման ուղղությամբ,
  - դ) Էներգիայի փոխադրման շինությունների միավորման դյուրացման ուղղությամբ:3) Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պարտավորվում է, որ Էներգետիկ նյութերի եւ արտադրանքի փոխադրման եւ Էներգիայի փոխադրման շինությունների օգտագործման իր դրույթները տարանցիկ Էներգետիկ նյութերին եւ արտադրանքին տրամադրում են ոչ նվազ նպաստավոր ռեժիմ, քան այն ռեժիմն է, որ նրա դրույթները տրամադրում են սեփական տարածքից ծագող կամ իր համար նախատեսված այդպիսի նյութերին եւ արտադրանքին, եթե այլ բան նախատեսված չէ գործող միջազգային համաձայնագրում:  
4) Այն դեպքում, եթե Էներգետիկ նյութերի եւ արտադրանքի տարանցում չի կարող ձեռք բերվել ամբողջական պայմաններով Էներգիայի փոխադրման շինությունների օգնությամբ, ապա Պայմանավորվող կողմերը չպետք է խոչընդոտեն նոր հզորությունների ստեղծմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ այլ բան կարող է նախատեսված լինել գործող օրենսդրության մեջ, որը համատեղելի է 1-ին կետի հետ:  
5) Պայմանավորվող կողմը, որի տարածքով կարող է իրականացվել Էներգետիկ նյութերի եւ արտադրանքի տարանցում, պարտավոր չէ.
  - ա) թույլ տալ Էներգիայի փոխադրման շինությունների կառուցում կամ վերափոխում, կամ
  - բ) թույլ տալ նոր կամ լրացուցիչ տարանցում Էներգիայի փոխադրման համար

գոյություն ունեցող շինությունների միջոցով, որոնք, ինչպես այդ կողմը ներկայացնում է շահագրգիռ Պայմանավորվող կողմերին, կարող էին վտանգի տակ դնել

Նրա էներգետիկ համակարգերի հուսալիությունը կամ արդյունավետությունը, ներառյալ

մատակարարման հուսալիությունը:

6) 6-րդ եւ 7-րդ կետերի պահպանման պայմանով՝ Պայմանավորվող կողմերն ապահովում են էներգետիկ նյութերի եւ արտադրանքի հաստատվող հոսքերը մյուս

Պայմանավորվող կողմերի տարածքներ կամ դրանց միջեւ եղած տարածքներ:

Պայմանավորվող կողմը, որի տարածքով անցնում է էներգետիկ նյութերի եւ արտադրանքի տարանցումը, այդպիսի տարանցման հետ կապված ցանկացած հարցի շուրջ

ծագած վեճի դեպքում չպետք է ընդհատի կամ կրճատի, հավասարապես եւ իր վերահսկողության տակ գտնվող ցանկացած կազմակերպության թույլ տա ընդհատելու կամ

կրճատել կամ էլ իր իրավագործության ներքո որեւէ կազմակերպությունից պահանջի, որ

նա էներգետիկ նյութերի եւ արտադրանքի գոյություն ունեցող հոսքը ընդհատի կամ

կրճատի մինչեւ 7-րդ կետում շարադրված վեճի լուծման ընթացակարգի ավարտը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա որոշակիորեն նախատեսված է կոնտրակտում կամ

այդպիսի տարանցումը կարգավորող մեկ այլ համաձայնագրում կամ լուծված է հաշտարար

դատավորի վճռին համապատասխան:

7) 6-րդ կետում հիշատակված վեճի կապակցությամբ կիրառվում են ներքոհիշյալ

դրույթները, բայց միայն վեճի լուծման բոլոր այն համապատասխան պայմանագրային

կամ այլ միջոցները սպառելուց հետո, որոնք համաձայնեցված են եղել վեճի կողմեր

հանդիսացող Պայմանավորվող կողմերի միջեւ կամ 6-րդ կետում հիշատակված ցանկացած

կազմակերպության եւ մյուս Պայմանավորվող կողմի վեճի կողմ հանդիսացող կազմակերպության միջեւ՝

ա) վեճի կողմ հանդիսացող Պայմանավորվող կողմը այն կարող է Գլխավոր քարտուղարին հանձնել վեճի հանգամանքների համառոտ շարադրանքը բովանդակող

ծանուցման միջոցով: Գլխավոր քարտուղարը բոլոր Պայմանավորվող կողմերին ծանուցում է ցանկացած այդպիսի հանձնման մասին,

բ) այդպիսի ծանուցումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում Գլխավոր քարտուղարը վեճի կողմերի եւ շահագրգիռ մյուս Պայմանավորվող կողմերի հետ խորհրդակցություններ անցկացնելու միջոցով նշանակում է հաշտարար դատավոր:

Այդպիսի միջնորդը պետք է ունենա վեճի առարկա հանդիսացող հարցերում կողմնորոշվելու փորձառություն եւ չպետք է լինի վեճի կողմի կամ շահագրգիռ մյուս

Պայմանավորվող կողմերից մեկնումեկի հպատակը կամ քաղաքացին կամ մշտապես բնակվի

այնտեղ,

գ) հաշտարար դատավորը վեճի լուծման համար կամ այդպիսի լուծման հասնելու

ընթացակարգի վերաբերյալ որոշում է վեճի կողմերի համաձայնությունը: Եթե իր նշանակվելուց հետո 90 օրվա ընթացքում նրան չի հաջողվում հասնել այդպիսի համաձայնության, նա վեճի լուծման կամ այդպիսի լուծման հասնելու նպատակով ընթացակարգի վերաբերյալ մտցնում է առաջարկություն եւ ընդունում որոշում այն

միջանկյալ սակագների եւ մյուս ժամկետների ու պայմանների կապակցությամբ, որոնք

տարանցման վերաբերյալ մինչեւ վեճի լուծումը պետք է պահպանվեն՝ սկսած այն թվականից, երբ նա նշանակում է,

դ) Պայմանավորվող կողմերը պարտավորվում են պահպանել եւ ապահովել, որ իրենց

վերահսկողության կամ իրավասության տակ գտնվող կազմակերպությունները հաշտարար

դատավորի վճռից հետո 12 ամսվա ընթացքում կամ մինչեւ վեճի լուծումը, կախված այն

բանից, թե որը ավելի վաղ կլինի, պահպանեն սակագների, ժամկետների եւ պայմանների

վերաբերյալ "գ" ենթակետի համաձայն ընդունված ցանկացած միջանկյալ որոշում,

ե) չնայած "բ" ենթակետին՝ Գլխավոր քարտուղարը կարող է որոշել հաշտարար դատավոր չնշանակել, եթե, իր կարծիքով, վեճը վերաբերում է այն տարանցմանը, որը

հանդիսանում է կամ արդեն հանդիսացել է "ա"-ից "դ" ենթակետերում շարադրված վեճերի լուծման ընթացակարգերի առարկա, եւ որ այդ քննությունը չի հանգեցրել վեճի լուծման,

զ) Խարտիայի համաժողովը ընդունում է տիպային դրույթներ հաշտեցման ընթացակարգի եւ հաշտարար դատավորների ծախսերի հատուցման վերաբերյալ:

8) Սույն հոդվածի մեջ ոչինչ չի կարող նվազեցնել միջազգային իրավունքով Պայմանավորվող կողմի իրավունքներն ու պարտավորությունները, ներառյալ սովորական

միջազգային իրավունքը, գոյություն ունեցող երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրերը, ներառյալ ստորջրյա մալուխներին եւ խողովակաշարերին վերաբերող

նորմերը:

9) Սույն հոդվածը չպետք է այնպես մեկնաբանվի, թե այն պարտավորեցնում է տարանցման համար օգտագործվող Էներգիայի փոխադրման պայմանների որոշակի

կատեգորիա չունեցող ցանկացած Պայմանավորվող կողմի սույն հոդվածին համապատասխան

ձեռնարկելու ցանկացած միջոց Էներգիայի փոխադրման պայմանների այդ կատեգորիայի

առնչությամբ: Այդպիսի Պայմանավորվող կողմը, սակայն, պարտավոր է կատարել 4-րդ

կետի պահանջները:

10) Սույն հոդվածի նպատակների համար՝

ա) "Տարանցում" նշանակում է.

1) Պայմանավորվող կողմի տարածքով կամ նրա տարածքով նավահանգստային

շինություններ կամ նավահանգստային շինություններից՝ այլ պետության տարածքում  
ծագած եւ երրորդ պետության համար նախատեսված Էներգետիկ նյութերի եւ արտադրանքի փոխադրում՝ բեռնման կամ բեռնաթափման նպատակով՝ պայմանով, որ կա՛մ այդ այլ պետությունը, կա՛մ երրորդ պետությունը հանդիսանում է Պայմանավորվող կողմ, կամ

2) այլ Պայմանավորվող կողմի տարածքում ծագած եւ այդ Պայմանավորվող կողմի տարածքի համար նախատեսված Էներգետիկ նյութերի եւ արտադրանքի փոխադրում Պայմանավորվող կողմի տարածքով, եթե միայն այդ երկու շահագրգիռ Պայմանավորվող կողմերը այլ կերպ չորոշեն եւ իրենց չգրանցեն N Հավելվածում համատեղ արված գրառման միջոցով: Այդ երկու Պայմանավորվող կողմերը կարող են իրենց բացառել N Հավելվածում ընդգրկվող ցուցակից իրենց մտադրության մասին Զարտուղարությանը ներկայացրած գրավոր համատեղ ծանուցման միջոցով, որը այդ ծանուցումը պետք է հաղորդի բոլոր մյուս Պայմանավորվող կողմերին: Ցուցակից դուրս գալը ուժի մեջ է

մտնում այդպիսի առաջին ծանուցումից հետո չորս շաբաթ անց:  
բ) "Էներգիայի փոխանցման շինությունները" կազմված են բարձր ճնշման մայրուղային գազատար խողովակներից, էլեկտրահաղորդման բարձրավոլտ համակարգից եւ գծերից, մայրուղային նավթատար խողովակներից, քարածխային խյուսատարներից, նավթամթերքատար խողովակներից եւ տեղադրված այլ այնպիսի սարքավորումից, որը հատուկ նախատեսված է Էներգետիկ նյութերի եւ արտադրանքի բնագավառում աշխատելու համար:

#### ՀՈԴՎԱԾ 8 Տեխնոլոգիաների փոխանցումը

1) Պայմանավորվող կողմերը համաձայնում են նպաստել Էներգետիկ տեխնոլոգիայից օգտվելու մատչելիությանը եւ առեւտրային ու անխտրականության հիման վրա տեխնոլոգիայի փոխանցմանը Էներգետիկ նյութերի եւ արտադրանքի արդյունավետ առեւտրին աջակցություն ցույց տալու նպատակով, ինչպես նաեւ Խարտիայի նպատակների իրականացման առումով՝ իրենց օրենքների եւ նորմատիվ ակտերի, ինչպես նաեւ մտավոր

սեփականության իրավունքների պաշտպանության հաշվառմամբ:  
2) Համապատասխանաբար, այն չափով, որքան դա անհրաժեշտ է 1-ին կետի իրագործման համար, Պայմանավորվող կողմերը վերացնում են Էներգետիկ նյութերի եւ

արտադրանքի ու դրանց հետ կապված սարքավորման եւ ծառայությունների բնագավառում տեխնոլոգիայի փոխանցման գոյություն ունեցող խոչընդոտները եւ չեն ստեղծում նոր խոչընդոտներ՝ միջուկային կյանքի (զենքի) չտարածման եւ միջազգային մյուս պարտավորությունների պահպանման պայմանով:

### ՀՈԴՎԱԾ 9 Կապիտալից օգտվելու մատչելիությունը

1) Պայմանավորվող կողմերն ընդունում են կապիտալի բաց շուկաների կարելիությունը կապիտալի հոսքի խրախուսման համար էներգետիկ կյանքի եւ արտադրանքի առևտրի ֆինանսավորման, ինչպես նաեւ մյուս Պայմանավորվող կողմերի

տարածքում, հատկապես անցումային շրջանի տնտեսություն ունեցող կողմերի տարածքում էներգետիկ հատվածում տնտեսական գործունեության մեջ կապիտալ

ներդրումների իրականացման, դրանց աջակցություն ցույց տալու նպատակով:

Համապատասխանաբար յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ ձգտում է մյուս Պայմանավորվող կողմերի ընկերությունների եւ քաղաքացիների համար ստեղծել կապիտալի իր շուկան մուտք գործելու պայմաններ էներգետիկ կյանքի եւ արտադրանքի առևտրի ֆինանսավորման նպատակով եւ այդ մյուս

Պայմանավորվող կողմերի տարածքում էներգետիկ հատվածում տնտեսական գործունեության մեջ կապիտալ

ներդրումների նպատակով՝ այնպիսի հիմքի վրա, որը նվազ նպաստավոր չէ, քան այն

հիմքն է, որն այդ կողմը նման հանգամանքներում տրամադրում է իր սեփական ընկերություններին եւ քաղաքացիներին կամ ցանկացած այլ Պայմանավորվող կողմի կամ

ցանկացած երրորդ պետության ընկերությունների եւ քաղաքացիների՝ կախված այն

բանից, թե որն է առավել նպաստավոր:

2) Պայմանավորվող կողմը կարող է ընդունել եւ պահպանել պետական փոխառությունների, նպաստների, երաշխիքների կամ ապահովագրության մուտք՝ գործելու նախատեսող ծրագրերը արտասահմանում առևտրի կամ կապիտալ ներդրումների

խրախուսման նպատակով: Պայմանավորվող կողմը, նաեւ այդպիսի ծրագրերի նպատակներին, սահմանափակումներին եւ չափանիշներին համապատասխան, տրամադրում է

այդպիսի հնարավորություններ, ներառյալ այդ հնարավորություններից ցանկացած

հնարավորության կամ ապրանքների փոխադրման տեղի կամ այդ հնարավորություններից

ցանկացած հնարավորության օգնությամբ մատուցվող ծառայությունների օգտագործման

վերաբերյալ դիմողի ցանկացած նպատակը, սահմանափակումները կամ չափանիշները,

մյուս Պայմանավորվող կողմերի էներգետիկ հատվածում տնտեսական գործունեության

մեջ կապիտալ ներդրումների համար կամ մյուս Պայմանավորվող կողմերի հետ

Էներգետիկ կյութերի ու արտադրանքի առևտրի ֆինանսավորման համար:

3) Պայմանավորվող կողմերը Էներգետիկ հատվածում տնտեսական գործունեության

մեջ այնպիսի ծրագրեր իրագործելիս, որոնք ուղղված են Պայմանավորվող կողմերի

տարածքներում տնտեսական կայունության բարձրացմանը եւ ներդրումային իրադրության

բարելավմանը, այնտեղ, որտեղ դա տեղին է, ձգտում են խրախուսել գործողությունները եւ օգտագործել համապատասխան միջազգային ֆինանսական

հաստատությունների փորձը:

4) Ոչինչ սույն հոդվածում չի կարող խոչընդոտել՝

ա) ֆինանսական հաստատություններին՝ կիրառելու վարկավորման կամ երաշխավորման շուկայական սկզբունքների եւ զգուշության նկատառումների վրա

հիմնված սեփական պրակտիկան, կամ

բ) Պայմանավորվող կողմին՝ ձեռնարկելու միջոցներ՝

1) զգուշության նկատառումներով, ներառյալ ներդրողների, սպառողների, ավանդատուների, ապահովագրատերերի կամ այն անձանց պաշտպանությունը, որոնց համար

ֆինանսական ծառայություններ մատուցողների կողմից գանձվում է հարկ, կամ

2) իր ֆինանսական համակարգի եւ կապիտալի շուկաների ամբողջականության եւ

կայունության ապահովման ուղղությամբ:

### Մաս 3

Կապիտալ ներդրումների խրախուսումը եւ պաշտպանությունը

#### ՀՈԴՎԱԾ 10

Կապիտալ ներդրումների խրախուսումը, պաշտպանությունը եւ ռեժիմը

1) Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, սույն Պայմանագրի դրույթներին համապատասխան, իր տարածքում կապիտալ ներդրումների իրականացման նպատակով

խրախուսում եւ կայուն, իրավահավասար, բարենպաստ եւ բաց պայմաններ է ստեղծում

մյուս Պայմանավորվող կողմերի ներդրողների համար: Այդպիսի պայմանները ներառում

են մյուս Պայմանավորվող կողմերի ներդրողների կապիտալ ներդրումների վերաբերյալ

ցանկացած ժամանակ արդարացի եւ հավասար ռեժիմ տրամադրելու պարտավորություն:

Այդպիսի կապիտալ ներդրումների համար նաեւ ապահովվում են մշտական առավելագույն

պաշտպանություն եւ անվտանգություն, եւ Պայմանավորվող կողմը երբեք որեւէ կերպ

չպետք է անհիմն կամ խտրական միջոցների ձեռով խոչընդոտի այդ կապիտալ ներդրումների կառավարմանը, սատարմանը, օգտագործմանը, տիրանալուն կամ

տնօրինմանը: Ոչ մի դեպքում այդպիսի կապիտալ ներդրումների համար չպետք է տրամադրվի առավել նվազ նպաստավոր ռեժիմ, քան դա պահանջվում է

միջազգային

իրավունքով, ներառյալ Պայմանագրի պարտավորությունները: Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պահպանում է ցանկացած պարտավորություն, որը նա ընդունել է

ցանկացած Պայմանավորվող կողմի ներդրողի կամ ներդրողի կապիտալ ներդրումների առնչությամբ:

2) Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ ձգտում է մյուս Պայմանավորվող կողմերի ներդրողներին տրամադրել, ինչ վերաբերում է իր տարածքում կապիտալ ներդրումների իրականացմանը, 3-րդ կետում շարադրված ռեժիմը:

3) Սույն հոդվածի նպատակների համար՝ "ռեժիմ" նշանակում է՝

Պայմանավորվող

կողմին տրամադրվող ռեժիմ՝ ոչ պակաս նպաստավոր, համեմատած այն ռեժիմի հետ, որը

նա տրամադրում է իր սեփական ներդրողներին կամ ցանկացած այլ

Պայմանավորվող

կողմի կամ ցանկացած երրորդ պետության ներդրողների՝ կախված այն բանից, թե ինչն է

է առավել նպաստավոր:

4) Լրացուցիչ պայմանագիրը, այնտեղ ձեւակերպված պայմաններին համապատասխան,

դրան մասնակցող յուրաքանչյուր կողմի կպարտադրի իր տարածքում կապիտալ ներդրումների իրականացման վերաբերյալ մյուս կողմերի ներդրողներին տրամադրել

3-րդ կետում շարադրված ռեժիմը: Այդ պայմանագիրը բաց կլինի այն պետությունների

եւ տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպությունների ստորագրման

համար, որոնք ստորագրել են սույն Պայմանագիրը կամ միացել են նրան:

Լրացուցիչ

պայմանագրի առթիվ բանակցությունները կսկսվեն 1995 թ. հունվարի 1-ից ոչ ուշ՝ 1998 թ. հունվարի 1-ին Պայմանագիրն ստորագրելու նպատակով:

5) Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իր տարածքում կապիտալ ներդրումների

իրականացման վերաբերյալ ձգտում է.

ա) նվազագույնի հասցնել բացառումները 3-րդ կետում շարադրված ռեժիմից,

բ) հետեւողականորեն վերացնել գոյություն ունեցող այն

սահմանափակումները,

որոնք ներազդում են մյուս Պայմանավորվող կողմերի ներդրողների վրա:

6)

ա) Պայմանավորվող կողմը իր տարածքում կապիտալ ներդրումների իրականացման

վերաբերյալ ցանկացած ժամանակ կարող է էարտիայի համաժողովին Զարտուղարության

օգնությամբ կամավոր հայտարարել 3-րդ կետում շարադրված ռեժիմից նոր բացառումներ

չկատարելու իր մտադրության մասին,

բ) ավելին. Պայմանավորվող կողմը կարող է ցանկացած ժամանակ ստանձնել պարտավորություն իր տարածքում էներգետիկ հատվածում տնտեսական գործունեության

որոշ կամ բոլոր տեսակներում կապիտալ ներդրումների վերաբերյալ մյուս

Պայմանավորվող կողմերի ներդրողներին տրամադրելու 3-րդ կետում շարադրված



ռեժիմը: Այդպիսի պարտավորությունների մասին ծանուցվում է Քարտուղարությունը, եւ դրանք թվարկվում են VC Հավելվածում ու հանդիսանում են պարտադիր՝ սույն Պայմանագրին համապատասխան:

7) Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իր տարածքում մյուս Պայմանավորվող

կողմերի ներդրողների կապիտալ ներդրումների, ինչպես նաեւ դրանց հետ կապված

նրանց գործունեության վերաբերյալ, ներառյալ կառավարումը, սատարումը, օգտագործումը, տիրացումը կամ տնօրինումը, տրամադրում է ոչ նվազ նպաստավոր

ռեժիմ, քան այն, որը նա տրամադրում է իր սեփական ներդրողների կամ ցանկացած այլ

Պայմանավորվող կողմի կամ ցանկացած երրորդ պետության ներդրողների կապիտալ

ներդրումների, ինչպես նաեւ դրանց հետ կապված նրանց գործունեության վերաբերյալ՝

ներառյալ կառավարումը, սատարումը, օգտագործումը, տիրացումը կամ տնօրինումը՝

կախված այն բանից, թե ինչն է առավել նպաստավոր:

8) 7-րդ կետի կիրառման եղանակները այն ծրագրերի վերաբերյալ, ըստ որոնց Պայմանավորվող կողմը վարկեր կամ ֆինանսական օգնության այլ տեսակներ է տրամադրում կամ համաձայնագրեր կնքում էներգետիկ տեխնոլոգիայի բնագավառում

հետազոտություններ եւ մշակումներ կատարելու ուղղությամբ, վերապահվում են 4-րդ

կետում հիշատակված լրացուցիչ պայմանագրի համար: Յուրաքանչյուր Պայմանավորվող

կողմ Քարտուղարության օգնությամբ հարտիայի համաժողովին տեղեկացնում է այն

եղանակների մասին, որոնք նա կիրառում է սույն կետում հիշատակված ծրագրերի

կապակցությամբ:

9) Յուրաքանչյուր պետության կամ տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային

կազմակերպություն, որը կստորագրի սույն Պայմանագիրը կամ կմիանա դրան, Պայմանագրի ստորագրման կամ միանալու մասին իրենց ակտը ի պահ տալու թվականին

Քարտուղարություն է ներկայացնում հաղորդում բոլոր այն օրենքների, նորմատիվ ակտերի կամ այլ միջոցների համառոտ շարադրանքով հանդերձ, որոնք

վերաբերում են՝

ա) 2-րդ կետից կատարվող բացառություններին, կամ

բ) 8-րդ կետում հիշատակված ծրագրերին:

Պայմանավորվող կողմը նորացնում է իր հաղորդումները փոփոխությունների մասին՝ առանց ուշացնելու ծանուցելով Քարտուղարությանը: Խարտիայի

համաժողովը

պարբերաբար քննության է առնում այդ հաղորդումները:

"բ" ենթակետի վերաբերյալ Խարտիայի համաժողովի տեսություններում կարող է

քննության առնվել մրցակցության եւ կապիտալ ներդրումների վրա այդպիսի ծրագրերի

ազդեցությունը:

10) Չնայած սույն հոդվածի ցանկացած այլ դրույթի՝ 3-րդ եւ 7-րդ կետերում շարադրված ռեժիմը չպետք է կիրառվի մտավոր սեփականության պաշտպանության նկատմամբ. դրա փոխարեն տրամադրվում է այն ռեժիմը, ինչպես դա սահմանված է

մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության ուղղությամբ կիրառվող միջազգային այն համաձայնագրերի համապատասխան դրույթներում, որոնց կողմեր են

հանդիսանում համապատասխան Պայմանավորվող կողմերը:

11) 26-րդ հոդվածի նպատակների համար Պայմանավորվող կողմից առեւտրի հետ կապված ներդրումային միջոցի կիրառումը, ինչպես այդ միջոցը շարադրված է 5-րդ

հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերում, մյուս Պայմանավորվող կողմի ներդրողի այն կապիտալ ներդրման նկատմամբ, որը գոյություն ունի այդպիսի կիրառման պահին,

5-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետերին համապատասխան, ըստ սույն մասի՝ դիտվում է

որպես առաջին Պայմանավորվող կողմի պարտավորության խախտում:

12) Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ երաշխավորում է, որ իր ներպետական

օրենսդրությունը նախատեսում է արդյունավետ միջոցներ հայցերի պաշտպանության եւ

կապիտալ ներդրումներին, ներդրումային համաձայնագրերին, ինչպես նաեւ ներդրումային թույլտվություններին վերաբերող իրավունքների ստիպողական իրականացումը:

#### ՀՈԴՎԱԾ 11 Անձնակազմը

1) Պայմանավորվող կողմը, ֆիզիկական անձանց իր երկիր մուտք գործելուն, գտնվելուն եւ աշխատանքին վերաբերող իր օրենքների, օրենսդրական ակտերի պահպանմամբ հանդերձ, բարեխղճորեն քննության է առնում մյուս

Պայմանավորվող

կողմի ներդրողների եւ այդպիսի ներդրողների կամ այդպիսի ներդրողների կապիտալ

ներդրումների կողմից վարձված վճռորոշ անձնակազմի պահանջմունքները իր տարածք

նրանց մուտք գործելու վերաբերյալ՝ համապատասխան կապիտալ ներդրումների իրականացման կամ զարգացման, կառավարման, սատարման, օգտագործման, տիրապետման

կամ տնօրինման հետ կապված գործունեություն վարելու նպատակով, ներառյալ խորհրդակցությունները եւ վճռորոշ տեխնիկական ծառայությունները:

2) Պայմանավորվող կողմը մյուս Պայմանավորվող կողմի՝ իր տարածքում կապիտալ

ներդրումներ ունեցող ներդրողներին, ինչպես նաեւ այդ ներդրողների կապիտալ ներդրումներին թույլատրում է վարձել հիմնական անձնակազմի ցանկացած անձ, այդ

ներդրողների կամ կապիտալ ներդրումների ընտրությամբ, անկախ նրանց

հպատակությունից կամ քաղաքացիությունից, պայմանով, որ հիմնական անձնակազմի այդպիսի անձը ստացել է առաջին Պայմանավորվող կողմի տարածք մուտք գործելու, այնտեղ գտնվելու եւ աշխատելու թույլտվություն, եւ որ վարձման տվյալ դեպքը համապատասխանում է վճռորոշ անձնակազմի այդպիսի անձին տրված թույլտվության ժամկետներին, պայմաններին եւ ժամանակավոր սահմանափակումներին:

## ՀՈՂՎԱԾ 12 Վնասների հատուցումը

1) Բացի այն դեպքերից, երբ կիրառվում է 13-րդ հոդվածը, ցանկացած Պայմանավորվող կողմի այն ներդրողին, որը մյուս Պայմանավորվող կողմի տարածքում ցանկացած կապիտալ ներդրման կապակցությամբ վնաս է կրում պատերազմի կամ այլ զինված հակամարտության, արտակարգ դրություն մտցնելու, քաղաքացիական անկարգությունների կամ նման այլ իրադարձությունների հետեւանքով, այդ վերջին Պայմանավորվող կողմը նրան տրամադրում է գույքի վերականգնման, հատուցման, փոխհատուցման կամ կարգավորման այլ տեսակների նկատմամբ այն ռեժիմներից առավել նպաստավորը, որն այդ Պայմանավորվող կողմը տրամադրում է ցանկացած այլ ներդրողի՝ լինի նա իր սեփական ներդրողը, ցանկացած այլ Պայմանավորվող կողմի ներդրող կամ ցանկացած երրորդ պետության ներդրող:

2) Առանց վնաս հասցնելու 1-ին կետին, Պայմանավորվող կողմի այն ներդրողին, որը նշված կետում հիշատակված իրադրություններից ցանկացած իրադրության մեջ վնաս է կրել մյուս Պայմանավորվող կողմի տարածքում՝

- ա) վերջինիս զինված ուժերի կամ իշխանությունների կողմից նրա կապիտալ ներդրման կամ դրա մի մասի բռնագրավման հետեւանքով, կամ
- բ) վերջինիս զինված ուժերի կամ իշխանությունների կողմից նրա կապիտալ ներդրման կամ դրա մի մասի ոչնչացման հետեւանքով, որը տվյալ իրադրության մեջ չի հարուցվել անհրաժեշտությունից ելնելով. տրամադրվում է ունեցվածքի նկատմամբ նրա իրավունքների վերականգնում կամ հատուցում, որը բոլոր դեպքերում պետք է կատարվի արագ, նույնական եւ արդյունավետ:

## ՀՈՂՎԱԾ 13 Սեփականագրկումը

1) Ցանկացած այլ Պայմանավորվող կողմի տարածքում Պայմանավորվող կողմի ներդրողների կապիտալ ներդրումները չպետք է ազգայնացվեն, սեփականագրվեն կամ

Ենթարկվեն ազգայնացման կամ սեփականազրկմանը համանման հետեւանքներ ունեցող

միջոցի կամ միջոցների (այսուհետ՝ սեփականազրկում), բացի այն դեպքերից, երբ այդպիսի սեփականազրկումը իրականացվում է՝

ա) հասարակական շահերին համապատասխանող նպատակով,

բ) առանց խտրականության,

գ) պահպանելով հարկ եղած օրինական կարգը, եւ

դ) արագ, նույնական եւ արդյունավետ վճարմամբ հանդերձ:

Այդպիսի փոխհատուցումն իր չափերով համապատասխանում է սեփականազրկման

Ենթարկված կապիտալ ներդրման շուկայական արդարացի արժեքին այն պահին, որը

անմիջականորեն նախորդել է այն բանին, երբ սեփականազրկման կամ առաջիկա սեփականազրկման մասին հայտնի է դարձել այնպես, որ ներազդել է կապիտալ ներդրման

արժեքի վրա (այսուհետ՝ գնահատման թվական):

Այդպիսի արդարացի շուկայական արժեքը ներդրողի խնդրանքով արտահայտվում է

ազատորեն փոխարկելի տարադրամով՝ շուկայական փոխարկման այն կուրսի հիման վրա,

որն այդ տարադրամի համար գոյություն է ունեցել գնահատման թվականին:

Փոխհատուցումը ներառում է նաեւ շուկայական գների հիման վրա սահմանվող առեւտրային դրույթի տոկոսների վճարը՝ սկսած սեփականազրկման թվականից մինչեւ

վճարման օրը՝ ներառյալ:

2) Ներդրողը, ում շահերն են շոշափված, ունի, սեփականազրկումը իրականացնող

Պայմանավորվող կողմի օրենսդրության համապատասխան, այդ

Պայմանավորվող կողմի

դատական կամ այլ իրավասու եւ անկախ մարմնում իր գործի, 1-ին կետում շարադրված

սկզբունքներին համապատասխան, կապիտալ ներդրման գնահատման եւ փոխհատուցման

վճարման անհապաղ քննության իրավունք:

3) Տարակարծությունից խուսափելու համար սեփականազրկումն ընդգրկում է այնպիսի իրադրություններ, երբ Պայմանավորվող կողմը սեփականազրկում է իր տարածքում ընկերության կամ ձեռնարկության ակտիվները, որոնց մեջ այլ ցանկացած

Պայմանավորվող կողմի ներդրողն ունի կապիտալ ներդրումներ, ներառյալ բաժնետոմսերին տիրանալը:

#### ՅՈՂՎԱԾ 14

Կապիտալ ներդրումների հետ կապված վճարումների փոխանցումը

1) Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իր տարածքում ցանկացած այլ Պայմանավորվող կողմի ներդրողների կապիտալ ներդրումների վերաբերյալ երաշխավորվում է իր տարածք կատարվող եւ իր տարածքից դուրս եկող փոխանցումների

ազատությունը՝ ներառյալ.

ա) նախնական կապիտալի ավելացրած ցանկացած լրացուցիչ կապիտալի փոխանցումը՝

Կապիտալ ներդրման, սատարման եւ զարգացման նպատակով,  
բ) Եկամուտների փոխանցումը,  
գ) Պայմանագրին համապատասխան վճարումների փոխանցումը՝ ներառյալ հիմնական պարտքի մարումը եւ վրան եկած տոկոսների վճարման փոխանցումը,  
դ) այդ կապիտալ ներդրման հետ կապված արտասահմանյան վարձված անձնակազմի չծախսված վաստակի եւ այլ վարձատրության փոխանցումը,  
ե) ամբողջ կապիտալ ներդրման կամ դրա ցանկացած մասի վաճառքից կամ վերացումից ստացված հասույթի փոխանցումը,  
զ) վեճերի լուծման հետեւանքով առաջացած վճարումների փոխանցումը,  
է) 12-րդ եւ 13-րդ հոդվածներին համապատասխան՝ փոխհատուցման կարգով վճարումների փոխանցումը:  
2) Վճարումների՝ 1-ին կետում նախատեսված փոխանցումները կատարվում են առանց ուշացման (բացառությամբ բնավարձով եկամտի դեպքերի)՝ ազատորեն փոխարկելի տարադրամով:  
3) Փոխանցումները կատարվում են ըստ փոխանցման թվականին գոյություն ունեցող շուկայական փոխարկման կուրսի՝ "սպոտ" գործառնության համար փոխանցման ենթակա տարադրամով: Արտասահմանյան տարադրամի շուկայի բացակայության դեպքում օգտագործվում է դրսից ներգրավվող կապիտալ ներդրումների նկատմամբ կիրառվող ամենավերջին կուրսը կամ փոխադարձության հատուկ իրավունքներ տարադրամի փոխանցման համար ամենավերջին կուրսը՝ կախված այն բանից, թե ինչն է առավել նպաստավոր ներդրողի համար:  
4) Չնայած 1-ից 3-րդ կետերին՝ Պայմանավորվող կողմը կարող է պաշտպանել վարկատուների իրավունքները կամ ապահովել էմիսիայի, առևտրի եւ արժեթղթերի գործողությունների վերաբերյալ օրենքների պահպանումը եւ իր օրենքների ու օրենսդրական ակտերի արդարացի, անխտրական եւ բարեխիղճ կիրառման միջոցով քաղաքացիական, վարչական եւ քրեական գործերով դատական կամ արբիտրաժային քննություններում կայացված որոշումների կատարումը:  
5) Չնայած 2-րդ կետին՝ Պայմանավորվող կողմերը իրենցից նախկին Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մաս ներկայացնող՝ Պայմանավորվող կողմեր հանդիսացող պետությունները միմյանց միջեւ կնքվող համաձայնագրերում կարող են նախատեսել վճարումների փոխանցում այդպիսի Պայմանավորվող կողմերի տարադրամով՝ պայմանով, որ նշված համաձայնագրերը դրանց տարածքում մյուս Պայմանավորվող կողմերի ներդրողների կապիտալ ներդրումների վերաբերյալ չեն

նախատեսում առավել նվազ ռեժիմի տրամադրում, քան այդպիսի համաձայնագրերի մեջ մտնող Պայմանավորվող կողմերի ներդրողների կապիտալ ներդրումների համար կամ երրորդ պետության ներդրողների կապիտալ ներդրումների համար տրամադրվող ռեժիմն է:

6) Չնայած 1-ին կետի "բ" ենթակետին՝ Պայմանավորվող կողմը կարող է եկամուտների փոխանցումը սահմանափակել բնավարձով այնպիսի հանգամանքներում, երբ Պայմանավորվող կողմին թույլատրվում է, 29-րդ հոդվածի 2-րդ կետի "ա" ենթակետին կամ ԳԱՏՏ-ին եւ դրա հետ կապված Փաստաթղթերին համապատասխան, սահմանափակել կա՛մ եկամուտները բնավարձով ներկայացվող մթերքների արտահանումը, կա՛մ արտահանման համար վաճառքը. այդ ամենը՝ պայմանով, որ Պայմանավորվող կողմը թույլատրում է բնավարձով եկամուտների փոխանցումը, ինչպես դա թույլատրված կամ նշված է Պայմանավորվող կողմի եւ կամ մյուս Պայմանավորվող կողմի ներդրողի կամ նրա կապիտալ ներդրման միջեւ ներդրումային համաձայնագրում, ինվեստիցիոն թույլտվության մեջ կամ գրավոր այլ համաձայնագրում:

#### ՀՈԴՎԱԾ 15 Սուբրոգացիա

1) Պայմանավորվող կողմը կամ նրա կողմից նշանակված մարմինը (այսուհետ՝ վնասները հատուցող կողմ՝) իրականացնում է վնասների հատուցման կամ ներդրողի կապիտալ ներդրման վերաբերյալ հատկացվող երաշխիքի վճարը (այսուհետ՝ հատուցում ստացող կողմ) մյուս Պայմանավորվող կողմի տարածքում (այսուհետ՝ ընդունող կողմ):

Ընդունող կողմը ճանաչում է.

ա) այդպիսի կապիտալ ներդրման վերաբերյալ բոլոր իրավունքների եւ պահանջների

փոխանցումը վնասները հատուցող կողմին, եւ

բ) սուբրոգացիայի ուժով բոլոր այդպիսի իրավունքների իրականացման եւ այդպիսի պահանջների գանձման վնասները հատուցող կողմի իրավունքը:

2) Վնասները հատուցող կողմը բոլոր հանգամանքներում ունի՝

ա) իրավունքների՝ 1-ին կետում փոխանցման ուժով ձեռք բերված իրավունքների

եւ պահանջների վերաբերյալ նույնպիսի ռեժիմի, եւ

բ) այդ իրավունքներին եւ պահանջներին համապատասխան տրամադրվող նույնպիսի

վճարումների իրավունք, որոնց ստացման համար համապատասխան կապիտալ ներդրման

վերաբերյալ հատուցում ստացող կողմը իրավունք է ունեցել այդ Պայմանագրի ուժով:

3) 26-րդ հոդվածին համապատասխան ցանկացած ընթացակարգի ժամանակ Պայմանավորվող կողմը չպետք է որպես պաշտպանության միջոց պնդի՝ հասնելու

փոխհայցի, հետաձգման իրավունքի կամ առաջ քաշի ցանկացած այլ պատճառ,  
որ վնասի  
հատուցումը կամ ենթադրվող ամբողջ վնասի կամ դրա մի մասի մյուս  
փոխհատուցումը  
ստացվեր կամ ստացվի ապահովագրական կամ երաշխիքային պայմանագրին  
համապատասխան:

#### ՀՈԴՎԱԾ 16

Կապը մյուս միջազգային պայմանագրերի հետ

Այդ դեպքում, երբ երկու կամ ավելի թվով Պայմանավորվող կողմեր ավելի վաղ  
կնքել են միջազգային համաձայնագրեր կամ կնքում են հետագա միջազգային  
համաձայնագիր, որի պայմանները այդ դեպքերից ցանկացածի դեպքում  
վերաբերում են

սույն Պայմանագրի III կամ V մասի առարկային, ապա՝

1) սույն Պայմանագրի 3-րդ կամ 5-րդ մասում ոչինչ չպետք է մեկնաբանվի  
որպես

այլ համաձայնագրի այդպիսի պայմանների ցանկացած դրույթի կամ դրա  
կապակցությամբ

վեճերի լուծման վերաբերյալ ցանկացած իրավունքի նվազեցում՝ այդ  
համաձայնագրին

համապատասխան, եւ

2) այլ համաձայնագրի այդպիսի պայմաններում ոչինչ չպետք է մեկնաբանվի  
որպես

սույն Պայմանագրի 3-րդ կամ 5-րդ մասի ցանկացած դրույթի կամ դրանց  
կապակցությամբ վեճերի լուծման վերաբերյալ ցանկացած իրավունքի նվազեցում՝  
սույն

Պայմանագրին համապատասխան, երբ ցանկացած այդպիսի դրույթ  
հանդիսանում է առավել

նպաստավոր ներդրողի կամ կապիտալ ներդրման համար:

#### ՀՈԴՎԱԾ 17

3-րդ մասի չկիրառումը որոշ հանգամանքներում

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իրեն իրավունք է վերապահում սույն  
մասում նախատեսվող առավելությունները մերժել՝

1) իրավաբանական անձի նկատմամբ, եթե այդպիսի իրավաբանական անձը  
պատկանում

է կամ վերահսկվում է երրորդ պետության քաղաքացիների կամ հպատակների  
կողմից, եւ

եթե այդ իրավաբանական անձը եական գործարար գործունեություն չի վարում  
այն

Պայմանավորվող կողմի տարածքում, որտեղ այն կազմակերպված է, կամ

2) կապիտալ ներդրման նկատմամբ, եթե մերժող Պայմանավորվող կողմը  
պարզի, որ

այդպիսի կապիտալ ներդրումը հանդիսանում է այնպիսի երրորդ պետության  
ներդրողի

կապիտալ ներդրում, որի հետ կամ որի նկատմամբ մերժող Պայմանավորվող  
կողմը՝

ա) չի պահպանում դիվանագիտական հարաբերություններ, կամ

բ) ընդունում կամ պահպանում է միջոցներ, որոնք՝

1. արգելում են գործարքները այդ պետության ներդրողների հետ, կամ  
1.1. կխախտվեին կամ կշրջանցվեին, եթե սույն մասում նախատեսված  
առավելությունները տրամադրվեին այդ պետության ներդրողներին կամ այդ  
ներդրողների կապիտալ ներդրումներին:

Մաս 4  
Տարբեր դրույթներ

ՀՈԴՎԱԾ 18

Ինքնիշխանությունը Էներգետիկ ռեսուրսների նկատմամբ

1) Պայմանավորվող կողմերը ճանաչում են Էներգետիկ ռեսուրսների նկատմամբ  
պետական ինքնիշխանությունը եւ ինքնիշխան իրավունքները: Նրանք վերստին  
հաստատում են, որ ինքնիշխանությունը եւ ինքնիշխան իրավունքները պետք է  
իրականացվեն միջազգային իրավունքի նորմերին համապատասխան:

2) Առանց վնասելու Էներգետիկ ռեսուրսներից օգտվելու մատչելիությունը,  
ինչպես նաեւ դրանց հետախուզման եւ առեւտրային հիման վրա մշակման  
նպատակներին

աջակցելուն, Պայմանագիրը ոչ մի ձեւով չի շոշափում Էներգետիկ ռեսուրսների  
նկատմամբ սեփականության տիրանալը կարգավորող Պայմանավորվող կողմերի  
նորմերը:

3) Յուրաքանչյուր պետություն շարունակում է պահպանել, մասնավորապես,  
այն

իրավունքը, թե իր տարածքի սահմաններում որ աշխարհագրական շրջանները  
պետք է

առանձնացվեն իր Էներգետիկ ռեսուրսների հետախուզման եւ մշակման համար,  
դրանց

լավագույնս արդյունահանման հարցերի լուծման իրավունքը, ինչպես նաեւ, թե  
ինչպիսի տեմպերով դրանք կարող են սպառվել կամ որեւէ այլ ձեւով

շահագործման

ենթարկվել, սահմանել այդպիսի հետախուզման եւ շահագործման հետեւանքով  
վճարվող

ցանկացած հարկ, ռոյալթին կամ այլ ֆինանսական գանձումներն ու տնօրինել  
դրանք,

կարգավորել իր տարածքի սահմաններում այդպիսի հետախուզման, մշակման եւ  
յուրացման՝ շրջակա միջավայրի պահպանության ասպեկտները, ինչպես նաեւ  
այդպիսի

հետախուզմանը եւ շահագործմանը մասնակցել inter alia-ի, Կառավարության  
ուղղակի

մասնակցության ձեւով կամ պետական ձեռնարկությունների միջոցով:

4) Պայմանավորվող կողմերը պարտավորվում են նպաստել Էներգետիկ  
ռեսուրսներից

օգտվելու մատչելիությանը, inter alia, հրապարակված չափանիշների վրա  
խրախուսված

անխտրական հիմունքով Էներգետիկ ռեսուրսների որոնման եւ հետախուզման  
կամ դրանց

շահագործման կամ արդյունահանման թույլտվությունների, արտոնագրերի,  
կոնցեսիաների եւ պայմանագրերի բաշխման միջոցով:

ՀՈԴՎԱԾ 19

Շրջակա միջավայր ասպեկտները



1) Ձգտելով կայուն զարգացման եւ հաշվի առնելով իր պարտավորությունները շրջակա միջավայրին վերաբերող միջազգային այն համաձայնությունների մասին, որոնց

կողմ է նա հանդիսանում, յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ ձգտում է տնտեսապես

արդյունավետ ձեւով նվազագույնի հասցնել վնասակար էկոլոգիական ազդեցությունը

կամ իր տարածքի սահմաններում կամ այդ սահմաններից դուրս իր տարածքում էներգետիկ ցիկլի շրջանակներում՝ բոլոր գործողություններից՝ պատշաճորեն հաշվի

առնելով անվտանգության հարցերը: Ընդամին, յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ

գործում է շահութաբեր ձեւով: Իր քաղաքականության մեջ եւ գործողություններում

Պայմանավորվող կողմը ձգտում է ձեռնարկել նախազգուշական միջոցներ շրջակա

միջավայրի վատթարացումը կանխելու կամ այն նվազագույնի հասցնելու նպատակով:

Պայմանավորվող կողմերը համաձայնում են այն բանին, որ Պայմանավորվող կողմերի

տարածքում սկզբունքորեն աղտոտման մեղավորը պետք է կրի աղտոտման հետ կապված

ծախսերը, ներառյալ անդրսահմանային աղտոտումը, հասարակական շահերը հարկ եղած

ձեւով հաշվի առնելով եւ առանց խաթարելու էներգետիկ ցիկլում կապիտալ ներդրումների կամ միջազգային առեւտրի պայմանները:

Համապատասխանաբար,

Պայմանավորվող կողմերը՝

ա) իրենց էներգետիկ քաղաքականության մշակման եւ իրականացման ամբողջ գործընթացում հաշվի են առնում էկոլոգիական նկատառումները,

բ) նպաստում են շուկային կողմնորոշված գնագոյացմանը եւ էկոլոգիական ծախսերի եւ օգուտների առավել լրիվ արտացոլմանը ամբողջ էներգետիկ ցիկլի շրջանակներում,

գ) նկատի ունենալով 34-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթները՝ խրախուսում են համագործակցությունը հարտիայի էկոլոգիական նպատակներին հասնելու ասպարեզում եւ

համագործակցությունը էներգետիկ ցիկլի նկատմամբ միջազգային էկոլոգիական նորմերի

բնագավառում՝ վնասակար ներգործության մեջ եւ այդ ներգործության թուլացման

ուղղությամբ կատարվող ծախսերում Պայմանավորվող կողմերի միջեւ տարբերությունների հաշվառմամբ,

դ) հատուկ ուշադրություն են հատկացնում էներգաարդյունավետության բարձրացմանը, էներգիայի վերականգնվող աղբյուրների մշակմանն ու օգտագործմանը,

վառելիքի առավել մաքուր տեսակների կիրառման խրախուսմանը եւ աղտոտումը նվազեցնող տեխնոլոգիաների եւ տեխնոլոգիական միջոցների օգտագործմանը,

ե) նպաստում են էկոլոգիապես հիմնավորված եւ տնտեսապես արդյունավետ էներգետիկ քաղաքականության ու շահութաբեր պրակտիկայի եւ

տեխնոլոգիաների մասին

Պայմանավորվող կողմերի միջեւ տեղեկության հավաքմանը եւ փոխանակմանը,  
գ) խրախուսում են բնակչության կողմից էներգետիկ համակարգերի  
Էկոլոգիական

ազդեցության, դրանք վնասակար Էկոլոգիական ազդեցության կամ թուլացման  
հնարավորությունների եւ ազդեցության կանխման ու թուլացման ասպարեզում  
զանազան

միջոցների հետ կապված ծախսումների գիտակցման բարձրացումը,

է) խրախուսում եւ համագործակցում են այն էներգաարդյունավետ եւ  
Էկոլոգիապես

մաքուր տեխնոլոգիաների, պրակտիկայի եւ գործընթացների

հետազոտություններում եւ

կիրառման մեջ, որոնք տնտեսապես արդյունավետ ձեռով նվազագույնի կհասցնեն

էներգետիկ ցիկլի բոլոր ասպեկտների վնասակար Էկոլոգիական ազդեցությունը,

ը) մտավոր սեփականության իրավունքների հարկ եղած եւ արդյունավետ

պաշտպանության անհրաժեշտության հաշվառմամբ՝ խրախուսում են այդպիսի

տեխնոլոգիաների փոխանցման եւ տարածման նպաստավոր պայմանները,

թ) ավելի վաղ փուլում եւ մինչեւ որոշումների ընդունումը նպաստում են

էներգետիկ ներդրումների՝ Էկոլոգիապես նշանակալի նախագծերի

հրապարակային

զննհատմանը, ինչպես նաեւ Էկոլոգիական ազդեցության հետազա

մոնիտորինգին,

ժ) նպաստում են Պայմանավորվող կողմերի համապատասխան Էկոլոգիական  
ծրագրերի

եւ չափանիշների վերաբերյալ գիտելիքների տարածմանը եւ տեղեկության

փոխանակմանը

եւ այդ ծրագրերի ու չափանիշների իրականացմանը միջազգային պլանով,

ժա) առաջարկությունների հիման վրա եւ գոյություն ունեցող ռեսուրսների

շրջանակներում մասնակցում են համապատասխան Էկոլոգիական ծրագրերի

մշակմանը եւ

իրագործմանը:

2) Մեկ կամ ավելի թվով Պայմանավորվող կողմերի խնդրանքով՝ սույն հոդվածի

դրույթների կիրառման կամ մեկնաբանման շուրջ վեճերը, այդպիսի վեճերը

քննության

առնելու մասին այլ հարկ եղած միջազգային դրույթների բացակայության

դեպքում,

քննության են առնվում Խարտիայի համաժողովի կողմից՝ դրանք լուծելու

նպատակով:

3) Սույն հոդվածի նպատակներով՝

ա) "էներգետիկ ցիկլ" նշանակում է այն էներգետիկ ամբողջ շղթան, որն իր մեջ

ներառում է էներգիայի տարբեր ձեւերի որոնողական աշխատանքների,

հետախուզման,

արտադրության, փոխակերպման, տարածման եւ սպասարկման հետ կապված

գործունեության

եւ մնացորդների մշակման ու հեռացման հետ կապված գործունեությունը, ինչպես

նաեւ

գործունեության այդ տեսակների կանգնեցման, դադարեցման եւ փակման հետ

կապված

գործունեությունը՝ վնասակար Էկոլոգիական ազդեցությունը նվազագույնի

հասցնելու

նպատակով,

բ) "Էկոլոգիական ազդեցություն" նշանակում է՝ ազդեցություն շրջակա

միջավայրի վրա, ներառյալ մարդկանց առողջությունը եւ անվտանգությունը, ֆլորան եւ ֆաունան, հողը, օդը, ջուրը, կլիման, լանդշաֆտը եւ պատմական հուշարձանները կամ մյուս ֆիզիկական շինությունները կամ փոխազդեցությունը այդ գործոնների միջեւ, այն ներառում է նաեւ ներազդեցությունը մշակութային ժառանգության կամ սոցիալ-տնտեսական պայմանների վրա՝ այդ գործոններին պատճառված փոփոխությունների հետեւանքով,

գ) "Էներգաարդյունավետության բարձրացում" նշանակում է՝ արտադրանքի (ապրանքի կամ ծառայության) միեւնույն միավորի արտադրության պահպանման գործողություններ՝ առանց այդ արտադրանքի որակի կամ աշխատանքային բնութագրությունների իջեցման՝ այդ արտադրանքի արտադրության համար պահանջվող

Էներգիայի քանակի նվազեցմամբ հանդերձ,

դ) "Եկամտաբեր" նշանակում է՝ որոշակի նպատակի հասնել առավել նվազագույն

ծախսումներով կամ առավել մեծ օգուտի հասնել տվյալ ծախսումներով:

-----  
ԻՐՏԵԿ - շարունակությունը հաջորդ մասերում

## ԷՆԵՐԳԵՏԻԿ ԽԱՐՏԻԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ (2-րդ մաս)

### ՀՈԴՎԱԾ 20 Հրապարակայնությունը

1) Էներգետիկ նյութերի եւ արտադրանքի առեւտրին վերաբերող ընդհանուր կիրառման օրենքները, օրենսդրական ակտերը, դատական վճիռները եւ վարչական

որոշումները, 29-րդ հոդվածի 2-րդ կետի "ա" ենթակետին համապատասխան, պատկանում

են ԳԱՏՏ-ի եւ դրա հետ կապված համապատասխան փաստաթղթերի հրապարակայնության

կարգապահությանը ենթարկվող միջոցներին:

2) Ցանկացած Պայմանավորվող կողմի՝ գործողության մեջ դրված ընդհանուր կիրառման օրենքները, օրենսդրական ակտերը, դատական վճիռները ու վարչական

որոշումներն ու Պայմանավորվող կողմերի միջեւ գործող այն համաձայնագրերը, որոնք

վերաբերում են սույն Պայմանագրով ընդգրկվող մյուս հարցերին, նույնպես հրապարակվում են առանց ուշացման եւ այնպես, որ մյուս Պայմանավորվող կողմերը եւ

ներդրողները հնարավորություն ունենան ծանոթանալու դրանց հետ: Սույն կետի դրույթները չեն պահանջում, որ որեւէ Պայմանավորվող կողմ հրապարակի գաղտնի

տեղեկություն, որը կխոչընդոտի օրենքների ստիպողական կատարմանը եւ որեւէ այլ

կերպ կհակասի հասարակական շահերին կամ էլ վնաս կհասցնի որեւէ ներդրողի

առեւտրային օրինական շահերին:

3) Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ նշանակում է մեկ կամ ավելի տեղեկատու կետեր, ուր կարելի է դիմել վերոհիշյալ օրենքների, օրենսդրական ակտերի, դատական վճիռների եւ վարչական որոշումների վերաբերյալ տեղեկություն ստանալու խնդրանքով, եւ այդպիսի նշանակման մասին անհապաղ հաղորդում է Քարտուղարություն, որն այդ տեղեկությունները տրամադրում է ըստ պահանջի:

### ՀՈԴՎԱԾ 21 Հարկումը

1) Բացառությամբ այն դեպքերի, երբ սույն հոդվածում այլ բան է նախատեսված, սույն Պայմանագրում Պայմանավորվող կողմերի հարկային միջոցների նկատմամբ ոչինչ չպետք է իրավունք ստեղծի կամ պարտականություններ դնի: Սույն հոդվածի եւ Պայմանագրի ցանկացած այլ դրույթի միջեւ ցանկացած անհամապատասխանության դեպքում սույն հոդվածը առավել ուժ ունի այդպիսի անհամապատասխանության մասում:

2) 7-րդ հոդվածի 3-րդ կետը կիրառվում է հարկային միջոցների կապակցությամբ, բացառությամբ եկամտի կամ կապիտալի վերաբերյալ հարկային միջոցների եւ բացառությամբ այն բանի, որ այդպիսի դրույթը չպետք է կիրառվի.  
ա) 2-րդ ենթակետում հիշատակված ցանկացած կոնվենցիայի, համաձայնագրի կամ պայմանավորվածության հարկային դրույթներին համապատասխան՝ Պայմանավորվող կողմի տրամադրած առավելությունների նկատմամբ, բ) ցանկացած այն հարկային միջոցի նկատմամբ, որն ուղղված է հարկերի արդյունավետ գանձումն ապահովելուն, բացառությամբ այն դեպքերի, երբ Պայմանավորվող կողմի տվյալ միջոցը մյուս Պայմանավորվող կողմից ծագող կամ դրա տարածքի համար նախատեսված էներգետիկ նյութերի եւ արտադրանքի նկատմամբ կամայական խտրականություն է անում կամ կամայականորեն սահմանափակում է 7-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն տրամադրվող օգուտները:

3) 10-րդ հոդվածի 2-րդ եւ 7-րդ կետերը կիրառվում են Պայմանավորվող կողմերի այլ հարկային միջոցների նկատմամբ, քան եկամտի կապիտալի վերաբերյալ հարկային միջոցները, բացառությամբ այն բանի, որ այդպիսի միջոցներ չպետք է կիրառվեն՝

ա) 7-րդ կետի 2-րդ ենթակետում հիշատակված կամ որեւէ Տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպության անդամությունից բխող այն առավելությունների վերաբերյալ առավել նպաստավոր ազգի ռեժիմի ուղղությամբ պարտավորություններ մտցնելու համար, որոնք Պայմանավորվող կողմից հատկացվում են ցանկացած կոնվենցիայի, համաձայնագրի կամ պայմանավորվածության հարկային

դրույթների համաձայն, կամ

բ) ցանկացած այն հարկային միջոցի վերաբերյալ, որն ուղղված է հարկերի արդյունավետ գանձումն ապահովելուն, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ միջոցը կամայական խտրականություն է անում մյուս Պայմանավորվող կողմի ներդրողի

Նկատմամբ կամ կամայականորեն սահմանափակում է Պայմանագրի ներդրումային

դրույթների համաձայն տրամադրվող օգուտները:

4) 29-րդ հոդվածի 2-ից 6-րդ կետերը կիրառվում են հարկային միջոցների նկատմամբ, բացառությամբ եկամտի կամ կապիտալի վերաբերյալ հարկային միջոցների:

5) ա) 13-րդ հոդվածը կիրառվում է հարկերի նկատմամբ:

բ) բոլոր դեպքերում, երբ 13-րդ հոդվածի կապակցությամբ առաջանում է հարց, ապա այն մասում, թե հարկը հանդիսանո՞ւմ է սեփականագրկում, կամ այս կամ այն

հարկը, որը վկայակոչվում է որպես սեփականագրկում, հանդիսանո՞ւմ է խտրական, ապա

կիրառվում են հետևյալ դրույթները.

1) սեփականագրկում վկայակոչող ներդրողը կամ Պայմանավորվող կողմը այն հարցը, թե հարկը հանդիսանո՞ւմ է սեփականագրկում, կամ հարկը հանդիսանո՞ւմ է

խտրական, հանձնում են համապատասխան իրավասու հարկային մարմին: Եթե ներդրողը

կամ Պայմանավորվող կողմը չեն կատարում այդպիսի հանձնում, ապա 26-րդ հոդվածի

2-րդ կետի "գ" ենթակետի կամ 27-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վեճերը լուծելու կոչված մարմիններն են այդպիսի հանձնում կատարում

համապատասխան

իրավասու հարկային մարմիններին:

2) Իրավասու հարկային մարմինները ձգտում են այդպիսի հանձնման պահից սկսած

վեցամսյա ժամկետում լուծել այդ ձեռով հանձնված հարցերը: Ինչ վերաբերում է խտրականության հարցերին, ապա իրավասու հարկային մարմինները կիրառում են

համապատասխան հարկային կոնվենցիայի խտրականությունն չընկելու մասին դրույթները

կամ, եթե համապատասխան հարկային կոնվենցիայում գոյություն չունի խտրականություն չընկելու մասին հարկի նկատմամբ կիրառելի դրույթ, կամ համապատասխան Պայմանավորվող կողմերի միջև գոյություն չունի այդպիսի գործող

հարկային կոնվենցիա, կիրառում են անխտրականության սկզբունքները՝ Եկամտի եւ

կապիտալի վերաբերյալ տնտեսական համագործակցության եւ զարգացման տիպային

հարկային կոնվենցիայի համաձայն:

3) 26-րդ հոդվածի 2-րդ կետի "գ" ենթակետի կամ 27-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վեճերը լուծելու կոչված մարմինները կարող են հաշվի առնել ցանկացած

եզրակացություն, որին հանգել են իրավասու հարկային մարմինները այն բանի վերաբերյալ, թե հարկը հանդիսանո՞ւմ է սեփականագրկում: Այդպիսի

մարմինները

ուշադրություն են առնում ցանկացած այն եզրակացությունները, որոնց "բ" կետի 2-րդ ենթակետում նախատեսված վեցամսյա ժամկետում հանգում են իրավասու հարկային

մարմինները այն բանի վերաբերյալ, թե հարկը հանդիսանում է խտրական:

Այդպիսի

մարմինները կարող են նաեւ հաշվի առնել ցանկացած եզրակացություն, որոնց հանգում

են իրավասու հարկային մարմինները վեցամսյա ժամկետի ավարտին:

4) 2-րդ կետում հիշատակված վեցամսյա ժամկետի սահմաններից դուրս հարկային

մարմինների ներգրավումը ոչ մի դեպքում չպետք է հանգեցնի, 26-րդ եւ 27-րդ հոդվածների համաձայն, քննության ուշացման:

5) Տարակարծությունից խուսափելու համար 14-րդ հոդվածը չի սահմանափակում

պահելու միջոցով կամ այլ միջոցների օգնությամբ հարկ մտցնելու կամ գանձելու՝ Պայմանավորվող կողմի իրավունքը:

6) Սույն հոդվածի նպատակների համար՝

ա) "Հարկային միջոց" հասկացությունը իր մեջ ներառում է.

1) Պայմանավորվող կողմի կամ նրա վարչատարածքային միավորի կամ նրա տեղական

մարմնի ներպետական օրենսդրության՝ հարկերին վերաբերող ցանկացած դրույթ, կամ

2) կրկնակի հարկումից խուսափելու մասին ցանկացած կոնվենցիայի կամ ցանկացած

այլ միջազգային համաձայնագրի կամ պայմանավորվածության՝ հարկերին վերաբերող

ցանկացած դրույթ:

բ) Եկամտի կամ կապիտալի հարկեր են համարվում բոլոր այն հարկերը, որոնք դրվում են միագումար եկամտի, միագումար կապիտալի կամ եկամտի կամ կապիտալի

բաղկացուցիչ մասերի վրա, ներառյալ սեփականության օտարումից ստացվող եկամտի

հարկերը, ունեցվածքի, ժառանգության եւ նվիրատվության հարկերը կամ ըստ եւրոյան

համանման հարկերը, ձեռնարկությունների կողմից վճարվող աշխատավարձի կամ ռոճիկի

ընդհանուր գումարների վրա դրվող հարկերը, ինչպես նաեւ հիմնական կապիտալի

արժեքի աճի վրա դրվող հարկը:

գ) "Իրավասու հարկային մարմին" նշանակում է՝ կրկնակի հարկումից խուսափելու

մասին Պայմանավորվող կողմերի միջեւ գործող համաձայնագրի իրավասու մարմին կամ,

եթե չկա այդպիսի համաձայնագիր, հարկերի համար պատասխանատու նախարար կամ

նախարարություն կամ նրանց լիազոր ներկայացուցիչներ:

դ) Տարակարծիքից խուսափելու համար "հարկային դրույթներ" եւ "հարկեր" հասկացությունները մաքսատուրքերը չեն ընդգրկում:

- 1) Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ ապահովում է, որ ցանկացած պետական ձեռնարկություն, որ նա պահում կամ ստեղծում է այդ կողմի տարածքում ապրանքների եւ ծառայությունների վաճառքի կամ դրանց մատակարարման համար, իր գործունեությունը իրականացնի այնպես, որ դա համատեղելի լինի Պայմանավորվող կողմի՝ սույն Պայմանագրի 3-րդ մասով ստանձնած պարտավորություններին:
- 2) Ոչ մի Պայմանավորվող կողմ չպետք է խրախուսի կամ այդպիսի պետական ձեռնարկությունից պահանջի այդ կողմի տարածքում իրականացնել գործունեությունը այնպես, որ դա անհամատեղելի լինի Պայմանավորվող կողմի՝ սույն Պայմանագրի մյուս դրույթների գծով ստանձնած պարտավորություններին:
- 3) Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ ապահովում է, որ եթե նա ստեղծում կամ պահում է կազմակերպություն եւ այդ կազմակերպությանը օժտում է օրենսդրական, վարչական կամ պետական այլ լիազորություններով, այդպիսի կազմակերպությունը այդ լիազորություններն իրականացնի սույն Պայմանագրով Պայմանավորվող կողմի ստանձնած պարտավորությունների հետ համատեղելի ձևով:
- 4) Ոչ մի Պայմանավորվող կողմ չպետք է խրախուսի կամ պահանջի, որ ցանկացած կազմակերպություն, որին նա տրամադրում է բացառիկ կամ հատուկ արտոնություններ, իր գործունեությունն այդ կողմի տարածքում իրականացնի այնպես, որ դա անհամատեղելի լինի սույն Պայմանագրով Պայմանավորվող կողմի ստանձնած պարտավորություններին:
- 5) Սույն հոդվածի նպատակներով "կազմակերպություն" հասկացությունը ներառում է ցանկացած ձեռնարկություն, գործակալություն կամ այլ կազմակերպություն կամ անհատ:

### ՀՈԴՎԱԾ 23

Ենթաազգային մարմինների կողմից դիտորդական առաքելություն

- 1) Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, սույն Պայմանագրին համապատասխան, լիակատար պատասխանատվություն է կրում Պայմանագրի բոլոր դրույթների պահպանման համար եւ ձեռնարկում է հնարավոր բոլոր խելամիտ միջոցները իր տարածքի սահմաններում տարածաշրջանային եւ տեղական կառավարությունների ու իշխանությունների կողմից այդպիսի պահպանումն ապահովելու համար:
- 2) Սույն Պայմանագրի 2-րդ, 4-րդ եւ 5-րդ մասերում շարադրված վեճերի լուծման մասին դրույթները կարող են կիրառվել Պայմանագրի՝ Պայմանավորվող կողմի

պահպանման վրա ներագոյող, Պայմանավորվող կողմի սահմաններում տարածաշրջանային կամ տեղական կառավարությունների կամ իշխանությունների կողմից ընդունված միջոցների նկատմամբ:

ՀՈՂՎԱԾ 24  
Բացառություններ

1) Սույն հոդվածը չի կիրառվում 12-րդ, 13-րդ եւ 29-րդ հոդվածների նկատմամբ:

2) Սույն Պայմանագրի դրույթները, բացի

ա) 1-ին կետում հիշատակված, եւ

բ) 1-ին ենթակետի վերաբերյալ Պայմանագրի 3-րդ մասում հիշատակված դրույթներից,

չպետք է խոչընդոտեն այն բանին, որ որեւէ Պայմանավորվող կողմ ընդունի կամ ապահովի ցանկացած այն միջոցների կատարումը, որոնք.

1) անհրաժեշտ են մարդկանց կյանքի եւ առողջության, կենդանիների եւ բույսերի

պաշտպանության համար,

2) Եապես կարելոր են այդ Պայմանավորվող կողմից անկախ պատճառներով առաջացած

պակասության պայմաններում Էներգետիկ կայանների եւ արտադրանքի ձեռք բերման կամ

բաշխման համար՝ պայմանով, որ ցանկացած այդպիսի միջոց

համապատասխանում է այն

սկզբունքներին, որ.

Ա) մյուս բոլոր Պայմանավորվող կողմերն ունեն այդպիսի Էներգետիկ կայանների եւ արտադրանքի՝ Միջազգային առաջարկի արդարացի բաժին ստանալու իրավունք,

Բ) Սույն Պայմանագրին հակասող ցանկացած այդպիսի միջոց դադարեցվում է, հեկց

որ դադարում են գոյություն ունեցող այդպիսի միջոց առաջացնող պայմանները, կամ

3) որոնք ուղղված են տեղաբնակների կամ սոցիալապես կամ տնտեսապես չապահովված անձանց կամ խմբերի ներկայացուցիչներ հանդիսացող

ներդրողներին կամ

նրանց կապիտալ ներդրումներին օգնություն ցույց տալուն՝ պայմանով, որ այդպիսի

միջոցը՝

Ա) զգալի ազդեցություն չի գործում այդ Պայմանավորվող կողմի տնտեսության վրա, եւ

Բ) խտրականություն չի դնում ցանկացած մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների նկատմամբ այդ Պայմանավորվող կողմի այն ներդրողների

համեմատությամբ, որոնք նրանց թվի մեջ չեն, որոնց համար նշանակվում է այդ միջոցը՝ պայմանով, որ ոչ մի միջոց չպետք է նշանակի Էներգետիկ հատվածում

տնտեսական գործունեության քողարկված սահմանափակում կամ չարդարացված խտրականություն Պայմանավորվող կողմերի միջեւ կամ ներդրողների կամ

Պայմանավորվող կողմերի շահագրգիռ մյուս անձանց միջեւ: Այդպիսի միջոցները հարկ

եղածին պես հիմնավորվում են եւ չպետք է ի չիք դարձնեն կամ վնաս հասցնեն որեւէ



այնպիսի շահի, որը, սույն Պայմանագրին համապատասխան, մեկ կամ ավելի թվով

Պայմանավորվող կողմերը սպասում էին առավել մեծ չափով, քան դա խստագույնս

անհրաժեշտ է հայտարարված նպատակի համար:

3) Սույն Պայմանագրի դրույթները, բացի 1-ին կետում հիշատակված դրույթներից, չպետք է մեկնաբանվեն որպես որեւէ Պայմանավորվող կողմի ցանկացած

այնպիսի միջոց ընդունելուն խոչընդոտ, որը նա համարում է անհրաժեշտ.

ա) իր անվտանգության էական շահերի պաշտպանության համար, այդ թվում՝

1) Էներգետիկ նյութերով եւ արտադրանքով ռազմական համալիրի մատակարարմանը

վերաբերող միջոցը,

2) պատերազմի, զինված հակամարտության կամ միջազգային հարաբերություններում

այլ արտակարգ դրության ժամանակ ձեռնարկված միջոցը,

բ) միջուկային զենքի կամ միջուկային այլ պայթուցիկ սարքերի չտարածման ազգային քաղաքականության կամ այնպիսի քաղաքականության վարման վերաբերյալ, որն

անհրաժեշտ է Միջուկային զենքի չտարածման մասին պայմանագրով, Միջուկային

նյութերի արտահանման ղեկավար սկզբունքներով այդ կողմի ստանձնած պարտավորությունների կամ մյուս միջազգային պարտավորությունների կամ միջուկային

չտարածման հասկացությունների կատարման համար, կամ

գ) հասարակական կարգի պահպանման համար:

Այդպիսի միջոցը չպետք է հանդիսանա տարանցման քողարկված սահմանափակում:

4) Սույն Պայմանագրի դրույթները, որոնք առավել նպաստավոր ազգային ռեժիմ են

տրամադրում, չպետք է որեւէ Պայմանավորվող կողմի պարտադրեն ցանկացած ուրիշ

Պայմանավորվող կողմի ներդրողների վրա տարածելու ցանկացած արտոնյալ ռեժիմ՝

ա) որը բխում է ազատ առևտրի գոտում կամ մաքսային միության մեջ նրա անդամությունից,

բ) որը տրամադրվում է նախկինում Խորհրդային Սոցիալիստական Զանրապետությունների Միության կազմի մեջ մտնող պետությունների միջև տնտեսական

համագործակցությանը վերաբերող երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրով՝ մինչև

դրանց տնտեսական հարաբերությունների հաստատումը՝ վերջնականապես սահմանվածի

հիման վրա:

## ՀՈԴՎԱԾ 25

### Տնտեսական ինտեգրացիայի համաձայնագրեր

1) Սույն Պայմանագրի դրույթները չպետք է մեկնաբանվեն այնպես, թե դրանք Տնտեսական ինտեգրացիայի մասին համաձայնագրի /այսուհետ՝ ՏԻՀ/ կողմ հանդիսացող

Պայմանավորվող կողմից պարտադրում են առավել նպաստավոր ազգի ռեժիմի միջոցով այդ

ՏԻՅ-ի կողմ չհանդիսացող այլ Պայմանավորվող կողմին տրամադրել այդ ՏԻՅ-ի կողմերի

միջեւ կիրառվող ցանկացած արտոնյալ ռեժիմ՝ այն բանի բերումով, որ դրանք հանդիսանում են սույն Պայմանագրի կողմեր:

2) 1-ին կետի նպատակների համար "ՏԻՅ" նշանակում է՝ գոյություն ունեցող խտրականության միջոցների վերացման եւ/կամ այդ համաձայնագիրը ուժի մեջ մտնելու

ժամանակ կամ ընդունելի ժամանակաշրջանում նոր կամ առավել խտրական միջոցների

արգելման ուղիով նրա կողմերի միջեւ կամ դրանց մեջ ամբողջ խտրականության բացակայության կամ էական վերացման միջոցով inter alia-ն, առեւտուրը եւ կապիտալ ներդրումները էապես ազատականացնող համաձայնագիր:

3) Սույն հոդվածը չպետք է ներառի ԳԱՏՏ-ի եւ դրա հետ կապված Փաստաթղթերի

կիրառման վրա՝ 29-րդ հոդվածին համապատասխան:

## Մաս 5 Վեճերի լուծումը

### ՀՈԴՎԱԾ 26

Վեճերի լուծումը ներդրողի եւ Պայմանավորվող կողմի միջեւ

1) Պայմանավորվող կողմի եւ մյուս Պայմանավորվող կողմի ներդրողի միջեւ առաջինի տարածքում վերջինիս կապիտալ ներդրման վերաբերյալ վեճերը, որոնք, ըստ

3-րդ մասի, իբրեւ թե վերաբերում են առաջինի պարտավորության խախտմանը, հնարավորության սահմաններում լուծվում են խաղաղ ճանապարհով:

2) Եթե այդպիսի վեճերը խաղաղ լուծման մասին կողմերից ցանկացած կողմի խնդրանքի թվականից սկսած երեք ամսվա ընթացքում չեն կարող լուծվել 1-ին կետի

դրույթներին համապատասխան, ապա վեճը, վեճի կողմ հանդիսացող ներդրողի ընտրությամբ, կարող է լուծելու համար հանձնվել՝

ա) վեճի կողմ հանդիսացող Պայմանավորվող կողմի դատարաններ կամ վարչական

ատյաններ,

բ) վեճի լուծման՝ ավելի վաղ համաձայնեցված ցանկացած կիրառելի ընթացակարգին

համապատասխան,

գ) սույն հոդվածի հետեւյալ կետերին համապատասխան:

3)

ա) Միայն "բ" եւ "գ" ենթակետերից կախված՝ յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ սույնով տալիս է իր լիակատար համաձայնությունը՝ վեճը հանձնելու միջազգային արբիտրաժ կամ հաշտության՝ սույն հոդվածի դրույթներին համապատասխան,

բ) 1) ID Հավելվածում թվարկված Պայմանավորվող կողմերը այդպիսի լիակատար

համաձայնություն չեն տալիս այն դեպքում, երբ ներդրողը ավելի վաղ վեճը հանձնել

է 2-րդ կետի "ա" կամ "բ" ենթակետերին համապատասխան,

2) Հրապարակայնության նպատակով ID Հավելվածում թվարկված Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրն այդ կապակցությամբ վավերացման, ընդունման կամ հաստատման մասին իր ակտը 39-րդ հոդվածին համապատասխան ի պահ հանձնելու կամ միանալու մասին իր ակտը 41-րդ հոդվածին համապատասխան ի պահ հանձնելու թվականից ոչ ուշ Զարտուղարություն է ներկայացնում գրավոր հայտարարություն իր քաղաքականության, պրակտիկայի եւ պայմանների վերաբերյալ:

գ) IA Հավելվածում հիշատակված Պայմանավորվող կողմը 10 (1) հոդվածի վերջին նախադասությանը համապատասխան առաջացող վեճի վերաբերյալ այդպիսի լիակատար համաձայնություն չի տալիս:

4) Այն դեպքում, եթե ներդրողը ընտրում է վեճի լուծման փոխանցումը՝ 2-րդ կետի "գ" ենթակետին համապատասխան, ներդրողը հետագայում իր գրավոր համաձայնությունն է տալիս վեճը հանձնելու կապակցությամբ.

ա) 1) պետությունների եւ այլ պետությունների քաղաքացիների միջեւ ներդրումային վեճերի լուծման մասին այն կոնվենցիային համապատասխան հիմնված ներդրումային վեճերի լուծման միջազգային կենտրոնին, որը ստորագրման համար բաց է Վաշինգտոնում՝ 1965 թվականի մարտի 18-ից (այսուհետ՝ "ICSID"), եթե ներդրողի Պայմանավորվող կողմը եւ վեճի կողմ հանդիսացող Պայմանավորվող կողմը երկուսն էլ հանդիսանում են ICSID-ի մասնակիցներ, կամ

2) "ա" կետի 1-ին ենթակետում հիշատակված կոնվենցիային համապատասխան հիմնված ներդրումային վեճերի միջազգային կենտրոնին՝ կենտրոնի Զարտուղարության կողմից ընթացակարգերի իրականացման Լրացուցիչ մարմնի գործողությունը կարգավորվող կանոնների համաձայն (այսուհետ՝ "Լրացուցիչ, օժանդակ կանոններ"), եթե ներդրողի Պայմանավորվող կողմը կամ վեճի կողմ հանդիսացող Պայմանավորվող կողմը, բայց ոչ երկուսն էլ, հանդիսանում է ICSID-ի կոնվենցիայի մասնակից,

բ) միանձնյա արբիտրի կամ Միավորված ազգերի կազմակերպության Միջազգային առեւտրային իրավունքի հանձնաժողովի (այսուհետ՝ UNCITRAL) արբիտրաժային կանոններին համապատասխան հիմնվող ad hoc արբիտրաժային դատարան, կամ

գ) Միջազգային առեւտրական պալատի Ստոկհոլմի արբիտրաժային ինստիտուտին առընթեր արբիտրաժային քննության:

5) "ա" կետի 3-րդ ենթակետում տրված համաձայնությունը 4-րդ կետին համապատասխան՝ ներդրողի կողմից տրված գրավոր համաձայնության հետ մեկտեղ համարվում է այն պահանջի բավարարմանը համապատասխանող, որը ներկայացվում է՝

1) վեճի կողմերի գրավոր համաձայնության վերաբերյալ ICSID կոնվենցիայի 2-րդ

մասի իմաստով եւ Լրացուցիչ, օժանդակ կանոնների իմաստով,

2) "Գրավոր համաձայնության" վերաբերյալ Օտարերկրյա արբիտրաժային վճիռների

ճանաչման եւ կատարման մասին Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայի

2-րդ հոդվածի իմաստով, որը ստորագրվել է Նյու Յորքում՝ 1958 թվականի հունիսի

10-ին (այսուհետ՝ Նյու Յորքի կոնվենցիա), եւ

3) "Յամաձայնության այն կողմերի վերաբերյալ, որոնք տվել են գրավոր համաձայնություն" UNCITRAL Արբիտրաժային կանոնակարգի 1-ին հոդվածի իմաստով,

բ) սույն հոդվածի համաձայն՝ ցանկացած արբիտրաժային քննություն, վեճի ցանկացած կողմի պահանջով, կարող է տեղի ունենալ Նյու Յորքի կոնվենցիայի կողմ

հանդիսացող պետությունում: Սույն հոդվածին համապատասխան՝ արբիտրաժ ներկայացվող

հայցերը քննության են առնվում որպես առեւտրային հարաբերություններից բխող հայցեր կամ գործարքներ՝ նշված կոնվենցիայի 1-ին հոդվածի նպատակներով:

6) 4-րդ կետի համաձայն հիմնվող արբիտրաժային դատարանը վիճելի հարցերը լուծում է սույն Պայմանագրին եւ միջազգային իրավունքի կիրառվող նորմերին ու սկզբունքներին համապատասխան:

7) Ներդրողը, բացի այն ֆիզիկական անձից, որն ունի վեճի կամ կողմ հանդիսացող մի Պայմանավորվող կողմի քաղաքացիություն, 4-րդ կետում հիշատակված

գրավոր ձեռով համաձայնություն տալու թվականին, եւ որը մինչեւ նրա եւ այդ Պայմանավորվող կողմի միջեւ ծագած վեճը վերահսկվում էր այլ Պայմանավորվող կողմի

ներդրողների կողմից, ICSID-ի կոնվենցիայի 25-րդ հոդվածի 2-րդ կետի "բ" ենթակետի նպատակների համար դիտվում է որպես "այլ Պայմանավորվող պետության

քաղաքացի" եւ Լրացուցիչ օժանդակ կանոնների 1-ին հոդվածի 6-րդ կետի նպատակների

համար նրա վրա տարածվում է "այլ պետության քաղաքացու" ռեժիմը:

8) Արբիտրաժային որոշումները, որոնք կարող են բովանդակել տոկոսներ վճարելու որոշում, վեճի կողմերի համար հանդիսանում են վերջնական եւ պարտադիր:

Վեճի Պայմանավորվող կողմի ներազգային կառավարության կամ իշխանությունների

կողմից ընդունված միջոցին վերաբերող արբիտրաժային որոշումը պետք է նախատեսի

վնասների դրամական փոխհատուցման՝ Պայմանավորվող կողմի վճարումների հնարավորություն նշանակված ուրիշ ցանկացած միջոցի փոխարեն:

Յուրաքանչյուր

Պայմանավորվող կողմ անհետաձգելիորեն կենսագործում է ցանկացած այդպիսի որոշում

եւ նախատեսում է այդպիսի որոշումների արդյունավետ կատարման ապահովումն իր

տարածքում:

1) Պայմանավորվող կողմերը ձգտում են սույն Պայմանագրի կիրառման կամ մեկնաբանման վերաբերյալ վեճերը լուծել դիվանագիտական ուղիներով:

2) Եթե վեճը 1-ին կետին համապատասխան չի լուծվել ընդունելի ժամկետում, վեճի ցանկացած կողմ, բացառությամբ, եթե այլ բան է նախատեսված սույն Պայմանագրով կամ գրավոր ձեռով Պայմանավորվող կողմերի միջև համաձայնեցված է,

եւ բացառությամբ այն բանի, ինչը վերաբերում է 6-րդ հոդվածի կամ 19-րդ հոդվածի

կամ IA Հավելվածում թվարկված՝ Պայմանավորվող կողմերի համար 10-րդ հոդվածի 1-ին

կետի վերջին նախադասության կիրառմանը կամ մեկնաբանմանը, վեճի մյուս կողմի

գրավոր ծանուցումից հետո կարող է վեճի լուծումը հանձնվել ad hoc արբիտրաժային

դատարան՝ սույն հոդվածի համաձայն:

3) Այդպիսի ad hoc արբիտրաժային դատարանը կազմվում է հետևյալ կերպ.

ա) դատավարությունը նախաձեռնող Պայմանավորվող կողմը նշանակում է դատարանի

մեկ անդամ եւ վեճի մյուս Պայմանավորվող կողմին տեղեկացնում է այդ նշանակման

մասին մյուս Պայմանավորվող կողմի կողմից 2-րդ կետում հիշատակված ծանուցումը

ստանալու օրվանից հետո 30 օրվա ընթացքում,

բ) 2-րդ կետում հիշատակված գրավոր ծանուցումը ստանալուց հետո 60 օրվա ընթացքում վեճի կողմ հանդիսացող մյուս Պայմանավորվող կողմը նշանակում է մեկ

անդամ: Եթե նշված ժամկետի ընթացքում այդպիսի նշանակում չի կատարվում, ապա

քննություն սկսած Պայմանավորվող կողմը 2-րդ կետում հիշատակված գրավոր ծանուցումն ստանալուց հետո 90 օրվա ընթացքում կարող է պահանջել, որ այդպիսի

նշանակում կատարվի "դ" ենթակետին համապատասխան,

գ) երրորդ անդամին, որը չի կարող լինել վեճի կողմ հանդիսացող Պայմանավորվող կողմի հպատակ կամ քաղաքացի, նշանակում են վեճի կողմեր հանդիսացող Պայմանավորվող կողմերը: Այդ անդամը հանդիսանում է դատարանի

նախագահը: Եթե 2-րդ կետում հիշատակված ծանուցումը ստանալուց հետո 150 օրվա

ընթացքում Պայմանավորվող կողմերը համաձայնության չեն հասնում երրորդ անդամի

նշանակման վերաբերյալ, ապա այդպիսի նշանակումը կատարվում է "դ" ենթակետին

համապատասխան ցանկացած Պայմանավորվող կողմի՝ այդպիսի ծանուցում ստանալուց հետո

180 օրվա ընթացքում ներկայացրած պահանջով,

դ) նշանակումները, որոնք պահանջվում է կատարել սույն կետին համապատասխան,

կատարվում են Միջնորդ դատարանի մշտական պալատի Գլխավոր քարտուղարի կողմից՝

համապատասխան խնդրանք ստանալուց հետո 30 օրվա ընթացքում: Եթե ինչ-որ բան

խոչընդոտում է Գլխավոր քարտուղարին՝ կատարելու այդ գործողությունը, ապա նշանակումները կատարվում են բյուրոյի առաջին քարտուղարի կողմից: Եթե վերջինիս,

իր հերթին, ինչ-որ բան խոչընդոտում է՝ կատարելու տվյալ գործողությունը, ապա նշանակումները կատարվում են պաշտոնով ավագ հանդիսացող տեղակալի կողմից,

ե) "ա"-ից "դ" ենթակետերին համապատասխան կատարվող նշանակումները կատարվում

են նշանակվող անդամների որակավորումը, փորձառությունը հաշվի առնելով հատկապես

սույն Պայմանագրով նախատեսված հարցերում,

զ) եթե Պայմանավորվող կողմերի միջեւ չկա այլ պայմանավորվածություն, ապա

գործում են UNCITRAL արբիտրաժային կանոնները, բացի այն մասից, որը փոփոխված է

վեճի կողմեր հանդիսացող Պայմանավորվող կողմերի կամ դատավորների կողմից:

Միջնորդ դատարանը որոշումներն ընդունում է իր անդամների ձայների մեծամասնությամբ,

է) դատարանը վեճը լուծում է սույն Պայմանագրին եւ միջազգային իրավունքի կիրառելի նորմերին ու սկզբունքներին համապատասխան,

ը) արբիտրաժային դատարանի վճիռը հանդիսանում է վերջնական եւ վեճի կողմեր

հանդիսացող Պայմանավորվող կողմերի համար պարտադիր,

թ) Այն դեպքերում, երբ վճիռ կայացնելիս արբիտրաժային դատարանը հանգում է

այն եզրակացության, որ P Յավելվածի I մասում թվարկված Պայմանավորվող կողմի

տարածքի սահմաններում տարածաշրջանային կամ տեղական կառավարության կամ

իշխանությունների միջոցը չի համապատասխանում սույն Պայմանագրին, ապա վեճի

ցանկացած կողմ կարող է դիմել P Յավելվածի 2-րդ մասի դրույթներին,

ժ) դատարանի ծախսերը, ներառյալ նրա անդամների վարձատրությունը, հավասար

մասերով կատարում են վեճի կողմեր հանդիսացող Պայմանավորվող կողմերը: Դատարանը,

սակայն, կարող է իր հայեցողությամբ որոշել, որ վեճի կողմեր հանդիսացող Պայմանավորվող կողմերից մեկը պետք է վճարի ծախսերի մեծ մասը,

Ճա) եթե վեճի կողմեր հանդիսացող Պայմանավորվող կողմերը այլ բան չպայմանավորվեն, դատարանը նիստերը կգումարի Յաագայում եւ կօգտագործի Միջնորդ

դատարանի մշտական պալատի շենքերն ու սպասարկման միջոցները,

Ճբ) արբիտրաժային վճիռի պատճենը ի պահ է հանձնվում Քարտուղարությանը, որն

ապահովում է դրա ընդհանուր մատչելիությունը:

5-րդ կամ 29-րդ հոդվածի կիրառման կամ մեկնաբանման վերաբերյալ Պայմանավորվող կողմերի միջև ծագած վեճը չպետք է լուծվի 27-րդ հոդվածի համաձայն, եթե վեճի կողմեր հանդիսացող Պայմանավորվող կողմերը չպայմանավորվեն այդ մասին:

Մաս 6  
Անցումային դրույթներ

ՀՈԴՎԱԾ 29

Ժամանակավոր դրույթներ առևտրի հետ կապված հարցերի վերաբերյալ

1) Սույն հոդվածի դրույթները Էներգետիկ նյութերի եւ արտադրանքի առևտրի նկատմամբ կիրառվում են այնքան ժամանակ, քանի դեռ Պայմանավորվող կողմերից գոնե մեկը չի հանդիսանում ԳԱՏՏ-ի եւ դրա հետ կապված Փաստաթղթերի կողմ:

2) ա) այն Պայմանավորվող կողմերի միջև Էներգետիկ նյութերի եւ արտադրանքի առևտուրը, որոնցից առնվազն մեկը չի հանդիսանում ԳԱՏՏ-ի կամ դրա հետ կապված համապատասխան փաստաթղթի կողմ, կարգավորվում է "բ" եւ "գ" ենթակետերի, ինչպես

նաեւ 1947 թ. ԳԱՏՏ-ի եւ դրա հետ կապված Փաստաթղթերի դրույթներով՝ G Հավելվածում նախատեսված բացառությունների եւ նորմերի հաշվառմամբ, ինչպես դրանք կիրառվում են 1994 թ. մարտի 1-ի դրությամբ, եւ Էներգետիկ նյութերի եւ արտադրանքի վերաբերյալ միմյանց միջև օգտագործվում են այնպես, ինչպես կօգտագործվեն, եթե բոլոր Պայմանավորվող կողմերը լինեին 1947 թվականի ԳԱՏՏ-ի

եւ դրա հետ կապված Փաստաթղթերի կողմեր:

բ) Պայմանավորվող այն կողմի այդպիսի առևտուրը, որը հանդիսանում է նախկին Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմի մեջ մտնող պետություն, կարող է դրա փոխարեն կարգավորվել, կախված TFU Հավելվածի դրույթներից, երկու կամ ավելի թվով այդպիսի պետությունների միջև կնքված համաձայնագրերով՝ մինչեւ 1999 թվականի դեկտեմբերի 1-ը կամ մինչեւ ԳԱՏՏ-ի մեջ

այդ Պայմանավորվող կողմի մտնելը՝ կախված այն բանից, թե որը տեղի կունենա ավելի վաղ:

գ) Ինչ վերաբերում է ԳԱՏՏ-ի ցանկացած երկու կողմերի միջև առևտրին, ապա "ա" ենթակետը չպետք է կիրառվի, եթե այդ երկու կողմերից ցանկացած կողմը չի հանդիսանում 1947 թվականի ԳԱՏՏ-ի կողմ:

3) Սույն Պայմանագիրը ստորագրած յուրաքանչյուր կողմ եւ տարածաշրջանային

պետություն կամ սույն Պայմանագրին միացած Տնտեսական ինտեգրացիայի կազմակերպություն, ստորագրման կամ միանալու մասին իր ակտը ի պահ տալու թվականին Զարտուղարություն է ներկայացնում ներմուծման կամ արտահանման պահին

Էներգետիկ նյութերի եւ արտադրանքի վերաբերյալ հավաքվող բոլոր սակագնային դրույթների եւ մյուս գանձումների ցանկը, որը տեղեկացնում է ստորագրման կամ ի

պահ հանձնելու՝ այդպիսի թվականին կիրառվող այդպիսի դրույթների եւ գանձումների

մակարդակի մասին: Այդպիսի դրույթների կամ այլ գանձումների ցանկացած փոփոխության մասին տեղեկացվում է Քարտուղարությունը, որը Պայմանավորվող

կողմերին տեղյակ է պահում այդպիսի փոփոխությունների մասին:

4) Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ ձգտում է ներմուծման կամ արտահանման

պահին հավաքվող ոչ մի սակագնային դրույթ կամ այլ գանձում չբարձրացնել.

ա) ԳԱՏՏ-ի 2-րդ հոդվածում հիշատակված՝ Պայմանավորվող կողմին վերաբերող

ցուցակի 1-ին մասում նկարագրված Էներգետիկ նյութերի եւ արտադրանքի ներմուծման

դեպքում այդ ցուցակում սահմանված մակարդակի համեմատությամբ, եթե Պայմանավորվող

կողմը հանդիսանում է ԳԱՏՏ-ի կողմ,

բ) Էներգետիկ նյութերի եւ արտադրանքի ներմուծման կամ դրանց արտահանման

դեպքում, եթե Պայմանավորվող կողմը չի հանդիսանում ԳԱՏՏ-ի կողմ, այն մակարդակի

համեմատությամբ, որի մասին ամենավերջին պահին ծանուցվել է Քարտուղարությունը,

բացի այն դեպքերից, որոնք թույլատրվում են 2-րդ կետի "ա" ենթակետին համապատասխան կիրառվող դրույթներով:

5) Պայմանավորվող կողմը կարող է այդպիսի սակագնային դրույթները կամ մյուս

գանձումները 4-րդ կետում հիշատակված մակարդակից ավելի բարձրացնել միայն այն

դեպքերում, եթե՝

ա) դրույթի կամ ներմուծման պահին հավաքվող այլ գանձման դեպքում այդպիսի

գործողությունը չի հանդիսանում անհամատեղելի ԳԱՏՏ-ի կիրառվող դրույթների հետ,

բացի 1947 թվականի ԳԱՏՏ-ի եւ դրա հետ կապված Փաստաթղթերի կիրառվող այն

դրույթներից, որոնք թվարկված են G Չավելվածում, եւ 1994 թ. ԳԱՏՏ-ի եւ դրա հետ կապված Փաստաթղթերի համապատասխան դրույթներից, կամ

բ) այդ կողմը, իր օրենսդրական ընթացակարգերի համաձայն, առավել մեծ չափով է

Քարտուղարությանը տեղեկացրել այդպիսի բարձրացման վերաբերյալ իր մտադրության

մասին, մյուս շահագրգիռ Պայմանավորվող կողմերին տրամադրել է խելամիտ հնարավորություն իր մտադրության վերաբերյալ խորհրդակցությունների համար եւ

քննության է առել այդպիսի Պայմանավորվող կողմերի ցանկացած առաջարկ:

6) Ստորագրող կողմերը պարտավորվում են 1995 թվականի հունվարի 1-ից ոչ ուշ



բանակցություններ սկսել 1998 թ. հունվարի 1-ին մոտ, ինչպես դա նպատակահարմար է, համաշխարհային առևտրային համակարգում որեւէ փոփոխության լույսի ներքո սույն Պայմանագրի առթիվ այնպիսի ուղղման տեքստ ընդունելու նպատակով, որը, այնտեղ շարադրված պայմաններին համապատասխան, յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի կպարտավորեցնի այդպիսի սակագները կամ գանձումները չմեծացնել այդ ուղղմանը համապատասխան նշված մակարդակի համեմատությամբ:

7) D Հավելվածը կիրառվում է սույն հոդվածի համաձայն առևտրի հետ կապված կիրառվող դրույթների պահպանման հարցերի շուրջ ծագած վեճերի նկատմամբ, եւ եթե Պայմանավորվող երկու կողմերը չհամաձայնեն այլ բանի մասին, այն վեճերի նկատմամբ, որոնք վերաբերում են այն Պայմանավորվող կողմերի միջև 5-րդ Հոդվածի պահպանմանը, որոնցից առնվազն մեկը չի հանդիսանում ԳԱՏՏ-ի կողմ, բացառությամբ այն բանի, երբ D Հավելվածը չպետք է կիրառվի Պայմանավորվող կողմերի միջև ծագած որեւէ այնպիսի վեճի նկատմամբ, որի էությունը բխում է համաձայնագրից՝

ա) որի մասին ուղարկված է եղել ծանուցում, եւ որը, 2-րդ կետի "բ" ենթակետին եւ TFU Հավելվածին համապատասխան, բավարարում է մյուս պահանջները, կամ

բ) որը ստեղծում է ազատ առևտրի գոտի կամ մաքսային միություն, ինչպես դրանք սահմանված են ԳԱՏՏ-ի 24-րդ հոդվածում:

### ՀՈԴՎԱԾ 30

Փոփոխություններ միջազգային առևտրային պայմանավորվածություններում

Պայմանավորվող կողմերը պարտավորվում են, որ առևտրային բազմակողմ բանակցությունների՝ Ուրուգվայի ռաունդի այն արդյունքների լույսի ներքո, որոնք տեւեն գտել դրա՝ 1994 թվականի ապրիլի 15-ին Մարակեշում ստորագրված Եզրափակիչ ակտում, 1995 թ. հուլիսի 1-ից կամ սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, կախված այն բանից, թե դրանցից որը ավելի ուշ կլինի, կսկսեն սույն Պայմանագրի առթիվ համապատասխան ուղղումների քննարկումը՝ այն հաշվով, որ հարտիայի համաժողովը կընդունի ցանկացած այդպիսի ուղղում:

### ՀՈԴՎԱԾ 31

Էներգիայի հետ կապված սարքավորումը

Խարտիայի ժամանակավոր համաժողովը իր առաջին նիստում կսկսի սույն Պայմանագրի առևտրային դրույթների մեջ Էներգիայի հետ կապված սարքավորումը ներառելու վերաբերյալ ուսումնասիրությունը:

### ՀՈԴՎԱԾ 32

## Անցումային պայմանավորվածություններ

1) Ընդունելով, որ շուկայական տնտեսության պահանջներին համահունչ լինելու համար ժամանակ է պահանջվում, T Չավելվածի ցուցակի մեջ մտցված Պայմանավորվող կողմը, 3-ից 6-րդ կետերում շարադրված պայմաններին համապատասխան, կարող է ժամանակավորապես կասեցնել սույն Պայմանագրի հետեւյալ դրույթներից մեկի կամ դրանից ավելի թվով դրույթների վերաբերյալ իր պարտավորությունների լրիվ պահպանումը.

6-րդ հոդվածի 2-րդ եւ 5-րդ,

7-րդ հոդվածի 4-րդ,

9-րդ հոդվածի 1-ին,

10-րդ հոդվածի 7-րդ - յուրահատուկ միջոցները,

14-րդ հոդվածի 1-ին կետի "դ" ենթակետի-միայն չծախսված եկամուտների փոխանցման վերաբերյալ,

20-րդ հոդվածի 3-րդ կետի,

22-րդ հոդվածի 1-ին եւ 3-րդ կետերի վերաբերյալ:

2) Մյուս Պայմանավորվող կողմերը, 1-ին կետին համապատասխան, լրիվ պահպանումը կասեցրած ցանկացած Պայմանավորվող կողմի ցույց են տալիս աջակցություն այն պայմաններին հասնելու համար, որոնց դեպքում այդպիսի կասեցումը կարող է դադարեցվել: Այդպիսի աջակցություն կարող է տրամադրվել ցանկացած ձեւով, որը մյուս Պայմանավորվող կողմերը առավել արդյունավետ կհամարեն

այն պահանջների բավարարման համար, որոնց մասին ծանուցում է արվել 4-րդ ենթակետի համաձայն, ներառյալ անհրաժեշտության դեպքերում աջակցությունը երկկողմ

կամ բազմակողմ պայմանավորվածությունների օգնությամբ:

3) Կիրառվող դրույթները, դրանցից յուրաքանչյուրի լրիվ պահպանմանը հասնելու

առաջխաղացման փուլերը, նշված միջոցները եւ թվականները կամ, բացառիկ դեպքերում,

պայմանավորող իրադարձությունը, որոնք ձեռք բերելիս ավարտվում է յուրաքանչյուր

փուլ եւ միջոց է ձեռնարկվում, մտցվում են անցման միջոցներ պահանջող՝ յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի համար T Չավելվածի ցուցակի մեջ:

Յուրաքանչյուր այդպիսի Պայմանավորվող կողմ ցուցակի մեջ մտցված միջոցը ձեռնարկում է համապատասխան դրույթի եւ փուլի համար նշված թվականին, ինչպես

դրանք շարադրված են T Չավելվածում: 1-ին կետին համապատասխան լրիվ պահպանումը

կասեցրած Պայմանավորվող կողմերը պարտավորվում են համապատասխան պարտավորությունները լրիվ կատարել 2001 թվականի հուլիսի 1-ի դրությամբ: Եթե

բացառիկ հանգամանքների արդյունքում Պայմանավորվող կողմը անհրաժեշտ համարի եւ

խնդրանքով դիմի այդպիսի ժամանակավոր դադարեցումը երկարաձգելու կամ T Չավելվածում ավելի վաղ չթվարկված ցանկացած նոր ժամանակավոր դադարեցում

մտցնելու մասին, T Յավելվածում ուղղումներ մտցնելու մասին խնդրանքի վերաբերյալ

որոշումը ընդունում է Խարտիայի համաժողովը:

4) Անցումային միջոցների դիմաց Պայմանավորվող կողմը առնվազն 12 ամիսը մեկ

անգամ Քարտուղարությանը տեղեկացնում է.

ա) իր T Յավելվածում թվարկված ցանկացած միջոցների իրականացման վերաբերյալ

եւ լրիվ պահպանման ուղղությամբ ընդհանուր առմամբ առաջխաղացման մասին,

բ) այն առաջխաղացման մասին, որը նա առաջարկում է իրականացնել մոտակա 12

ամիսների ընթացքում իր պարտավորությունների լրիվ պահպանման ուղղությամբ ցանկացած այն հիմնախնդիրների մասին, որը նա կանխատեսում է, եւ այդ հիմնախնդրի

լուծման իր առաջարկությունների մասին,

գ) T Յավելվածում սահմանված փուլերի ավարտը դյուրացնելու նպատակով տեխնիկական աջակցության պահանջի մասին, ինչպես դա անհրաժեշտ է սույն Պայմանագրի լրիվ պահպանման կամ ցանկացած հիմնախնդրի լուծման համար, որի մասին

ծանուցում է արվել "բ" ենթակետին համապատասխան, ինչպես նաեւ իր էներգետիկ

հատվածի՝ դեպի շուկայականի կողմնորոշված մյուս անհրաժեշտ բարեփոխումները եւ

արդիականացումը խրախուսելու համար,

դ) 3-րդ կետում հիշատակված՝ այդ կարգի հարցում անելու ցանկացած հնարավոր

պահանջի մասին:

5) Քարտուղարությունը՝

ա) բոլոր Պայմանավորվող կողմերին ուղարկում է 4-րդ կետում հիշատակված ծանուցումները,

բ) տարածում է ակտիվորեն նպաստում է, ընդունելով, որտեղ դա նպատակահարմար

է, մյուս միջազգային կազմակերպություններում գոյություն ունեցող պայմանավորվածությունները, 2-րդ կետում եւ 4-րդ կետի "գ" ենթակետում հիշատակված տեխնիկական աջակցության պահանջների եւ առաջարկությունների

ընտրությանը եւ համաձայնեցմանը,

գ) յուրաքանչյուր վեցամսյա ժամկետի վերջում բոլոր Պայմանավորվող կողմերին

ուղարկում է 4-րդ կետի "ա" կամ "դ" ենթակետի համաձայն արված ցանկացած ծանուցման համառոտ ցանկը:

6) Խարտիայի համաժողովը ամեն տարի քննության է առնում սույն հոդվածի դրույթների իրականացման ուղղությամբ Պայմանավորվող կողմերի առաջխաղացման հարցը

եւ 2-րդ կետում ու 4-րդ կետի "գ" ենթակետում հիշատակված տեխնիկական աջակցություն ցույց տալու՝ պահանջների եւ առաջարկությունների ընտրության եւ համաձայնեցման հարցը: Այդպիսի քննության ընթացքում Համաժողովը կարող է կայացնել որոշում համապատասխան գործողություն ձեռնարկելու մասին:

Մաս 7

Կառուցվածքը եւ հաստատությունները

### ՀՈԴՎԱԾ 33

#### Էներգետիկ խարտիայի Արձանագրությունները եւ Հռչակագրերը

1) Խարտիայի համաժողովը կարող է հավանություն տալ մի շարք արձանագրությունների կամ հռչակագրերի մշակման մասին բանակցությունների անցկացմանը՝ Խարտիայի նպատակների եւ սկզբունքների իրականացման նպատակով:

2) Այդպիսի բանակցություններին կարող է մասնակցել Խարտիան ստորագրած ցանկացած կողմ:

3) Պետությունը կամ Տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպությունը չպետք է դառնան Արձանագրության կամ Հռչակագրի կողմ, եթե

Նրանք չեն հանդիսանում կամ չեն դառնում միաժամանակ Խարտիան ստորագրած կողմեր

եւ սույն Պայմանագրի Պայմանավորվող կողմեր:

4) 3-րդ կետի եւ 6-րդ կետի "ա" ենթակետի՝ Արձանագրության առթիվ կիրառվող եզրափակիչ դրույթները սահմանվում են այդ Արձանագրության մեջ:

5) Արձանագրությունը կիրառվում է միայն Պայմանավորվող կողմերի նկատմամբ,

որոնք իրենց համաձայնությունն են արտահայտել իրենց համար դրա պարտադիր լինելու

առթիվ, եւ այդ Արձանագրությունը չպետք է վնաս հասցնի տվյալ Արձանագրության

կողմեր չհանդիսացող Պայմանավորվող կողմերի իրավունքներին եւ պարտավորություններին:

6)

ա) Արձանագրությունը կարող է սահմանել Խարտիայի համաժողովի պարտականությունները եւ Քարտուղարության գործառույթների պայմանով, որ այդպիսի սահմանումը չի կարող արվել Արձանագրության առթիվ կատարվող ուղղումների օգնությամբ, եթե այդպիսի ուղղմանը հավանություն չի տրվել Խարտիայի համաժողովի

կողմից, որի հավանություն տալը չպետք է կախված լինի Արձանագրության եւ ոչ մի

դրույթից, որը հաստատվել է "բ" ենթակետով:

բ) Արձանագրությունը, որը նախատեսում է, որ դրան համապատասխան որոշումներ

պետք է ընդունվեն Խարտիայի համաժողովի կողմից, կարող է, "ա" ենթակետից կախված,

այդպիսի որոշումների վերաբերյալ նախատեսել՝

1) քվեարկության կանոններ, որոնք տարբերվում են 36-րդ հոդվածում շարադրված

կանոններից,

2) որ միայն այդ Արձանագրության կողմերն են դիտվում 36-րդ հոդվածի նպատակների համար Պայմանավորվող կողմեր կամ Արձանագրության մեջ նախատեսված

կանոններին համապատասխան քվեարկելու իրավունք ունեցող կողմեր:

### ՀՈԴՎԱԾ 34

#### Էներգետիկ խարտիայի համաժողովը

1) Պայմանավորվող կողմերը պարբերաբար հավաքվում են Էներգետիկ խարտիայի համաժողովի (այսուհետ՝ խարտիայի համաժողով), ուր յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իրավունք ունի ուղարկելու մեկ ներկայացուցիչ: Հերթական ստաշրջանների անցկացման ժամկետները որոշվում են խարտիայի համաժողովի կողմից:

2) խարտիայի համաժողովի արտակարգ ստաշրջանները անցկացվում են այն ժամկետներում, որը որոշվել է խարտիայի համաժողովի կողմից, կամ ցանկացած Պայմանավորվող կողմի գրավոր խնդրանքով՝ պայմանով, որ Զարտուղարության կողմից

Պայմանավորվող կողմերին այդպիսի խնդրանք տալու թվականից սկսած վեց շաբաթվա

ընթացքում այդ խնդրանքը պաշտպանել է Պայմանավորվող կողմերի առնվազն մեկ

երրորդը:

3) խարտիայի համաժողովի գործառույթներն են.

ա) սույն Պայմանագրով եւ ցանկացած արձանագրությամբ նրա վրա դրված պարտականությունների կատարումը,

բ) խարտիայի եւ սույն Պայմանագրի Արձանագրությունների սկզբունքները քննության առնելը եւ դրանց իրականացմանը աջակցություն ցույց տալը,

գ) սույն Պայմանագրին եւ Արձանագրություններին համապատասխան՝ խարտիայի սկզբունքների իրականացման ուղղությամբ համապատասխան ընդհանուր միջոցների համաձայնեցվածությանը աջակցություն ցույց տալը,

դ) այն աշխատանքների ծրագրերը քննության առնելը եւ դրանց ընդունումը, որոնք պետք է կատարվեն Զարտուղարության կողմից,

ե) Զարտուղարության տարեկան հաշվետվությունները եւ բյուջեն քննության առնելը եւ հաստատելը,

զ) շտաբկայանի մասին հնարավոր համաձայնագրի կամ այլ համաձայնագրի պայմանները, ներառյալ այն արտոնությունները եւ անձեռնմխելիությունը քննության

առնելը եւ հաստատելը կամ ընդունելը, որոնք անհրաժեշտ են համարվում խարտիայի

համաժողովի եւ Զարտուղարության համար,

է) համակցված այն ջանքերի խրախուսումը, որոնք ուղղված են Կենտրոնական եւ

Արեւելյան Եվրոպայի ու նախկին Խորհրդային Սոցիալիստական

Հանրապետությունների

Միության այն երկրներում Էներգետիկ հատվածների՝ դեպի շուկայական բնույթի կողմնորոշված բարեփոխումները եւ արդիականացումը ոյուրացնելուն ու դրանց աջակցությունը, որոնց տնտեսությունը գտնվում է անցումային ժամանակաշրջանում,

ը) Արձանագրությունների հետ բանակցությունների անցկացման մանդատին հավանություն տալը եւ դրա հաստատումը, ինչպես նաեւ դրանց տեքստերը եւ տեքստերի

առթիվ ուղղումները քննության առնելը եւ ընդունելը,

թ) Հայտարարագրերի վերաբերյալ բանակցությունների անցկացմանը հավանություն

տալը եւ դրանց թողարկումը հաստատելը,

ժ) սույն Պայմանագրին միանալու մասին որոշումներ ընդունելը,  
ժա) Ասոցիացիայի մասին համաձայնագրերի մշակման վերաբերյալ բանակցություններին հավանություն տալը եւ դրանք քննության առնելը եւ հաստատելը կամ ընդունելը,

ժբ) սույն Պայմանների ուղղումների տեքստերը քննության առնելն ու ընդունելը,

ժգ) սույն Պայմանագրին կից Հավելվածներում արդիականացման եւ տեխնիկական փոփոխությունների քննարկումը եւ ընդունումը,

ժդ) Գլխավոր քարտուղարի նշանակումը եւ Քարտուղարության հիմնման եւ գործունեության համար անհրաժեշտ բոլոր որոշումների, ներառյալ կառուցվածքի, հաստիքների պաշտոնատար անձանց եւ աշխատակիցների վարձման տիպային պայմանների ընդունումը:

4) Իր պարտականությունները կատարելիս Խարտիայի համաժողովը Քարտուղարության միջոցով համագործակցում եւ հնարավորինս լրիվ օգտագործում է, տնտեսության եւ

արդյունավետության նկատառումների համաձայն, մյուս հիմնարկների եւ կազմակերպությունների ծառայությունները եւ ծրագրերը՝ Պայմանագրի նպատակների

հետ կապված հարցերում սահմանված իրավասությամբ հանդերձ:

5) Խարտիայի համաժողովը կարող է նաեւ հիմնել օժանդակ մարմիններ, որոնք նա

անհրաժեշտ է գտնում իր պարտականությունների կատարման համար:

6) Խարտիայի համաժողովը քննության է առնում եւ ընդունում ընթացակարգի եւ

Ֆինանսական կանոնները:

7) 1999 թվականին եւ դրանից հետո՝ Խարտիայի համաժողովի կողմից սահմանվող

ընդմիջումներով /հինգ տարուց ոչ ավելի/, Խարտիայի համաժողովը մանրամասնորեն

վերանայում է սույն Պայմանագրում նախատեսված գործողությունները՝ թե ինչ չափով

են իրականացված Պայմանագրի եւ Արձանագրությունների դրույթները: Ամեն մի վերանայման ավարտին Խարտիայի համաժողովը կարող է փոփոխել կամ բացառել 3-րդ

կետում նշված գործողությունները եւ կարող է լուծարել Քարտուղարությունը:

### ՀՈԴՎԱԾ 35 Քարտուղարությունը

1) Իր պարտականությունների կատարման նպատակով Խարտիայի համաժողովն ունի

Քարտուղարություն, որը կազմված է Գլխավոր քարտուղարից եւ արդյունավետ աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ նվազագույն թվով անձնակազմից:

2) Գլխավոր քարտուղարը նշանակվում է Խարտիայի համաժողովի կողմից: Այդպիսի

առաջին նշանակումը կատարվում է առավելագույնը հինգ տարվա ժամկետով:

3) Իր պարտականությունները կատարելիս Քարտուղարությունը ենթարկվում է Խարտիայի համաժողովին եւ հաշվետու է նրա առաջ:

4) Քարտուղարությունը Խարտիայի համաժողովին ցույց է տալիս անհրաժեշտ աջակցություն իր պարտականությունները կատարելու համար եւ իրականացնում է սույն

Պայմանագրում կամ ցանկացած Արձանագրության մեջ իրեն հանձնարարված գործողություններ եւ Խարտիայի համաժողովի կողմից իր վրա դրված ցանկացած այլ

գործողություն:

5) Քարտուղարությունը կարող է կնքել այնպիսի վարչական եւ պայմանագրային

համաձայնություններ, որոնք կարող են պահանջվել իր գործողությունների արդյունավետ կատարման համար:

### ՀՈԴՎԱԾ 36 Ըվեարկությունը

1) Խարտիայի համաժողովի կողմից որոշումների ընդունման համար պահանջվում է

Խարտիայի համաժողովի այն նիստին ներկա եւ ըվեարկող Պայմանավորվող կողմերի

միաձայնությունը, որտեղ քննության են առնվում այդպիսի հարցեր՝ նպատակ ունենալով.

ա) սույն Պայմանագրի ուղղումների ընդունումը, բացի 34-րդ եւ 35-րդ հոդվածներին եւ T Հավելվածին վերաբերող ուղղումներից,

բ) սույն Պայմանագրի 41-րդ հոդվածի համաձայն՝ այն պետությունների կամ Տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպություններին միանալը

հաստատելը, որոնք 1995 թ. հունիսի 16-ի դրությամբ չեն հանդիսացել Խարտիան ստորագրած կողմեր,

գ) ասոցիացիայի մասին համաձայնագրերի տեքստի շուրջ բանակցությունների անցկացմանը հավանություն տալը եւ հաստատելը կամ ընդունելը,

դ) EM, NI, G եւ B Հավելվածներում փոփոխությունների հաստատումը,

ե) սույն Պայմանագրին կից Հավելվածներում տեխնիկական

փոփոխությունների

հաստատումը, եւ

զ) D Հավելվածին (7-րդ կետ) համապատասխան՝ Գլխավոր քարտուղարի կողմից

նշանակված փորձագետների խմբի անդամների հաստատումը:

Պայմանավորվող կողմերը կգործադրեն ամեն ջանք՝ միաձայնությամբ ցանկացած այն

հարցի շուրջ համաձայնության հասնելու համար, որը, սույն Պայմանագրի համաձայն,

նրանցից պահանջվում է լուծել: Եթե համաձայնություն ձեռք չի բերվում միաձայնորեն, ապա կիրառվում են 2-ից 5-րդ կետերը:

2) Բյուջետային հարցերին վերաբերող՝ 34-րդ հոդվածի 3-րդ կետի "ե" կետում հիշատակված որոշումները ընդունվում են Պայմանավորվող կողմերի բացարձակ մեծամասնությամբ, որոնց B Հավելվածում նշված՝ գնահատված մուծումները ընդհանուր

գումարով կազմում են այնտեղ նշված գնահատված մուծումների ընդհանուր գումարի

առնվազն երեք քառորդը:

3) 34-րդ հոդվածի 7-րդ կետում հիշատակված հարցերի վերաբերյալ որոշումները

ընդունվում են Պայմանավորվող կողմերի երեք քառորդի մեծամասնությամբ:

4) Բացառությամբ 1-ին կետի "ա" ենթակետի, "գ" ենթակետում, 2-րդ եւ 3-րդ կետերում նշված դեպքերի եւ 6-րդ կետի պայմանով, սույն Պայմանագրով նախատեսված

որոշումները ընդունվում են հարտիայի համաժողովի այն նիստում ներկա եւ քվեարկող

Պայմանավորվող կողմերի ձայների երեք քառորդի մեծամասնությամբ, որտեղ լուծվում

են այդպիսի հարցերը:

5) Սույն հոդվածի նպատակներով "ներկա եւ քվեարկող Պայմանավորվող կողմեր"

նշանակում է՝ ներկա "կողմ" կամ "դեմ" քվեարկող Պայմանավորվող կողմեր՝ պայմանով, որ հարտիայի համաժողովը կարող է ընթացակարգի կանոններով որոշումներ

ընդունել այնպես, որ հնարավոր դարձնի Պայմանավորվող կողմերի այդպիսի որոշումների ընդունումը գրագրության միջոցով:

6) Բացառությամբ 2-րդ կետում նախատեսվածի, սույն հոդվածում հիշատակված ոչ

մի որոշում չի կարող վավերական լինել, եթե այդ որոշումը չունի Պայմանավորվող կողմերի պարզ մեծամասնության աջակցությունը:

7) Զվեարկության դեպքում Տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպությունն ունի սույն Պայմանագրի Պայմանավորվող կողմեր հանդիսացող իր

անդամ պետությունների թվին հավասար ձայների քանակ՝ պայմանով, որ այդպիսի

Կազմակերպությունը չպետք է ձայնի իր իրավունքն օգտագործի, եթե քվեարկում են

նրա անդամ պետությունները կամ ընդհակառակը:

8) Իր ֆինանսական պարտավորությունների կատարման դեպքում Պայմանավորվող

կողմի երկարատեւ ուշացումների դեպքում հարտիայի համաժողովը քվեարկելիս կարող է

լրիվ կամ մասնակիորեն դադարեցնել այդ Պայմանավորվող կողմի իրավունքների գործողությունը:

### ՀՈԴՎԱԾ 37

#### Ֆինանսավորման սկզբունքները

1) Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ ծածկում է հարտիայի համաժողովի եւ

ցանկացած օժանդակ մարմնի՝ նիստերին մասնակցելու իր ծախսերը:

2) հարտիայի համաժողովի եւ ցանկացած օժանդակ մարմնի՝ նիստերի անցկացման

ծախսերը դիտվում են որպես Զարտուղարության ծախսեր:

3) Զարտուղարության ծախսերը ծածկում են Պայմանավորվող կողմերը վճարումների



այն կարողունակության գնահատումներին համապատասխան, որոնք  
շարադրված են B

Յավելվածում, որի դրույթները կարող են փոփոխվել 36-րդ հոդվածի 1-ին կետի "դ"  
ենթակետին համապատասխան:

4) Արձանագրությունը բովանդակում է դրույթներ, որոնք ապահովում են, որ  
Քարտուղարության՝ այդ Արձանագրությունից բխող ծախսերը կրում են դրա  
կողմերը:

5) Խարտիայի համաժողովը կարող է լրացուցիչ կարգով կամավոր մուծումներ  
ընդունել մեկ կամ ավելի թվով Պայմանավորվող կողմերից կամ այլ աղբյուրներից:  
Այդպիսի մուծումներով ծածկվող ծախսերը չպետք է դիտվեն որպես  
Քարտուղարության  
ծախսեր 3-րդ կետի նպատակների համար:

Մաս 8  
Եզրափակիչ դրույթներ

ՀՈԴՎԱԾ 38  
Ստորագրումը

Սույն Պայմանագիրը Խարտիան ստորագրած պետությունների եւ Տնտեսական  
ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպությունների կողմից  
ստորագրվելու համար  
բացվում է Լիսաբոնում՝ 1994 թվականի դեկտեմբերի 17-ից մինչև 1995 թվականի  
հունիսի 16-ը:

ՀՈԴՎԱԾ 39  
Վավերացումը, ընդունումը կամ հաստատումը

Սույն Պայմանագիրը ենթակա է ստորագրած կողմերի վավերացմանը,  
ընդունմանը  
կամ հաստատմանը: Վավերագիրը, ընդունման կամ հաստատման մասին  
փաստաթղթերը ի պահ  
են հանձնվում Ավանդապահին:

ՀՈԴՎԱԾ 40  
Կիրառումը տարածքների նկատմամբ

1) Ցանկացած պետություն կամ Տնտեսական ինտեգրացիայի  
տարածաշրջանային  
կազմակերպություն ստորագրման, վավերացման, ընդունման, հաստատման կամ  
միանալու  
ժամանակ կարող է Ավանդապահին ի պահ հանձնած հայտարարագրերի միջոցով  
հայտարարել, որ Պայմանագիրը իր համար հանդիսանում է պարտադիր բոլոր  
այն  
տարածքների նկատմամբ, կամ դրանցից մեկի կամ մի քանիսի, որոնց  
միջազգային  
հարաբերությունների համար նա պատասխանատվություն է կրում: Այդպիսի  
հայտարարագիրն ուժի մեջ է մտնում այն ժամանակ, երբ Պայմանագիրն ուժի մեջ  
է  
մտնում այդ Պայմանավորվող կողմի համար:

2) Ցանկացած Պայմանավորվող կողմ կարող է ավելի ուշ Ավանդապահին ի պահ

հանձնած հայտարարագրի միջոցով սույն Պայմանագրին համապատասխան պարտավորություն

ստանձնել հայտարարագրում նշված այլ տարածքի նկատմամբ: Այդպիսի տարածքի

նկատմամբ Պայմանագրին ուժի մեջ է մտնում այդպիսի հայտարարագիրը Ավանդապահի

կողմից ստանալուց հետո ինսուներորդ օրը:

3) Նախորդ երկու կետերին համապատասխան արված ցանկացած հայտարարություն,

նման հայտարարությունում նշված ցանկացած տարածքի վերաբերյալ, կարող է հետ

վերցվել՝ Ավանդապահին ծանուցելու միջոցով: Հետ վերցնելը, 47-րդ հոդվածի 3-րդ կետի կիրառելիության պայմանով, ուժի մեջ է մտնում Ավանդապահի կողմից նման

ծանուցումը ստանալու ամսաթվից՝ մեկ տարին լրանալուց հետո:

4) 1-ին հոդվածի 10-րդ կետում "տարածք" սահմանումը մեկնաբանվում է որպես սույն հոդվածին համապատասխան ի պահ հանձնված ցանկացած հայտարարագրի նկատմամբ

առնչություն ունեցող սահմանում:

#### ՀՈԴՎԱԾ 41

##### Միացումը

Սույն Պայմանագիրը բաց կլինի միացման հարտիան ստորագրած պետությունների եւ

Տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպությունների համար՝ այն

օրվանից, երբ Պայմանագիրը կփակվի ստորագրման համար, հարտիայի համաժողովի

կողմից հաստատված պայմաններով: Միանալու մասին փաստաթղթերը հանձնվում են ի պահ

Ավանդապահին:

#### ՀՈԴՎԱԾ 42

##### Լրացումներ

1) Ցանկացած Պայմանավորվող կողմ սույն Պայմանագրում կարող է առաջարկել

լրացումներ:

2) Սույն Պայմանագրում ցանկացած առաջարկված լրացում Քարտուղարության կողմից Պայմանավորվող կողմերին է ուղարկվում առնվազն երեք ամիս առաջ այն օրվանից, երբ նախատեսվում է դրա ընդունումը հարտիայի համաժողովի կողմից:

3) Սույն Պայմանագրում կատարված լրացումները, որոնց տեքստերը ընդունվել են

հարտիայի համաժողովի կողմից, Քարտուղարության կողմից հաղորդվում են Ավանդապահին, որը դրանք հանձնում է բոլոր Պայմանավորվող կողմերին՝

վավերացման,

ընդունման կամ հաստատման համար:

4) Սույն Պայմանագրում լրացումներ կատարելու վավերագրերը, ընդունման կամ հաստատման փաստաթղթերը ի պահ են հանձնվում Ավանդապահին: Վավերացրած, ընդունած կամ հաստատած Պայմանավորվող կողմերի միջև լրացումները ուժի մեջ են մտնում Պայմանավորվող կողմերի առնվազն երեք քառորդի կողմից վավերացվելու, ընդունվելու կամ հաստատվելու մասին փաստաթղթերը Ավանդապահի ստանալուց հետո ինստուներորդ օրը: Դրանից հետո ցանկացած այլ Պայմանավորվող կողմի համար լրացումներն ուժի մեջ են մտնում լրացումների վավերագրի, ընդունման, կամ հաստատման մասին այդ Պայմանավորվող կողմի փաստաթղթերը ի պահ հանձնելուց հետո ինստուներորդ օրը:

#### ՀՈԴՎԱԾ 43 Ասոցիացիայի համաձայնագրերը

1) Խարտիայի համաժողովը կարող է հավանություն տալ պետությունների կամ Տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպությունների հետ կամ էլ միջազգային կազմակերպությունների հետ ասոցիացիայի մասին համաձայնագրերի վերաբերյալ բանակցությունների անցկացմանը՝ ի շահ Խարտիայի նպատակների և սկզբունքների ու սույն Պայմանագրի կամ մեկ կամ ավելի թվով Արձանագրությունների դրույթների իրականացման: 2) Ասոցիացիայի մեջ մտած պետության, Տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպության կամ միջազգային կազմակերպության հետ հաստատվող փոխհարաբերությունները, ինչպես նաև նրանց ունեցած իրավունքներն ու պարտականությունները համապատասխանում են ասոցիացիայի կոնկրետ պարտավորություններին, և յուրաքանչյուր դեպքում դրանք շարադրվում են ասոցիացիայի մասին համաձայնագրում:

#### ՀՈԴՎԱԾ 44 Ուժի մեջ մտնելը

1) Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում վավերագիրը, ընդունելու կամ հաստատելու մասին կամ դրան միանալու մասին երեսուներորդ փաստաթուղթը պետության կամ 1995 թվականի հունիսի 16-ի դրությամբ Խարտիան ստորագրած կողմ հանդիսացող Տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպության կողմից ի պահ հանձնվելու ամսաթվից հետո ինստուներորդ օրը:

2) Յուրաքանչյուր պետության կամ Տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպության համար, որոնք վավերացնում, ընդունում կամ հաստատում են սույն Պայմանագիրը, կամ դրան միանում են վավերագրի, ընդունման կամ հաստատման մասին երեսուներորդ փաստաթուղթը ի պահ հանձնելուց հետո, սույն Պայմանագիրը ուժի մեջ է մտնում այդպիսի պետության, կամ Տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպության կողմից դրա վավերագրի, ընդունման, հաստատման կամ միանալու մասին փաստաթուղթը հանձնելու ամսաթվից սկսած ինստուներորդ օրը:

3) 1-ին կետի նպատակների համար ցանկացած փաստաթուղթ, որը ի պահ է հանձնվել Տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպությանը, չպետք է համարվի որպես լրացում անդամ պետությունների կողմից Կազմակերպությանը ի պահ հանձնած փաստաթղթերին:

ՀՈԴՎԱԾ 45  
Ժամանակավոր կիրառումը

1) Յուրաքանչյուր ստորագրած կողմ համաձայնում է սույն Պայմանագիրը առաջիկայում ժամանակավորապես կիրառել մինչև 44-րդ հոդվածին համապատասխան այդպիսի ստորագրած կողմի համար Պայմանագիրը ուժի մեջ մտնելը այնքանով, որքանով ժամանակավոր կիրառումը չի հակասում իր սահմանադրությանը, օրենքների կամ օրենսդրական ակտերին:

2) ա) Չնայած 1-ին կետին՝ ցանկացած ստորագրած կողմ կարող է ստորագրելիս Ավանդապահին հանձնել հայտարարություն, որ ինքը չի կարող ընդունել ժամանակավոր կիրառումը: 1-ին կետում նշված պարտավորությունը չպետք է կիրառվի այդպիսի հայտարարություն արած ստորագրած կողմի նկատմամբ: Ցանկացած այդպիսի ստորագրած կողմ կարող է ցանկացած ժամանակ հետ վերցնել այդ հայտարարությունը Ավանդապահին հղված գրավոր ծանուցման միջոցով:

բ) Ո՛չ "ա" ենթակետին համապատասխան հայտարարություն արած կողմը, ո՛չ այն ստորագրած կողմի ներդրողները չեն կարող ժամանակավոր կիրառման առավելություններ պահանջել 1-ին կետին համապատասխան:

գ) Չնայած "ա" ենթակետին՝ "ա" ենթակետում հիշատակված հայտարարություն արած յուրաքանչյուր ստորագրած կողմ առաջիկայում ժամանակավորապես կիրառում է 7-րդ

մասը մինչև 44-րդ հոդվածին համապատասխան այդպիսի ստորագրած կողմի համար

Պայմանագրի ուժի մեջ մտնելը այն չափով, որքանով այդպիսի ժամանակավոր կիրառումը

չի հակասում նրա օրենքներին:

3) ա) Ցանկացած ստորագրած կողմ կարող է իր համար դադարեցնել սույն Պայմանագրի ժամանակավոր կիրառումը Պայմանագրի Պայմանավորվող կողմ չդառնալու

իր մտադրության մասին Ավանդապահին հղած իր գրավոր ծանուցման միջոցով: Ժամանակավոր կիրառման դադարումը ստորագրած ցանկացած կողմի համար ուժի մեջ է

մտնում այդպիսի ստորագրող կողմի գրավոր ծանուցումը Ավանդապահի ստանալու

թվականից սկսած վաթսուն օրվա ավարտին:

բ) Այն դեպքում, եթե ստորագրած կողմը դադարեցնում է ժամանակավոր կիրառումը՝ "ա" ենթակետին համապատասխան, այդպիսի ժամանակավոր կիրառման

ժամանակաշրջանում նրա տարածքում մյուս ստորագրած կողմերի ներդրողների կողմից

իրականացրած ցանկացած կապիտալ ներդրման նկատմամբ, 1-ին կետին համապատասխան,

3-րդ եւ 5-րդ մասերը կիրառելու՝ ստորագրող կողմի պարտականությունը այդ կապիտալ

ներդրումների վերաբերյալ, այնուամենայնիվ, ուժի մեջ է մնում դադարումն ուժի մեջ մտնելու թվականից սկսած քսան տարվա ընթացքում, բացառությամբ այն բանի, ինչ

այլ կերպ է նախատեսված "գ" ենթակետում:

գ) "բ" ենթակետը չպետք է կիրառվի PA Յավելվածում թվարկված ցանկացած ստորագրած կողմի նկատմամբ: Ստորագրած կողմը PA Յավելվածի ցուցակից դուրս է

հանվում Ավանդապահին իր համապատասխան խնդրանքը հանձնելու պահից:

4) Մինչև սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելը ստորագրած կողմերը պարբերաբար

հավաքվում են Խարտիայի ժամանակավոր համաժողովի, որի առաջին նիստը 5-րդ կետում

հիշատակված ժամանակավոր Զարտուղարության կողմից կգումարվի ստորագրման համար

Պայմանագրի բացման թվականից հետո ոչ ուշ, քան 180 օր անց:

5) Զարտուղարության գործառույթները ժամանակավոր հիմքի վրա Զարտուղարության

կողմից կատարվում են մինչև 44-րդ հոդվածին համապատասխան սույն Պայմանագիրը

ուժի մեջ մտնելը եւ Զարտուղարություն ստեղծելը:

6) Ստորագրած կողմերը, 1-ին կետի կամ 2-րդ կետի "գ" ենթակետի դրույթներին համապատասխան, կախված այն բանից, թե դրանցից որն է հարմար ծածկում ժամանակավորապես Զարտուղարության ծախսերն այնպես, որ եթե այդ ստորագրած

կողմերը լինեին Պայմանավորվող կողմեր՝ 37-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան:

B Յավելվածում ստորագրած կողմերի կողմից կատարված ցանկացած փոփոխություն պետք

Է դադարեցվի՝ սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից:

7) Այն Պետությունը կամ Տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպությունը, որը մինչև սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելն է միանում Պայմանագրին՝ 41-րդ հոդվածին համապատասխան, մինչև Պայմանագիրն ուժի մեջ

մտնելը իրավունք ունի եւ ստանձնում է ստորագրած կողմի պարտավորություններ՝

սույն հոդվածին համապատասխան:

#### ՀՈԴՎԱԾ 46 Վերապահումները

Սույն Պայմանագրի վերաբերյալ չի կարող արվել ոչ մի վերապահում:

#### ՀՈԴՎԱԾ 47 Պայմանագրից դուրս գալը

1) Ցանկացած Պայմանավորվող կողմի համար սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելու թվականից սկսած հինգ տարին լրանալուց հետո ցանկացած ժամանակ այդ

Պայմանավորվող կողմը կարող է Ավանդապահին գրավոր ծանուցում ուղարկել Պայմանագրից իր դուրս գալու մասին:

2) Ցանկացած այդպիսի դուրս գալը ուժի մեջ է մտնում ծանուցումը Ավանդապահի

ստանալու թվականից սկսած մեկ տարին ավարտվելուց հետո կամ ավելի ուշ, ինչը

կարող է նշվել դուրս գալու մասին ծանուցման մեջ:

3) Սույն Պայմանագրի դրույթները կշարունակվեն կիրառվել Պայմանավորվող կողմի տարածքում մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների կողմից կատարված

ներդրումների նկատմամբ կամ այլ Պայմանավորվող կողմի տարածքում այդ Պայմանավորվող կողմի ներդրողների կողմից կատարված ներդրումների նկատմամբ

մինչև այն օրը, երբ այդ Պայմանավորվող կողմի Պայմանագրից դուրս գալը գործում

է նման ամսաթվից 20 տարվա համար:

4) Բոլոր Արձանագրությունները, որոնց կողմ է հանդիսանում Պայմանավորվող կողմը, այդ Պայմանավորվող կողմի համար դադարում են ուժի մեջ լինել սույն Պայմանագրից նրա դուրս գալու ամսաթվից:

#### ՀՈԴՎԱԾ 48 Հավելվածների եւ Որոշումների կարգավիճակը

Սույն Պայմանագրին կից Հավելվածները եւ Որոշումները, որոնք սահմանված են

1994 թվականի դեկտեմբերի 17-ին Լիսաբոնում ստորագրված Եվրոպական Էներգետիկ

խարտիայի Եզրափակիչ ակտին կից 2-րդ Հավելվածում, հանդիսանում են Պայմանագրի

անբաժանելի մասը:

ՀՈԴՎԱԾ 49  
Ավանդապահը

Պորտուգալիայի Հանրապետության Կառավարությունը հանդիսանում է սույն Պայմանագրի Ավանդապահ:

ՀՈԴՎԱԾ 50  
Նույնական տեքստերը

Ի հավաստումն որի՝ ներքոստորագրյալները, դրա համար լինելով պատշաճորեն լիազորված, ստորագրեցին սույն Պայմանագիրը մեկ բնօրինակով՝ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն, ռուսերեն եւ իսպաներեն. ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են, որոնք ի պահ կհանձնվեն Պորտուգալիայի Հանրապետության Կառավարությանը:  
Կատարված է Լիսաբոն քաղաքում 1994 թվականի դեկտեմբերի 17-ին:

-----  
ԻՐՏԵԿ - շարունակությունը հաջորդ մասերում

ԷՆԵՐԳԵՏԻԿ ԽԱՐՏԻԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
(3-րդ մաս)

ԷՆԵՐԳԵՏԻԿ ԽԱՐՏԻԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ ԿԻՑ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

1. Հավելված EM

Էներգետիկ նյութեր եւ արտադրանք  
(1-ին հոդվածի 4-րդ կետին համապատասխան)

Միջուկային Էներգիա 26.12. Ուրանի եւ թորիումի հանքաքարեր եւ կոնցենտրատներ

26.12.10. Ուրանի հանքաքարեր եւ կոնցենտրատներ

26.12.20. Թորիումի հանքաքարեր եւ կոնցենտրատներ

28.44. Քիմիական ռադիոակտիվ տարրեր եւ ռադիոակտիվ իզոտոպներ (ներառյալ անջատվող եւ վերականգնող քիմիական տարրերը եւ իզոտոպները), դրանց միացությունները, խառնուրդները եւ այդ արտադրանքը պարունակող մնացուկները

28.44.10. Բնական ուրանը եւ դրա միացությունները

28.44.20. Ուրան-235-ով հարստացված ուրանը եւ դրա միացությունները, պլուտոնիումը եւ դրա միացությունները

28.44.30. Ուրան-235-ով տրոհված ուրանը եւ դրա միացությունները: Թորիումը եւ դրա միացությունները

28.44.40. Ռադիոակտիվ տարրեր, իզոտոպներ եւ միացություններ, բացի 28.44.10, 28.44.20 կամ 28.44.30 ներդասավորություններում նշվածներից

28.44.50 Միջուկային ռեակտորների օգտագործված (աշխատանքն ավարտած) վառելիքային տարրերը (ՏՎԵԼ-ները)

28.45.10. Ծանր ջուրը (դեյտերիումի օքսիդ)

Քարածուխ,  
բնական գազ,  
նավթ եւ  
նավթամթերքներ,  
էլեկտրաէներգիա

27.01. Քարածուխ, բրիկետներ, օկատիչներ եւ ամուր վառելիքին համանման այն աիղները, որոնք բնական քարածխի տարրեր են

27.02. Լիզնիտ՝ շեղաքարացված կամ չշեղաքարացված գորշածուխ, բացի գիշերաքարից

27.03. Շեղաքարացված կամ չշեղաքարացված տորֆ (ներառյալ դրա փշրանքը)

27.04. Քարածխի, լիզնիտի կամ տորֆի շեղաքարացված կամ չշեղաքարացված կոքս եւ կիսակոքս, թորած ածուխ

27.05. Քարածխային գազ, ջրային, գեներատորական եւ համանման գազեր, բացի նավթային գազից եւ մյուս գազակերպ ածխաջրածիններից

27.06. Քարածխային, լիզնիտային, տորֆային ձյուներ եւ հանքային այլ ձյուներ՝ խոնավազրկված կամ խոնավությունից չզրկված, կամ մասամբ թորված մթերքներ՝ ներառյալ վերականգնվածները



- 27.07. Յուղեր եւ քարածխային ձյութից՝ բարձր ջերմության տակ զտված մթերքներ, համանման այն մթերքները, որոնց մեջ հոտ ունեցող բաղկացուցիչ մասերի զանգվածը գերազանցում է անհոտ զանգվածին (օրինակ՝ բենզոլ, տոլուոլ, քսիլոլ, նավթալին, հոտ ունեցող այլ ածխաջրածինների խառնուրդներ, ֆենոլներ, կրեոզոտական յուղեր եւ այլն)
- 27.08. Քարածխային ձյութից կամ հանքային այլ ձյութերից ստացված կուպր եւ կուպրի կոքս
- 27.09. Հանքածյութային հանքաշերտերից ստացված հում նավթ եւ հում նավթամթերքներ
- 27.10. Հանքածյութային հանքաշերտերից ստացված նավթ եւ նավթամթերքներ (բացառությամբ հում նավթի եւ նավթամթերքների)
- 27.11. Նավթային գազեր եւ գազակերպ այլ ածխաջրածիններ

Հեղուկ վիճակում

- բնական գազ
- պրոպան
- բուտան
- էթիլեն, պրոպիլեն, բութիլեն եւ բուտադիոն (27.11.14)
- այլ

Գազային վիճակում

- բնական գազ
- այլ

27.13. Նավթի կոքս, նավթի բիտում եւ նավթի վերամշակումից առաջացած այլ մնացուկներ, դրանց թվում՝ հանքածյութային հանքաշերտերից ստացվածները:

27.14. Բնական բիտում եւ ասֆալտ, հանքածյութային կամ նավթաբեր թերթաքարեր

եւ բիտումինացված ավազ, ասֆալտիտներ եւ ասֆալտային հանքաշերտեր:

27.15. Բնական ասֆալտի, բնական բիտումի, նավթային ֆիտումի, հանքային ձյութերի եւ հանքային ձյութերի (օրինակ՝ բիտումինացված քսուլներ, ասֆալտային

ճանապարհածածկույթներ) կուպրի վրա հիմնված բիտումինացված խառնուրդներ:

27.16. Էլեկտրաէներգիա

Էներգիայի այլ տեսակներ

44.01.10. Վառելափայտ ծառաբնի կտորների, ծղանների, տաշեղների, ցախի, կապոցների տեսքով կամ համանման տեսքերով:

44.02. Բնափայտի շեղաքարացված կամ չշեղաքարացված ածուխ (ներառյալ կեղեւներից կամ ընկույզներից ստացված ածուխը):

## 2. Հավելված N I

"Էներգետիկ հատվածում տնտեսական գործունեության" սահմանման նկատմամբ

չկիրառվող Էներգետիկ նյութեր՝ արտադրանք (1-ին հոդվածի 5-րդ կետին համապատասխան)

27.07. Յուղեր եւ քարածխային ձյութից՝ բարձր ջերմության տակ գտված մթերքներ, համանման այն մթերքները, որոնց մեջ հոտ ունեցող բաղկացուցիչ մասերի

զանգվածը գերազանցում է անհոտ զանգվածին (օրինակ՝ բենզոլ, տոլուոլ, քսիլոլ, նավթալին, հոտ ունեցող այլ ածխաջրածինների խառնուրդներ, ֆենոլներ, կրեոզոտական

յուղեր եւ այլն):

44.01.10. Վառելափայտ ծառաբնի կտորների, ծղանների, տաշեղների, ցախի կապոցների տեսքով կամ համանման այլ տեսքով:

44.01. Բնափայտի շեղաքարացված կամ չշեղաքարացված ածուխ (ներառյալ կեղեւներից կամ ընկույզից ստացված ածուխը):

## 3. Հավելված TRM

Ծանուցում՝ աստիճանական վերացում (USH) (5-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան)

1) Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ Քարտուղարությանը ծանուցում է առեւտրի հետ կապված այն բոլոր ներդրումային միջոցների մասին, որոնք նա կիրառում է, եւ որոնք 5-րդ հոդվածի դրույթներին չեն համապատասխանում՝

ա) սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո 90 օրվա ընթացքում, եթե Պայմանավորվող կողմը հանդիսանում է ԳԱՏՏ-ի կողմ, կամ

բ) սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո 12 ամսվա ընթացքում, եթե Պայմանավորվող կողմը չի հանդիսանում ԳԱՏՏ-ի կողմ:

Առեւտրի հետ կապված ընդհանուր կամ կոնկրետ կիրառման այդպիսի ներդրումային

միջոցների մասին ծանուցումն արվում է դրանց հիմնական գծերի

նկարագրության հետ

միաժամանակ:

2) Այն դեպքում, եթե առեւտրի հետ կապված ներդրումային միջոցները կիրառվում

են իշխանությունների հայեցողությամբ, ապա ծանուցում է արվում այդպիսի յուրաքանչյուր կոնկրետ կիրառման մասին: Հարկ չկա բացահայտելու այնպիսի տեղեկատվություն, որը կարող է վնաս հասցնել կոնկրետ ձեռնարկությունների առեւտրային օրինական շահերին:

3) Առեւտրի հետ կապված այն ներդրումային միջոցները, որոնց մասին ծանուցվում է 1-ին կետին համապատասխան, յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ

վերացնում է՝

ա) սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելու թվականից սկսած՝ երկու տարվա ընթացքում, եթե Պայմանավորվող կողմը հանդիսանում է ԳԱՏՏ-ի կողմ, կամ

բ) սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելու թվականից սկսած՝ երեք տարվա ընթացքում, եթե Պայմանավորվող կողմը չի հանդիսանում ԳԱՏՏ-ի կողմ:

4) 3-րդ կետում հիշատակված կիրառելի ժամանակաշրջանի ընթացքում Պայմանավորվող կողմը չի փոփոխում 1-ին կետին համապատասխան ծանուցում արված՝

առեւտրի հետ կապված ոչ մի ներդրումային միջոցի այն պայմանները, որոնք սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելու թվականի դրությամբ գերակշռում են այն պայմանների

համեմատությամբ, որոնք կմեծացնեն սույն Պայմանագրի 5-րդ հոդվածի դրույթներին

անհամապատասխան լինելու աստիճանը:

5) Չնայած 4-րդ կետի դրույթներին՝ գոյություն ունեցող այն ձեռնարկություններին աննպաստ պայմանների մեջ չդնելու համար, որոնք նկատմամբ

կիրառվում է 1-ին կետին համապատասխան ծանուցում արված առեւտրի հետ կապված

ներդրումային միջոց, Պայմանավորվող կողմը կարող է աստիճանական վերացման

ժամանակաշրջանում առեւտրի հետ կապված այդպիսի միջոց կիրառել նոր կապիտալ

ներդրումների նկատմամբ, եթե՝

ա) այդպիսի կապիտալ ներդրումների արտադրանքը համանման է գոյություն ունեցող ձեռնարկությունների արտադրանքին, եւ

բ) այդպիսի կիրառումն անհրաժեշտ է՝ խուսափելու համար նոր կապիտալ ներդրման

եւ արդեն գոյություն ունեցող ձեռնարկությունների միջեւ մրցակցության պայմաններն աղավաղելուց:

Նոր կապիտալ ներդրման նկատմամբ այս ձեռով կիրառվող առեւտրի հետ կապված

ներդրումային ցանկացած միջոցի մասին ծանուցվում է Զարտուղարությանը: Առեւտրի

հետ կապված այդպիսի ներդրումային միջոցի պայմանները իրենց ազդեցությամբ, որով

դրանք ներգործում են մրցակցության վրա, համարժեք կլինեն գոյություն ունեցող ձեռնարկությունների նկատմամբ կիրառվող պայմաններին, եւ դրանց գործողությունը

կդադարեցվի միաժամանակ:

6) Այն դեպքում, երբ պետությունը կամ Տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպությունը սույն Պայմանագրին է միանում այն բանից

հետո, երբ Պայմանագիրն ուժի մեջ է մտել՝

ա) 1-ին եւ 2-րդ կետերում հիշատակված ծանուցումը պետք է արվի մինչեւ 1-ին կետում ժամանակի առումով կիրառելի վերջին թվականը կամ միանալու մասին փաստաթղթերը ի պահ հանձնելու թվականը, եւ

բ) աստիճանական վերացման ժամանակաշրջանի ավարտը կլինի, ժամանակի առումով,

3-րդ կետում կիրառելի թվականից առավել ուշ թվականը կամ այդ պետության կամ

Տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպության համար  
Պայմանագրի  
ուժի մեջ մտնելու թվականը:

#### 4. ՀԱՎԵԼՎԱԾ N

Պայմանավորվող կողմերի ցանկ, որոնց մասնակցությունը, տարանցումը  
պահանջում է առնվազն երեք առանձին տարածք (7-րդ հոդվածի 10-րդ կետի  
"ա" ենթակետին համապատասխան)

1. Կանադա եւ Ամերիկայի Միացյալ Նահանգներ:

#### 5. ՀԱՎԵԼՎԱԾ VC

Պայմանավորվող կողմերի ցանկ, որոնք կամավոր ստանձնել են  
պարտավորություններ 10-րդ հոդվածի 3-րդ կետի վերաբերյալ (10-րդ  
հոդվածի 6-րդ կետին համապատասխան)

#### 6. ՀԱՎԵԼՎԱԾ ID

Պայմանավորվող կողմերի ցանկ, որոնք չեն թույլատրում ներդրողի կողմից  
միեւնույն վեճը կրկնակի ներկայացնել միջազգային արբիտրաժ դրա առավել  
ուշ փուլում՝ ըստ 26-րդ հոդվածի  
(26-րդ հոդվածի 3-րդ կետի "բ" ենթակետի 1-ին պարբերության  
համապատասխան)

- |                                |                             |
|--------------------------------|-----------------------------|
| 1. Ադրբեջան                    | 13. Հունգարիա               |
| 2. Ամերիկայի Միացյալ Նահանգներ | 14. Հունաստան               |
| 3. Ավստրալիա                   | 15. Ղազախստան               |
| 4. Բուլղարիա                   | 16. Պորտուգալիա             |
| 5. Եվրոպական համայնքներ        | 17. Ռումինիա                |
| 6. Իռլանդիա                    | 18. Ռուսաստանի Դաշնություն  |
| 7. Իսպանիա                     | 19. Չեխիայի Հանրապետություն |
| 8. Իտալիա                      | 20. Սլովենիա                |
| 9. Խորվաթիա                    | 21. Ճապոնիա                 |
| 10. Լեհաստան                   | 22. Նորվեգիա                |
| 11. Կանադա                     | 23. Շվեդիա                  |
| 12. Կիպրոս                     | 24. Ֆինլանդիա               |

#### 7. ՀԱՎԵԼՎԱԾ IA

Պայմանավորվող կողմերի ցանկ, որոնք չեն թույլատրում 10-րդ հոդվածի  
1-ին կետի վերջին նախադասությանը վերաբերող վեճը ներդրողի կողմից կամ  
Պայմանավորվող կողմի կողմից ներկայացնել միջազգային արբիտրաժ

(26-րդ հոդվածի 3-րդ կետի "գ" ենթակետին եւ 27-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան)

1. Ավստրալիա
2. Կանադա
3. Հունգարիա
4. Նորվեգիա

#### 8. ՀԱՎԵԼՎԱԾ Ք

Վեճի լուծման ենթազգային հատուկ ընթացակարգ  
(27-րդ հոդվածի 3-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան)

#### Մաս 1

- ա) Կանադա
- բ) Ավստրալիա

#### Մաս 2

- 1) Այն դեպքում, երբ վճիռ կայացնելիս արբիտրաժային դատարանը գտնում է, որ տարածաշրջանային կամ տեղական կառավարության կամ Պայմանավորվող կողմի (այսուհետ՝ Պատասխանատու կողմ) միջոցը չի համապատասխանում սույն Պայմանագրի դրույթին, Պատասխանատու կողմը ձեռնարկում է ընդունելի միջոցներ, որոնք կարող են լինել նրա տրամադրության տակ, ապահովելու համար այդ միջոցի նկատմամբ Պայմանագրի պահպանումը:
  - 2) Պատասխանատու կողմը որոշում կայացնելու օրվանից հետո 30 օրվա ընթացքում Քարտուղարությանը ներկայացնում է գրավոր ծանուցում այդ միջոցի վերաբերյալ սույն Պայմանագրի պահպանման ապահովման ուղղությամբ իր մտադրությունների մասին:  
Քարտուղարությունը ամենամոտ իրական հնարավորության դեպքում այդ ծանուցումը ներկայացնում է Խարտիայի համաժողովին ոչ ուշ, քան Խարտիայի համաժողովի կողմից ծանուցումը ստանալուն հաջորդող նիստը: Եթե գործնական առումով հնարավոր չէ պահպանումն ապահովել անհապաղ, ապա Պատասխանատու կողմը կունենա ընդունելի ժամանակաշրջան այդ բանն անելու համար: Ընդունելի ժամանակը կհամաձայնեցվի վեճի երկու կողմերի միջև: Այն դեպքում, եթե այդպիսի համաձայնություն ձեռք չի բերված, Պատասխանատու կողմը առաջարկում է ընդունելի ժամանակաշրջան՝ Խարտիայի

համաժողովի հավանության համար:

3) Այն դեպքում, երբ Պատասխանատու կողմը չի կարող ընդունելի ժամանակաշրջանում ապահովել այդ միջոցի վերաբերյալ պահպանումը, այդ կողմը, վեճի

կողմ հանդիսացող մյուս Պայմանավորվող կողմի (այսուհետ՝ Վնաս կրող կողմ) խնդրանքով, ձգտում է Վնաս կրող կողմի հետ համաձայնության գալ վեճի լուծումը

փոխադարձաբար բավարարող համապատասխան փոխհատուցման շուրջ:

4) Եթե Վնաս կրող կողմի դիմելու օրից 20 օրվա ընթացքում ձեռք չի բերվում համաձայնություն բավարարող փոխհատուցման շուրջ, Վնաս կրող կողմը կարող է,

Խարտիայի համաժողովի թույլտվությամբ, սույն Պայմանագրին

համապատասխան՝ առկախել

իր այնպիսի պարտավորությունների կատարումը Պատասխանատու կողմի նկատմամբ, որոնք

նա համարում է համարժեք այն պարտավորություններին, որոնցից զրկվել է նշված

միջոցառման բերումով, մինչև այն ժամանակ, երբ Պայմանավորվող կողմերը համաձայնության կհասնեն վեճի լուծման շուրջ, կամ երբ անհամապատասխան միջոցը

կհամապատասխանեցվի սույն Պայմանագրին:

5) Զննության առնելիս այն, թե ինչ պարտավորություններ պետք է առկախել, Վնաս կրող կողմը կիրառում է հետևյալ սկզբունքներն ու ընթացակարգերը.

ա) Վնաս կրող կողմն առաջին հերթին ձգտում է պարտավորություններն առկախել

սույն Պայմանագրի այն մասով, որի վերաբերյալ արբիտրաժային դատարանը բացահայտել

է խախտում,

բ) եթե Վնաս կրող կողմը գտնում է, որ սույն Պայմանագրի այդ մասով պարտավորությունների առկախումը իրական եւ արդյունավետ չէ, նա կարող է ձգտել

պարտավորություններն առկախել սույն Պայմանագրի ուրիշ մասերով: Եթե Վնաս կրող

կողմը որոշում է ընդունում թույլտվություն խնդրել՝ առկախելու

պարտավորությունները այդ ենթակետին համապատասխան, ապա նա թույլտվության

վերաբերյալ՝ Խարտիայի համաժողովին հղած իր խնդրանքի մեջ շարադրում է դրա

պատճառները:

6) Պատասխանատու կողմի՝ Վնաս կրող կողմին եւ որոշում կայացրած արբիտրաժային դատարանի նախագահին ուղարկած գրավոր հարցման հիման վրա դատարանը

որոշում է, թե Վնաս կրող կողմի առկախած պարտավորությունների աստիճանը չափից

ավելի է, թե ոչ եւ, եթե այդպես է, ապա՝ որքանով: Եթե արբիտրաժային դատարանը չի

կարող վերստին գումարվել, ապա այդպիսի որոշում պետք է կայացվի գլխավոր Զարտուղարի նշանակած մեկ կամ ավելի թվով արբիտրների կողմից: Սույն կետին

համապատասխան որոշումները պետք է կայացվեն, արբիտրաժային դատարան դիմելու կամ

Գլխավոր քարտուղարի նշանակումների օրից սկսած, 60 օրվա ընթացքում:

Պարտավորությունները չեն առկախվի մինչև այն որոշումը, որը հանդիսանում է վերջնական եւ պարտադիր:

7) Պատասխանատու կողմի վերաբերյալ ցանկացած պարտավորություն առկախելիս  
Վնաս կրող կողմը գործադրում է բոլոր ջանքերը, որպեսզի անսպաստ կերպով չներագրի  
սույն Պայմանագրով հատկացված ցանկացած այլ Պայմանավորվող կողմի իրավունքների վրա:

#### 9. ՀԱՎԵԼՎԱԾ Գ

ԳԱՏՏ-ի եւ դրա հետ կապված Փաստաթղթերի դրույթների կիրառումը կարգավորող բացառումները եւ կանոնները  
(29-րդ հոդվածի 2-րդ կետի "ա" ենթակետին համապատասխան)

1) 1947 թվականի՝ ԳԱՏՏ-ի եւ դրա հետ կապված Փաստաթղթերի հետեւյալ դրույթները չեն կիրառվի 29-րդ հոդվածի 2.ա կետով՝  
ա) Սակագների եւ առեւտրի գլխավոր համաձայնագիր  
II. Չիջումների ցուցակներ ու Սակագների եւ առեւտրի գլխավոր համաձայնագրին կից ցուցակներ)

IV. Կինոֆիլմերին վերաբերող Հատուկ պայմաններ

XV. Տարադրամի փոխանակման միջոցառումներ

XVIII. Կառավարական օգնություն տնտեսական զարգացմանը

XXII. Խորհրդակցություններ

XXIII. Օգուտների վերացում կամ կրճատում

XXV. Պայմանավորված կողմերի համատեղ գործողություններ

XXVI. Ընդունումը, ուժի մեջ մտնելը եւ գրանցումը

XXVII. Գործողության առկախում կամ զիջումների բացառում

XXVIII. Ցուցակների փոփոխություն

XXVIII. bis բանակցություններ սակագների վերաբերյալ

XXIX. Սույն համաձայնագրի առնչությունը Հավանայի Կանոնադրությանը

XXX. Ուղղումներ

XXXI. Համաձայնագրից դուրս գալը

XXXII. Պայմանավորվող կողմեր

XXXIII. Միանալը

XXXV. Համաձայնագրի չկիրառում առանձին Պայմանավորվող կողմերի միջև

XXXVI. Սկզբունքներ եւ նպատակներ

XXXVII. Պարտավորություններ

XXXVIII. Համատեղ գործողություններ

Հավելված - II XXVI հոդվածին վերաբերող

Հավելված I. Պարզաբանող ծանոթություններ եւ լրացումներ (որոնք վերաբերում

են ԳԱՏՏ-ի վերոհիշյալ հոդվածներին)

Չարգացման նպատակներով պաշտպանական գործողություն, փոխըմբռնում ծանուցման,

խորհրդակցությունների, վեճերի լուծման եւ դիտարկման վերաբերյալ:

բ) ԳԱՏՏ-ի հետ կապված Փաստաթղթեր

1) Համաձայնագիր Առեւտրի տեխնիկական խոչընդոտների վերաբերյալ  
(Չափանիշների օրենսգիրք)

Ներածություն (1-ին, 8-րդ, 9-րդ կետեր)

1.3. Ընդհանուր դրույթներ

2.6.4. Կենտրոնական կառավարական մարմինների կողմից տեխնիկական  
նորմերի եւ

չափանիշների պատրաստումը, ընդունումը եւ կիրառումը

10.6. Տեղեկատվություն տեխնիկական նորմերի, չափանիշների եւ  
հավաստագրերի

համակարգերի մասին

11. Տեխնիկական աջակցությունը մյուս կողմերին

12. Հատուկ եւ տարբերակված ռեժիմ զարգացող երկրների հետ

13. Առեւտրում տեխնիկական խոչընդոտների Կոմիտե

14. Խորհրդակցություններ եւ վեճերի լուծում

15. Եզրափակիչ դրույթներ (բացի 15.5-ից եւ 15.13-րդից)

Հավելված 2. Տեխնիկական փորձագետների խմբեր

Հավելված 3. Փորձագետների հանձնաժողովներ

2) Պետական գնումների համաձայնագիր

3) Համաձայնագիր VI, XVI եւ XXIII հոդվածների մեկնաբանման եւ կիրառման  
մասին (Նպաստներ եւ փոխհատուցման միջոցներ)

10. Մի քանի հումքային ապրանքների արտահանման նպաստներ

12. Խորհրդակցություններ

13. Վեճերի լուծում, լուծում եւ լուծված պատասխան միջոցներ

14. Չարգացող երկրներ

16. Նպաստների եւ փոխհատուցման միջոցների Կոմիտե

17. Հաշտեցում

18. Վեճերի լուծում

19.2 Ընդունումը եւ միանալը

19.4 Ուժի մեջ մտնելը

19.5. ա) Ազգային օրենսդրություն

19.6. Վերանայում

19.7. Ուղղումներ

19.8. Դուրս գալը

19.9. Սույն Պայմանագրի չկիրառումը այն ստորագրած առանձին կողմերի  
միջեւ

19.11. Զարտուղարություն

19.12. Ի պահ հանձնելը

19.13. Գրանցում

4) VII հոդվածի կիրառման համաձայնագիր (Մաքսային գնահատում)

1.2. բ) IV) Գործարքի արժեք

11.1 Մաքսային արժեքի որոշում

14. Հավելվածների կիրառում (երկրորդ նախադասություն)

18. Սահմանակարգերը (Մաքսային գնահատման Կոմիտե)

19. Խորհրդակցություններ

20. Վեճերի լուծում

21. Հատուկ եւ տարբերակված ռեժիմ զարգացող երկրների համար

22. Ընդունումը եւ միանալը

24. Ուժի մեջ մտնելը

25.1 Ազգային օրենսդրություն

26. Վերանայում

27. Ուղղումներ

28. Համաձայնագրից դուրս գալը

29. Զարտուղարություն



30. Ի պահ հանձնելը

31. Քրանցում

Հավելված II. Մաքսային գնահատման Տեխնիկական կոմիտե

Հավելված III. ad hoc փորձագետների խմբեր

VII հոդվածի կիրառման մասին՝ համաձայնագրին կից Արձանագրություն (բացի 1.7-ի եւ 1.8-ի՝ համապատասխանության մասին անհրաժեշտ ներածական տեսքով)

5) Համաձայնագիր արտահանության արտոնագրման ընթացակարգերի մասին

1.4. Ընդհանուր դրույթներ (վերջին նախադասություն)

2.2. Արտահանման ինքնաշխատ արտոնագրում

(Ծանոթություն 2)

4. Խորհրդակցություններ եւ վեճերի լուծում

5. Եզրափակիչ դրույթներ (բացի 2-րդ կետից)

6) Համաձայնագիր VI հոդվածի կիրառման մասին (Հակադեմպինգային

օրենսգիրք)

13. Չարգացող երկրներ

14. Հակադեմպինգային պրակտիկայի Կոմիտե

15. Խորհրդակցություններ, վեճերի լուծում եւ լուծում

16. Եզրափակիչ դրույթներ (բացի 1-ին եւ 3-րդ կետերի)

7) Պայմանավորվածություն տավարի մսի վերաբերյալ

8) Միջազգային պայմանավորվածություն կաթնամթերքի վերաբերյալ

9) Համաձայնագիր քաղաքացիական ավիատեխնիկայի առևտրի վերաբերյալ

10) Հռչակագիր վճարման բալանսի հավասարակշռության ապահովման

նպատակով

կիրառվող միջոցների մասին

գ) ՉԱՏՏ-ի եւ դրա հետ կապված Փաստաթղթերի մյուս բոլոր դրույթները, որոնք վերաբերում են՝

1. տնտեսական զարգացմանը ցուցաբերվող կառավարական օգնությանը եւ

զարգացող

երկրների վերաբերյալ ռեժիմին, բացի տարբերակված եւ առավել արտոնյալ ռեժիմ

տրամադրելու մասին, զարգացող երկրների փոխադարձության եւ առավել լրիվ մասնակցության մասին 1979 թ. նոյեմբերի 28-ի L (4903) Որոշման 1-ից 4-րդ կետերից,

2. կոմիտեների, մասնագետների եւ մյուս օժանդակ մարմինների հիմնադրմանը եւ

գործելուն,

3. ստորագրմանը, միանալուն, ուժի մեջ մտնելուն, դուրս գալուն, ի պահ հանձնելուն եւ գրանցմանը,

դ) բոլոր համաձայնագրերը, պայմանավորվածությունները, որոշումները, փոխըմբռնումները կամ մյուս համատեղ միջոցները՝ "ա" եւ "գ" ենթակետերում նշված

դրույթներին համապատասխան:

2) Պայմանավորվող կողմերը "Վճարային բալանսի հավասարակշռվածության ապահովման նպատակով ընդունվող առևտրային միջոցների" հռչակագրի դրույթները

ՉԱՏՏ-ի կողմեր չհանդիսացող Պայմանավորվող կողմերի ընդունած միջոցների նկատմամբ

կկիրառեն այն չափով, որքանով դա բավարար է սույն Պայմանագրի մյուս

դրույթների

համատեքստում:

3) 29-րդ հոդվածի 2-րդ կետի "ա" ենթակետի արդյունքում կիրառելի դարձած դրույթներով պահանջվող ծանուցումների վերաբերյալ՝

ա) ԳԱՏՏ-ի եւ դրա հետ կապված Փաստաթղթերի կողմեր չհանդիսացող Պայմանավորվող կողմերը իրենց ծանուցումները հղում են Զարտուղարությանը: Զարտուղարությանը հասցեագրված ծանուցումները կկազմվեն սույն Պայմանագրի

նույնական լեզուներից մեկով: Միայն ուղեկցող փաստաթղթերը կարող են լինել Պայմանավորվող կողմի լեզվով:

բ) Այդպիսի պահանջները չեն կիրառվում նաեւ ԳԱՏՏ-ի եւ դրա հետ կապված Փաստաթղթերի կողմեր հանդիսացող Պայմանավորվող կողմերի նկատմամբ, որոնք

ծանուցումների վերաբերյալ ունեն իրենց սեփական պահանջները:

4) Միջուկային նյութերի առետուրը կարող է կարգավորվել Եվրոպական Էներգետիկ խարտիայի համաժողովի եզրափակիչ ակտում շարադրվող՝ տվյալ կետի

վերաբերյալ Յուրաքանչյուր հիշատակված համաձայնագրերով:

#### 10. ՀԱՎԵԼՎԱԾ TFU

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության նախկին մասեր

կազմող պետությունների միջեւ առետուրական համաձայնագրին վերաբերող դրույթներ

(29-րդ հոդվածի 2-րդ կետի "բ" ենթակետին համապատասխան)

1) 29-րդ հոդվածի 2-րդ կետի "բ" ենթակետում հիշատակված ցանկացած համաձայնագրի մասին գրավոր ծանուցվում է Զարտուղարությունը այդպիսի համաձայնագրի այն բոլոր կողմերի միջոցով կամ բոլոր կողմերի անունից, որոնք սույն Պայմանագիրը ստորագրում են կամ միանում են նրան.

ա) Ուժի մեջ գտնվող այն համաձայնագրի առնչությամբ, որը երեք ամիս հետո այն

ամսաթվից, երբ այդ կողմերից առաջինը ստորագրում է Պայմանագիրը կամ ի պահ է

հանձնում դրան միանալու մասին ակտը ոչ ուշ, քան ստորագրման կամ ի պահ հանձնելու այդպիսի թվականից հետո վեց ամիս անց, եւ

բ) Այն համաձայնագրի վերաբերյալ, որն ուժի մեջ է մտնում "ա" ենթակետում հիշատակված ամսաթվից հետո եկող ամսաթվին՝ դրա ուժի մեջ մտնելուց առաջ բավարար

ժամանակահատվածում՝ այն հաշվով, որ Պայմանագիրը ստորագրած կամ դրան միացած

մյուս պետությունները կամ Տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպությունները (այսուհետ՝ շահագրգիռ կողմեր) ընդունելի

հնարավորություն

ունենան մինչեւ դրա ուժի մեջ մտնելը քննության առնել համաձայնագիրը եւ դրա նկատմամբ իրենց մոտեցումը ներկայացնել համաձայնագրի կողմերին եւ

Խարտիայի

համաժողովին:

2) Ծանուցումը ընդգրկում է՝

ա) համաձայնագրի բնօրինակ տեքստերի պատճենները բոլոր այն լեզուներով, որոնցով ստորագրված է.

բ) EM Հավելվածում ընդգրկված առարկաների վկայակոչման միջոցով այն

Էներգետիկ կյուբերի եւ արտադրանքի նկարագրությունը, որոնց նկատմամբ կիրառվում

է համաձայնագիրը.

գ) 29-րդ հոդվածի 2-րդ կետի "ա" ենթակետի բերումով՝ ԳԱՏՏ-ի եւ դրա հետ կապված Փաստաթղթերի կիրառելի դարձված յուրաքանչյուր համապատասխան դրույթի

համար առանձին-առանձին, որոնք համաձայնագրի կողմերի համար անհնարին կամ ոչ

Եական են դարձնում այդ դրույթին լրիվ համապատասխանությունը.

դ) այն կոնկրետ միջոցները, որոնք պետք է ձեռնարկի համաձայնագրի յուրաքանչյուր կողմ "գ" ենթակետում հիշատակված հանգամանքների վերաբերյալ.

ե) համաձայնագրի անհամապատասխան դրույթների հետեւողական կրճատման եւ

վերջնական վերացման հասնելու՝ կողմերի ծրագրերի նկարագրությունը:

3. Համաձայնագրի կողմերը, որի մասին ծանուցում է արված, 1-ին կետին համապատասխան, Շահագրգիռ կողմերին տրամադրում են ընդունելի հնարավորություն

նրանց հետ անցկացնելու խորհրդակցություններ այդպիսի համաձայնագրի վերաբերյալ,

եւ քննության է առնվում դրանց առաջադրումները: Ցանկացած Շահագրգիռ կողմի

հարցումով համաձայնագիրը քննության է առնվում Խարտիայի համաժողովի կողմից, որը

կարող է հանձնարարականներ ընդունել այդպիսի համաձայնագրի վերաբերյալ:

4. Խարտիայի համաժողովը պարբերաբար քննության է առնում այն համաձայնագրերի

կատարումը, որոնց մասին ծանուցում է արված 1-ին կետի համաձայն, եւ 29-րդ հոդվածի 2.ա կետի բերումով՝ կիրառելի դարձած դրանց այն դրույթների վերացման

ուղղությամբ առաջխաղացումը, որոնք չեն համապատասխանում ԳԱՏՏ-ի եւ դրա հետ

կապված Փաստաթղթերի դրույթներին: Ցանկացած Շահագրգիռ կողմի խնդրանքով Խարտիայի

համաժողովը կարող է ընդունել հանձնարարականներ այդպիսի համաձայնագրի վերաբերյալ:

5. Անհրաժեշտության դեպքում, կարող է թույլատրվել, որ 29-րդ հոդվածի 2 բ) կետում հիշատակված համաձայնագիրն ուժի մեջ մտնի առանց 1-ին կետի բ)

ենթակետում, 2-րդ եւ 3-րդ կետերում նախատեսված ծանուցման եւ խորհրդակցության

պայմանով, որ այդպիսի ծանուցումն արվում է այդպիսի խորհրդակցության հնարավորությունը տրամադրվում է անմիջապես: Այդ դեպքում կողմերը, այնուամենայնիվ, դրա ուժի մեջ մտնելուց հետո անմիջապես ծանուցում են տեքստի

մասին՝ 2-րդ կետի "ա" ենթակետին համապատասխան:

6. Պայմանավորվող կողմերը, որոնք հանդիսանում են կամ դառնում են 29-րդ հոդվածի 2-րդ կետի բ) ենթակետում նկարագրված համաձայնագրի կողմեր, պարտավորվում են 29-րդ հոդվածի 2-րդ կետի ա) կետի բերումով կիրառելի դարձած

ԳԱՏՏ-ի եւ դրա հետ կապված Փաստաթղթերի դրույթներին անհամապատասխանությունը

սահմանափակել այնպիսի դրույթներով, որոնք անհրաժեշտ են արձագանքելու համար կոնկրետ հանգամանքներին, ինչպես նաեւ այդպիսի համաձայնագիրն իրականացնել այնպես, որ այն, որքան հնարավոր է, առավել քիչ չափով շեղվի այդ դրույթներից: Նրանք բոլոր ջանքերը գործադրում են ուղղման միջոցներ ձեռնարկելու համար՝ Շահագրգիռ կողմերի ներկայացրած առաջադրումների եւ Խարտիայի համաժողովի ցանկացած հանձնարարականի լույսի ներքո:

11. ՀԱՎԵԼՎԱԾ D  
Առեւտրային վեճերի լուծման ժամանակավոր դրույթներ  
(29-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան)

1) ա) Միմյանց հետ ունեցած իրենց հարաբերություններում Պայմանավորվող կողմերը համագործակցության եւ խորհրդակցությունների միջոցով գործադրում են բոլոր ջանքերը՝ այն հաշվով, որպեսզի գործող այնպիսի միջոցների վերաբերյալ ցանկացած վեճ լուծեն փոխադարձ բավարարման հիման վրա, որոնք կարողանային էապես ներգործել առեւտրի նկատմամբ 5-րդ կամ 29-րդ հոդվածի համաձայն կիրառվող դրույթների պահպանման վրա:

բ) Մի Պայմանավորվող կողմը կարող է մյուս Պայմանավորվող կողմին ուղարկել գրավոր խնդրանք մյուս Պայմանավորվող կողմի ցանկացած այն միջոցի վերաբերյալ խորհրդակցությունների մասին, որը կարող է, իր կարծիքով, էապես ներգործել առեւտրի նկատմամբ 5-րդ կամ 29-րդ հոդվածի համաձայն կիրառվող դրույթների պահպանման վրա: Խորհրդակցությունների մասին խնդրանքով դիմած Պայմանավորվող կողմը հաղորդում է հնարավորին չափ առավել լրիվ տեղեկություններ այն միջոցի մասին, որը հանդիսանում է գանգատի առարկան, եւ նշում է 5-րդ կամ 29-րդ հոդվածի, ինչպես նաեւ ԳԱՏՏ-ի եւ դրա հետ կապված Փաստաթղթերի այն դրույթները, որոնք, իր կարծիքով, առնչություն ունեն տվյալ գործի հետ: Տվյալ կետի համաձայն խորհրդակցությունների վերաբերյալ խնդրանքների մասին ծանուցում է Քարտուղարությանը, որը Պայմանավորվող կողմերին պարբերաբար տեղեկացնում է՝ առաջիկա խորհրդակցությունների մասին ստացված ծանուցումներին համապատասխան:

գ) Պայմանավորվող կողմը դիմում է ցանկացած գաղտնի կամ որեւէ մեկի սեփականությունը հանդիսացող՝ դրան հավասարեցված տեղեկատվությամբ, որը շարադրվում է գրավոր խնդրանքի մեջ, կամ այդպես է վարվում՝ ի պատասխան այդպիսի տեղեկատվության, կամ խորհրդակցությունների ընթացքում վարվում է ճիշտ այն ձեւով, ինչ ձեւով նրան դիմում է այդ տեղեկատվությունը տրամադրող Պայմանավորվող կողմը:

դ) Ձգտելով լուծել այն հարցերը, որոնք, Պայմանավորվող կողմի կարծիքով, ներազդում են առեւտրի նկատմամբ 5-րդ կամ 29-րդ հոդվածի համաձայն կիրառվող

դրույթների պահպանման վրա իր եւ մյուս Պայմանավորվող կողմի հարաբերություններում, խորհրդակցություններին կամ վեճի լուծման այլ ընթացակարգերին մասնակցող Պայմանավորվող կողմերը ջանքեր են գործադրում՝ այն հաշվով, որ խուսափեն ցանկացած այլ Պայմանավորվող կողմի առեւտրի վրա աննպաստ

կերպով ներագրող որոշումից:

2) ա) Եթե խորհրդակցությունների մասին 1-ին կետի "բ" ենթակետում հիշատակված խնդրանքը ստանալուց հետո 60 օրվա ընթացքում Պայմանավորվող կողմերը

չեն լուծում իրենց վեճը կամ չեն համաձայնում այն լուծել հաշտության, միջնորդության, արբիտրաժի կամ այլ մեթոդով, երկու Պայմանավորվող կողմերից ցանկացած կողմ կարող է Զարտուղարություն հանձնել գրավոր դիմում՝ "բ"-ից "գ" ենթակետերին համապատասխան փորձագետների հանձնաժողով ստեղծելու մասին: Իր

խնդրանքի մեջ Պայմանավորվող կողմը շարադրում է վեճի էությունը եւ նշում, թե, իր կարծիքով, 5-րդ կամ 29-րդ հոդվածի, ինչպես նաեւ ՉԱՏՏ-ի եւ դրա հետ կապված

Փաստաթղթերի ո՛ր դրույթներն են վեճին առնչվում: Զարտուղարությունը խնդրանքի

պատճենները անմիջապես փոխանցում է բոլոր Պայմանավորվող կողմերին:

բ) Վեճը լուծելիս հաշվի են առնվում մյուս Պայմանավորվող կողմերի շահերը: Գործի մեջ էապես շահագրգիռ ցանկացած այլ Պայմանավորվող կողմ իրավունք ունի

ընդգրկվելու փորձագետների հանձնաժողովի կողմից եւ հանձնաժողովին գրավոր հանձնելու իր մոտեցումը՝ պայմանով, որ ինչպես վեճի Պայմանավորվող կողմերը, այնպես էլ Զարտուղարությունը շահագրգռվածության մասին նրա գրավոր ծանուցումը

ստացած լինեն փորձագետների հանձնաժողովի ստեղծման թվականից ոչ ուշ, ինչպես դա

սահմանված է "գ" ենթակետին համապատասխան:

գ) Փորձագետների հանձնաժողովը ստեղծված է համարվում, "ա" ենթակետի համաձայն, Պայմանավորվող կողմի գրավոր խնդրանքը Զարտուղարության ստանալուց

հետո 45 օր անց:

դ) փորձագետների հանձնաժողովը կազմվում է երեք անդամներից, որոնք ընտրվում

են Գլխավոր քարտուղարի կողմից՝ 7-րդ կետում հիշատակված ցուցակից: Բացի այն

դեպքերից, երբ վիճող Պայմանավորվող կողմերը կպայմանավորվեն այլ կերպ, հանձնաժողովի անդամները չեն լինի կամ վեճի կողմեր հանդիսացող կամ "բ" ենթակետին համապատասխան իրենց շահագրգռվածության մասին ծանուցած Պայմանավորվող

կողմերի քաղաքացիներ կամ Տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպության այն անդամ պետությունների քաղաքացիներ, որոնք հանդիսանում են

կա՛մ վեճի կողմ, կա՛մ "բ" ենթակետին համապատասխան իրենց շահագրգռվածության

մասին ծանուցած անդամ պետության քաղաքացիներ:

ե) Վեճի Պայմանավորվող կողմերը տասն աշխատանքային օրվա ընթացքում իրենց

վերաբերմունքն են արտահայտում փորձագետների հանձնաժողովի անդամների նշանակումների առթիվ եւ չեն բացարկում այդ նշանակումները, բացի ստիպողական

նկատառումներով արված բացարկից:

զ) Փորձագետների հանձնաժողովի անդամները հանդես են գալիս իրենց անունից եւ

ո՛չ ձգտում են ստանալ, ո՛չ էլ ստանում են ցուցումներ ցանկացած կառավարությունից կամ մեկ ուրիշ մարմնից: Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ

Պարտավորվում է հարգել այդ սկզբունքները եւ չձգտել ներագդելու փորձագետների

հանձնաժողովի անդամների վրա նրանց խնդիրների կատարման գործում:

Փորձագետների

հանձնաժողովի անդամները ընտրվում են այն հաշվով, որ ապահովվի նրանց անկախությունը, եւ հանձնաժողովի կազմը արտահայտի արհեստավարժ պատրաստության եւ

փորձառության բավարար չափանիշներով:

է) Զարտուղարությունն առանց հապաղելու Պայմանավորվող կողմերին հայտնում է

փորձագետների հանձնաժողովի կազմավորման մասին:

Յ) ա) Խարտիայի համաժողովն ընդունում է փորձագետների հանձնաժողովի աշխատանքի ընթացակարգի՝ սույն Հավելվածին համապատասխանող կանոնները:

Ընթացակարգի կանոնները պետք է որքան հնարավոր է առավել լրիվ համապատասխանեն

ԳԱՏՏ-ի եւ դրա հետ կապված Փաստաթղթերի գործընթացի կանոններին:

Փորձագետների

հանձնաժողովը նաեւ իրավունք ունի ընդունելու ընթացակարգի լրացուցիչ կանոններ,

որոնք չեն հակասում ընթացակարգի՝ Խարտիայի համաժողովի կողմից ընդունված

կանոններին կամ սույն Հավելվածին: Փորձագետների հանձնաժողովում գործ քննության

առնելիս յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ եւ, 2-րդ "բ" ենթակետին համապատասխան, իր շահագրգռվածության մասին ծանուցում արած ցանկացած այլ

Պայմանավորվող կողմ ունի հանձնաժողովում առնվազն մեկ անգամ ընդգրկվելու եւ

գրավոր նյութ ներկայացնելու իրավունք: Վիճող Պայմանավորվող կողմերը ունեն նաեւ

գրավոր հակափաստարկներ ներկայացնելու իրավունք: Փորձագետների հանձնաժողովը

կարող է դրական մոտեցում իր շահագրգռվածության մասին՝ 2-րդ կետի "բ" ենթակետին

համապատասխան ծանուցում արած ցանկացած այլ Պայմանավորվող կողմի խնդրանքի՝

ծանոթանալու հանձնաժողովին ներկայացրած գրավոր ցանկացած դիմումի՝ այդ դիմումը

ներկայացրած Պայմանավորվող կողմի համաձայնությամբ:

Գործի քննությունը հանձնաժողովում պետք է գաղտնի լինի: Հանձնաժողովն արդարացիորեն է գնահատում իրեն ներկայացված նյութերը, ներառյալ վեճի

հանգամանքները, եւ առեւտրի նկատմամբ 5-րդ կամ 29-րդ հոդվածի համաձայն կիրառելի

դրույթներին միջոցների համապատասխանությունը: Իր գործառույթներն իրականացնելիս

հանձնաժողովը խորհրդակցություններ է անցկացնում վիճող Պայմանավորվող կողմերի

հետ եւ նրանց պատշաճ հնարավորություն է ընձեռում՝ հասնելու փոխադարձ բավարարող

որոշման: Եթե վիճող կողմերը չեն պայմանավորվում այլ կերպ, հանձնաժողովն իր որոշումը հիմնավորում է Պայմանավորվող կողմերի փաստարկների եւ առաջադրումների

նյութերի հիման վրա: Փորձագետների հանձնաժողովները ղեկավարվում են ԳԱՏՏ-ի

շրջանակներում ԳԱՏՏ-ին եւ դրա հետ կապված Փաստաթղթերին տրված մեկնաբանություններով եւ հարցականի տակ չեն դնում 5-րդ եւ 29-րդ հոդվածի հետ

համատեղելի լինելու՝ ԳԱՏՏ-ի կողմ հանդիսացող Պայմանավորվող կողմի կողմից կիրառվող պրակտիկան ԳԱՏՏ-ի մյուս կողմերի վերաբերյալ, որոնց նկատմամբ այդ

կողմը կիրառում է ԳԱՏՏ-ը, եւ որոնք այդ կողմերի միջոցով չեն հանձնվել՝ ԳԱՏՏ-ին համապատասխան վեճը լուծելու համար: Եթե վիճող Պայմանավորվող կողմերը չպայմանավորվեն այլ կերպ, հանձնաժողովին վերաբերող բոլոր

ընթացակարգերը,

ներառյալ նրա վերջնական զեկույցի թողարկումը, պետք է ավարտվեն հանձնաժողովի

ստեղծման թվականից 180 օրվա ընթացքում, սակայն այդ ժամկետի ընթացքում բոլոր

ընթացակարգերի անավարտությունը չպետք է ներգործի վերջնական զեկույցի վավերականության վրա:

բ) Հանձնաժողովն ինքն է սահմանում սեփական իրավագործությունը. այդպիսի սահմանումը հանդիսանում է վերջնական եւ պարտադիր: Վիճող Պայմանավորվող կողմից

ցանկացած առարկություն, թե այս կամ այն վեճը չի մտնում հանձնաժողովի իրավագործության մեջ, քննության է առնվում հանձնաժողովի կողմից, որը որոշում է՝

այդ առարկությունը քննության առնել որպես նախնական հա՞րց, թե այն միացնել վեճի

հանգամանքներին:

գ) Ըստ էության համասեռ հանդիսացող վեճերի վերաբերյալ փորձագետների հանձնաժողով ստեղծելու մասին երկու կամ ավելի թվով խնդրանքների դեպքում Գլխավոր քարտուղարը կարող է, բոլոր վիճող Պայմանավորվող կողմերի համաձայնությամբ, նշանակել միասնական հանձնաժողով:

4) ա) Քննության առնելով հակափաստարկները՝ փորձագետների հանձնաժողովը

Պայմանավորվող կողմերին է ներկայացնում իր գրավոր զեկույցի նախագծի նկարագրական բաժինները, ներառյալ փաստերի արձանագրումը եւ վիճող Պայմանավորվող

կողմերի առաջադրած փաստարկների համառոտ շարադրանքը: Վիճող Պայմանավորվող

կողմերին հնարավորություն է տրվում հանձնաժողովի սահմանած ժամկետում ներկայացնել դիտողություններ նկարագրական բաժինների վերաբերյալ:

Պայմանավորվող կողմերից դիտողությունների ստացման համար սահմանված թվականից հետո փորձագետների հանձնաժողովը վիճող Պայմանավորվող կողմերին

ներկայացնում է միջանկյալ գրավոր զեկույց. այն իր մեջ ներառում է ինչպես նկարագրական բաժինները, այնպես էլ հանձնաժողովի կողմից առաջարկվող եզրակացությունները եւ որոշումները: Հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետի

ընթացքում վիճող Պայմանավորվող կողմը կարող է հանձնաժողովին գրավոր խնդրանք

ներկայացնել՝ մինչեւ վերջնական զեկույցի հրապարակումը միջանկյալ զեկույցի որոշակի ասպեկտները հանձնաժողովի կողմից վերանայելու մասին: Մինչեւ վերջնական

զեկույցի հրապարակումը հանձնաժողովը կարող է, իր հայեցողությամբ, հանդիպել

վիճող Պայմանավորվող կողմերի հետ՝ այդպիսի խնդրանքի մեջ շոշափվող հարցերը

քննության առնելու համար:

Վերջնական զեկույցն ընդգրկում է նկարագրական բաժինները (ներառյալ փաստերի

արձանագրումը եւ Պայմանավորվող կողմերի առաջադրած փաստարկների համառոտ

շարադրանքը), հանձնաժողովի եզրակացությունները եւ հետեւությունները, ինչպես

նաեւ միջանկյալ զեկույցի կոնկրետ ասպեկտների առթիվ առաջադրած փաստարկների

քննությունը զեկույցի վերանայման փուլում: Վերջնական զեկույցում քննության է առնվում հանձնաժողովի առջեւ բարձրացված եւ վեճի լուծման համար անհրաժեշտ ամեն

մի էական հարց, եւ շարադրվում են հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների

հիմքերը:

Հանձնաժողովը ներկայացնում է իր վերջնական զեկույցը՝ այն առանց ուշացնելու

ներկայացնելով Քարտուղարությանը եւ վիճող Պայմանավորվող կողմերին:

Քարտուղարությունը ամենամոտ իրական հնարավորության դեպքում բոլոր

Պայմանավորվող կողմերի շրջանում տարածում է վերջնական զեկույցը բոլոր գրավոր

այն կարծիքների հետ միասին, որոնք վիճող Պայմանավորվող կողմը ցանկանում է կցել

զեկույցին:

բ) Եթե հանձնաժողովը որոշում է, որ Պայմանավորվող կողմի ներկայացրած կամ

պահպանող միջոցը չի համապատասխանում 5-րդ կամ 29-րդ հոդվածի դրույթին կամ

ԳԱՏՏ-ի եւ դրա հետ կապված Փաստաթղթերի՝ 29-րդ հոդվածի համաձայն կիրառվող

դրույթին, ապա հանձնաժողովը կարող է իր վերջնական զեկույցում առաջարկել, որ

Պայմանավորվող կողմը փոփոխի այդ միջոցը կամ հրաժարվի դրանից կամ նման վարքագծից՝ այն հաշվով, որ նրա կողմից պահպանվի այդ դրույթը:

գ) Փորձագետների զեկույցները պետք է ստանան Խարտիայի համաժողովի



հավանությունը, որպեսզի հարտիայի համաժողովին բավարար ժամանակ տրամադրի

հանձնաժողովի զեկույցները քննության առնելու համար. զեկույցը հարտիայի համաժողովի կողմից պետք է ընդունվի առնվազն 30 օրվա ընթացքում այն բանից հետո,

երբ այդ զեկույցը Քարտուղարության կողմից կներկայացվի բոլոր

Պայմանավորվող

կողմերին: Այն Պայմանավորվող կողմերը, որոնք առարկություններ ունեն հանձնաժողովի զեկույցի դեմ, իրենց առարկությունների հիմնավորումները Քարտուղարությանը գրավոր ներկայացնում են զեկույցն ընդունելու նպատակով հարտիայի համաժողովի կողմից այդ զեկույցը քննության առնվելու օրվանից ոչ ուշ,

քան 10 օր առաջ, իսկ Քարտուղարությունն առանց ուշացնելու դրանք տրամադրում է

բոլոր Պայմանավորվող կողմերին: Վիճող Պայմանավորվող կողմերը եւ իրենց շահագրգռվածության մասին 2-րդ կետի "բ" ենթակետին համապատասխան ծանուցում արած

Պայմանավորվող կողմերը ունեն այդ վեճի առթիվ հարտիայի համաժողովի կողմից

հանձնաժողովի զեկույցման քննարկմանը լրիվ մասնակցելու իրավունք, եւ նրանց կարծիքները արձանագրվում են ամբողջովին:

դ) Ի շահ բոլոր Պայմանավորվող կողմերի վեճերի արդյունավետ լուծումն ապահովելու նպատակով էական պայման է հանդիսանում հանձնաժողովի՝ հարտիայի

համաժողովի կողմից ընդունված վերջնական զեկույցի մեջ պարունակված որոշումների

եւ հանձնարարականների անհապաղ կատարումը: Այն Պայմանավորվող կողմը, որին

հասցեագրված է հանձնաժողովի՝ հարտիայի համաժողովի կողմից ընդունված վերջնական

զեկույցի մեջ շարադրված որոշումը կամ հանձնարարականը, հարտիայի համաժողովին

տեղեկացնում է այդպիսի որոշման կամ հանձնարարականի կատարման վերաբերյալ իր

մտադրությունների մասին: Այն դեպքում, եթե դրանց անհապաղ կատարումը հնարավոր

չէ, համապատասխան Պայմանավորվող կողմը հարտիայի համաժողովին պարզաբանում է

չկատարման պատճառները, եւ այդպիսի պարզաբանման լույսի ներքո նրան տրվում է

ընդունելի ժամկետ՝ դրանք կատարելու համար: Վեճի լուծման նպատակը այն միջոցների

փոփոխումը կամ վերացումն է, որոնք հակասում են համապատասխան դրույթներին:

5) ա) Եթե Պայմանավորվող կողմը ընդունելի ժամանակամիջոցի ընթացքում չի կատարում հանձնաժողովի՝ հարտիայի համաժողովի կողմից ընդունված վերջնական

զեկույցի մեջ պարունակված որոշումը կամ հանձնարարականը, ապա այդպիսի չկատարման

հետեւանքով վնաս կրող՝ վեճի Պայմանավորվող կողմը կարող է չկատարող

Պայմանավորվող կողմին հանձնել գրավոր խնդրանք այն մասին, որ չկատարող

Պայմանավորվող կողմը բանակցությունների մեջ մտնի՝ համաձայնեցված փոխհատուցման նպատակով: Այդպիսի խնդրանք ստանալու դեպքում չկատարող Պայմանավորվող կողմը

բանակցությունների մեջ է մտնում անմիջապես:

բ) Եթե չկատարող Պայմանավորվող կողմը հրաժարվում է բանակցություններից,

կամ եթե բանակցությունների մասին խնդրանքը հանձնելուց հետո 30 օրվա ընթացքում

Պայմանավորվող կողմերը համաձայնության չեն գալիս, վնաս կրող

Պայմանավորվող

կողմը կարող է գրավոր դիմել Խարտիայի համաժողովին՝ չկատարող

Պայմանավորվող

կողմի առջև իր պարտականություններն առկախելու թույլտվություն ստանալու խնդրանքով՝ 5-րդ կամ 29-րդ հոդվածի համաձայն:

գ) Խարտիայի համաժողովը վնաս կրող Պայմանավորվող կողմին կարող է թույլատրել չկատարող Պայմանավորվող կողմի նկատմամբ, 5-րդ կամ 29-րդ հոդվածի

դրույթներին կամ ՉԱՏՏ-ի կամ դրա հետ կապված Փաստաթղթերի դրույթներին համապատասխան, առկախել իր այնպիսի պարտավորությունները, որոնք կիրառվում են

29-րդ հոդվածով, որոնք վնաս կրող Պայմանավորվող կողմը համարում է համարժեք

տվյալ հանգամանքներում:

դ) Պարտավորությունների առկախումը կրում է ժամանակավոր բնույթ եւ կիրառվում է մինչեւ այն ժամանակը, երբ վերացվում է 5-րդ կամ 29-րդ հոդվածին հակասող ճանաչված միջոցը, կամ երբ ձեռք է բերվում փոխադարձաբար բավարարող

որոշում:

ե) ա) Մինչեւ այդպիսի պարտավորությունների առկախումը վնաս կրող Պայմանավորվող կողմը չկատարող Պայմանավորվող կողմին տեղեկացնում է իր կողմից

նախատեսվող առկախման բնույթի եւ ծավալի մասին: Եթե չկատարող

Պայմանավորվող

կողմը Գլխավոր քարտուղարին գրավոր առարկություն է հանձնում առկախվող պարտավորությունների՝ վնաս կրող Պայմանավորվող կողմի առաջարկած ծավալի դեմ,

ապա այդպիսի առարկությունը տրվում է արբիտրաժ, ինչպես դա նախատեսված է ստորել:

Պարտավորությունների առաջարկվող առկախումը հետաձգվում է մինչեւ արբիտրաժի

ավարտը եւ մինչեւ այն պահը, երբ արբիտրաժային հանձնաժողովի վճիռը դառնում է

վերջնական եւ պարտադիր՝ "ե" ենթակետին համապատասխան:

բ) Գլխավոր քարտուղարը արբիտրաժային հանձնաժողովը հիմնում է 2-րդ կետի "դ"

ենթակետից "զ" ենթակետին համապատասխան, որը, ըստ հնարավորության, հանդիսանում

է փորձագետների այդ նույն հանձնաժողովը, որն ընդունել է 4-րդ կետի "դ"

ենթակետում հիշատակված որոշումը եւ հանձնարարականը՝ վնաս կրող

Պայմանավորվող

կողմի առկախման առաջարկվող պարտավորությունների ծավալը քննության առնելու

Նպատակով: Եթե Խարտիայի համաժողովը չի ընդունում այլ որոշում, փորձագետների

հանձնաժողովի աշխատանքի ընթացակարգի կանոններն ընդունվում են 3-րդ կետի "ա"

ենթակետին համապատասխան:

գ) Արբիտրաժային հանձնաժողովը որոշում է, թե վնաս կրող Պայմանավորվող կողմի առկախման առաջարկվող պարտավորությունների ծավալը չի՞ հանդիսանում չափից

ավելի նրա կրած վնասի համեմատությամբ, եւ, եթե դա այդպես է, ապա ո՞րքանով:

Արբիտրաժային հանձնաժողովը քննության չի առնում առկախվող պարտավորությունների

ընույթը, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց ընույթը անբաժանելի է առկախվող

պարտավորությունների ծավալը սահմանելիս:

դ) Արբիտրաժային հանձնաժողովը իր գրավոր նշանակումը վնաս կրող եւ չկատարող

Պայմանավորվող կողմերին եւ Քարտուղարությանն է հանձնում հանձնաժողովի ստեղծումից հետո 60 օրվա ընթացքում կամ այնպիսի այլ ժամանակահատվածի ընթացքում, որը կարող է համաձայնեցվել վնաս կրող եւ չկատարող

Պայմանավորվող

կողմերի միջեւ: Քարտուղարությունը այդ նշանակումը Խարտիայի համաժողովին է

հանձնում ամենամոտ իրական հնարավորության դեպքում, բայց ոչ ուշ, քան մինչեւ

Խարտիայի համաժողովի նիստը, որը տեղի կունենա նշանակումն ստանալուց հետո:

ե) Արբիտրաժային հանձնաժողովի նշանակումը վերջնական եւ պարտադիր է դառնում

Խարտիայի համաժողովին այն ներկայացնելու օրվանից սկսած 30 օրվա ընթացքում, եւ

առկախվող արտոնությունների՝ նրա կողմից թույլատրվող ցանկացած ծավալը դրանից

հետո վնաս կրող Պայմանավորվող կողմը կարող է գործողության մեջ դնել այն ձեւով,

որը, այդ Պայմանավորվող կողմի կարծիքով, հանդիսանում է համարժեք տվյալ հանգամանքներում, եթե միայն մինչեւ 30-օրյա ժամկետը լրանալը Խարտիայի համաժողովն այլ որոշում չի ընդունում:

զ) Չկատարող Պայմանավորվող կողմի վերաբերյալ ցանկացած պարտավորության

կատարումն առկախելով՝ վնաս կրող Պայմանավորվող կողմն ամեն ինչ անում է այն

բանի համար, որ վնաս չհասցվի որեւէ ուրիշ Պայմանավորվող կողմի առեւտրին:

7) Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է նշանակել երկու անձի, որոնք,

այն դեպքում, երբ Պայմանավորվող կողմերը նաեւ ԳԱՏՏ-ի կողմեր են, եթե նրանք ցանկանում են եւ կարողունակ են կատարելու սույն Հավելվածի համաձայն

փորձագետների հանձնաժողովի անդամների գործառույթներ, հանդիսանում են

փորձագետների հանձնաժողովի անդամներ, որոնք այժմ նշանակված են ՉԱՏՏ-ում վեճերի լուծման նպատակով փորձագետների հանձնաժողովի մեջ ընդգրկելու համար: Գլխավոր քարտուղարը կարող է նաեւ, Խարտիայի համաժողովի հավանությամբ, նշանակել տասն անձից ոչ ավելի, որոնք ցանկանում են եւ կարողունակ են կատարելու 2-ից 4-րդ ենթակետերին համապատասխան վեճերի լուծման հանձնաժողովի անդամների գործառույթները: Դրանից բացի, Խարտիայի համաժողովը կարող է որոշում կայացնել այդ նույն նպատակներով վեճերը լուծելու համար այլ միջազգային մարմինների ցուցակներից նշանակել պատրաստակամ եւ հանձնաժողովի անդամների գործառույթները կատարելու կարողունակ մինչեւ 20 անձի: Այդպիսի անձինք նշանակվում են բացառապես արդարամտության, հուսալիության եւ առողջ բանականության սկզբունքներով, եւ առավելագույն հնարավոր աստիճանով պետք է ունենան գիտելիքներ եւ փորձառություն միջազգային առեւտրի բնագավառում եւ էներգետիկայի հարցերում, հատկապես 29-րդ հոդվածի համաձայն կիրառվող դրույթների վերաբերյալ: Սույն Հավելվածին համապատասխան կատարելով ցանկացած գործառույթներ՝ այդ նշանակված անձինք չպետք է կապված լինեն որեւէ Պայմանավորվող կողմի հետ կամ նրանից ընդունեն ցուցումներ: Նշանակված անձինք իրենց գործառույթները կատարում են հինգ տարվա ընթացքում, կրկնակի նշանակման հնարավորությամբ հանդերձ, մինչեւ նշանակվում են նրանց փոխարինողներ: Այն նշանակված անձը, որի լիազորությունների ժամկետը լրանում է, շարունակում է կատարել ցանկացած գործառույթ, որի համար նա նշանակվել է՝ սույն Հավելվածի համաձայն: Նշանակված անձի մահվան, պաշտոնաթողության կամ անգործունակության դեպքում Պայմանավորվող կողմը կամ Գլխավոր քարտուղարը, կախված այն բանից, թե ով է նշանակել համապատասխան անձին, իրավունք ունի հիշյալ նշանակված անձի լիազորությունների մնացած ժամկետի համար նշանակել ուրիշ անձի. ընդ որում, Գլխավոր քարտուղարի կողմից նշանակումը ենթակա է Խարտիայի համաժողովի հավանությանը:

8) Չնայած սույն Հավելվածում շարադրված դրույթներին՝ վեճի լուծման ուղղությամբ ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում հավանության են արժանանում վեճի կարգավորման նպատակով Պայմանավորվող կողմերի խորհրդակցությունները:

9) Խարտիայի համաժողովը կարող է նշանակել կամ առաջարկել ուրիշ մարմիններ կամ հանձնաժողովներ՝ Քարտուղարության եւ Գլխավոր քարտուղարի վրա սույն Հավելվածով դրվող ցանկացած գործառույթի կատարման համար:

Խարտիայի ծախսերի բաշխման բանաձևը  
(37-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան)

1) Պայմանավորվող կողմերից գանձվող վճարումները ամեն տարի սահմանվում են

Քարտուղարության կողմից՝ այն տոկոսային մեծության հիման վրա, որը պահանջվում է

ՄԱԿ-ի Կանոնավոր բյուջեի հարկման՝ համաձայն ժամանակի առումով գոյություն ունեցող վերջին սանդղակի (լրացված ՄԱԿ-ի անդամներ չհանդիսացող Պայմանավորվող

կողմերի ենթադրական վճարումների մասին տեղեկատվությամբ):

2) Անհրաժեշտության դեպքում վճարումները շտկվում են այնպես, որ բոլոր Պայմանավորվող կողմերի վճարումների գումարը հավասարվի 100 տոկոսի:

13. ՀԱՎԵԼՎԱԾ PA

Ստորագրած կողմերի ցանկը, որոնք 45-րդ հոդվածի 3-րդ կետի "բ" ենթակետով ժամանակավոր կիրառման վերաբերյալ պարտավորություն չեն ստանձնում

(45-րդ հոդվածի 3-րդ կետի "գ" ենթակետին համապատասխան)

1. Չեխիայի Հանրապետություն
2. Գերմանիա
3. Հունգարիա
4. Լիտվա
5. Լեհաստան

14. ՀԱՎԵԼՎԱԾ T

Պայմանավորվող կողմերի անցումային միջոցները  
(32-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան)

Անցումային պայմանավորվածությունների իրավունք ունեցող Պայմանավորվող կողմերի ցանկ

Ադրբեջան	Դրոզստան
Ալբանիա	Մոլդովա
Բելառուս	Չեխիա
Բուլղարիա	Ռումինիա
Թուրքմենստան	Ռուսաստանի Դաշնություն
Լատվիա	Սլովակիա
Լեհաստան	Սլովենիա
Լիտվա	Վրաստան
Խորվաթիա	Տաշիկստան

Հայաստան Ռեզերվստան

Հունգարիա Ռեկրաիսա

Ղազախստան Էստոնիա

Անցումայինի տակ ընկնող դրույթների թվարկումը

Դրույթ	Էջ	Դրույթ	Էջ
ՀՈԴՎԱԾ 6 (2)	35	ՀՈԴՎԱԾ 10 (7)	71
ՀՈԴՎԱԾ 6 (5)	49	ՀՈԴՎԱԾ 14 (1) (դ)	73
ՀՈԴՎԱԾ 7 (4)	60	ՀՈԴՎԱԾ 20 (3)	75
ՀՈԴՎԱԾ 9 (1)	65	ՀՈԴՎԱԾ 22 (3)	84

#### ՀՈԴՎԱԾ 6 (2)

"Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իր իրավասության շրջանակներում ապահովում է այնպիսի օրենքների առկայությունն ու պարտադիր կատարումը, որոնք անհրաժեշտ են նպատակահարմար են Էներգետիկ հատվածում տնտեսական գործունեության մեջ միակողմ եւ համաձայնեցված հակամրցակցային վարքագծի հիմնախնդիրների լուծման համար":

#### ԵՐԿԻՐ - ԱԴՐԲԵԶԱՆ

Հատված  
Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ  
Ազգային

Նկարագրում  
Հակամենատիրական օրենսդրությունը մշակման փուլում է:

Աստիճանական վերացում  
2000 թվականի հունվարի 1:

#### ԵՐԿԻՐ - ԱԼԲԱՆԻԱ

Հատված  
Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ  
Ազգային

Նկարագրում

Ալբանիայում չկա մրցակցության պաշտպանության օրենք:

"Ածխաջրածինների մասին" 1993 թվականի հուլիսի 28-ի N 7746 օրենքը եւ "Ջանքային ռեսուրսների մասին" 1994 թվականի փետրվարի 17-ի N 7796 օրենքը այդպիսի դրույթներ չեն ընդգրկում: Էլեկտրաէներգետիկայի մասին օրենքը գտնվում է

մշակման փուլում: Պլանավորվում է այդ օրենքը հորհրդարան հանձնել 1996 թվականի

վերջին: Այդ օրենքների մեջ Ալբանիան մտադրվում է մտցնել հակամրցակցային վարքագծին վերաբերող դրույթներ:

Աստիճանական վերացում

1998 թվականի հունվարի 1:

ԵՐԿԻՐ - ԲԵԼԱՌՈՒՄ

Չատված

Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ

Ազգային

Նկարագրում

Չակամենատիրական օրենսդրությունը գտնվում է մշակման փուլում:

Աստիճանական վերացում

2000 թվականի հունվարի 1:

ԵՐԿԻՐ - ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆ

Չատված

Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ

Ազգային

Նկարագրում

Թուրքմենստանի նախագահի 1993 թվականի հոկտեմբերի 21-ի N 1532

որոշմամբ

ստեղծված է եւ գործում է մենատիրական գործունեության սահմանափակման կոմիտե,

որի գործառույթների մեջ են մտնում տնտեսական սուբյեկտների եւ կառավարման մարմինների մենատիրական պրակտիկայից պաշտպանվելը, մրցակցության եւ ձեռնարկության զարգացման հիման վրա շուկայական հարաբերությունների ձեւավորմանը

աջակցություն ցույց տալը: Պահանջվում է Էներգետիկ հատվածում տնտեսական գործունեության մեջ ձեռնարկությունների հակամենատիրական վարքագիծը կանոնակարգող օրենսդրական եւ նորմատիվ ակտերի հետագա

կատարելագործում եւ

մշակում:

Աստիճանական վերացում  
2001 թվականի հուլիսի 1:

ԵՐԿԻՐ - ՀԱՅԱՍՏԱՆ

Հատված  
Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ  
Ազգային

Նկարագրում

Ներկայումս Հայաստանում գոյություն ունի պետական մենատիրություն  
Էներգետիկ  
քննազավառների մեծ մասում: Մրցակցության պաշտպանության օրենք չկա, այդ  
պատճառով  
Էլ մրցակցության կանոնները դեռևս չեն իրագործվում: Էներգետիկայի մասին  
օրենք  
չկա: Պլանավորված է Էներգետիկայի մասին օրենքների նախագծերը  
խորհրդարան  
Ներկայացնել 1994 թվականին: Նախատեսվում է օրենքների մեջ  
հակամրցակցային  
վարքագծի վերաբերյալ մտցնել մրցակցության մասին ԵՄ օրենսդրության հետ  
ներդաշնակված դրույթներ:

Աստիճանական վերացում  
1997 թվականի դեկտեմբերի 31:

ԵՐԿԻՐ - ՂԱՉԱԽՍՏԱՆ

Հատված  
Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ  
Ազգային

Նկարագրում

Ընդունված է "Մրցակցության զարգացման եւ մենատիրական գործունեության  
սահմանափակման մասին" օրենք, բայց կրում է ընդհանուր բնույթ: Անհրաժեշտ է  
օրենսդրության հետագա զարգացում, մասնավորապես, համապատասխան  
ունդումներ  
կատարելու կամ նոր օրենք ընդունելու միջոցով:

Աստիճանական վերացում  
1998 թվականի հունվարի 1:

ԵՐԿԻՐ - ՂՐՂՉՍՏԱՆ



Հատված  
Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ  
Ազգային

Նկարագրում

"Հակամենատիրական քաղաքականության մասին" օրենքն արդեն ընդունված է:

Կապահանջվի անցումային ժամանակաշրջան՝ այդ օրենքի դրույթները հարմարացնելու համար Էներգետիկ հատվածում, որտեղ գործունեությունն առայժմ խստագույնս վերահսկվում է պետության կողմից:

Աստիճանական վերացում  
2001 թվականի հուլիսի 1:

#### ԵՐԿԻՐ - ՄՈՒՂՈՎԱ

Հատված  
Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ  
Ազգային

Նկարագրում

Մոլդովայի Հանրապետության "Մենատիրական գործունեության սահմանափակման եւ մրցակցության զարգացման մասին" 1992 թվականի հունվարի 29-ի օրենքը նախատեսում

է մրցակցության զարգացման կազմակերպական եւ իրավական հիմքեր, մենատիրական

գործունեությունը կանխելու եւ սահմանափակելու միջոցներ: Օրենքը կողմնորոշված է

շուկայական տնտեսության գործունեության պայմանների պահպանման ուղղությամբ:

Սակայն տվյալ օրենքը չի նախատեսում Էներգետիկ հատվածում հակամրցակցային

վարքագծի կոնկրետ միջոցներ, ինչպես նաեւ լիովին չի բավարարում 6-րդ հոդվածի

պահանջները:

1995 թվականին Խորհրդարանին կառաջարկվեց "Մրցակցության մասին" օրենքի եւ

տնտեսության ապամենատիրացման Պետական ծրագրի նախագծերը: Նույնպես 1995

թվականին Խորհրդարանին կառաջարկվի "Էներգետիկայի մասին" օրենքի նախագիծ, որտեղ

կարտացոլվեց Էներգետիկ հատվածի ապամենատիրացման եւ այնտեղ մրցակցության

գարգացման հարցերը:

Աստիճանական վերացում  
1998 թվականի հունվարի 1:

ԵՐԿԻՐ - ՌՈՒՄԻՆԻԱ

Հատված  
Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ  
Ազգային

Նկարագրում

Մրցակցության կանոններ դեռ չեն իրագործվում Ռումինիայում: Մրցակցության պաշտպանության մասին օրենքի նախագիծը ներկայացվել է Խորհրդարանին եւ այն

պլանավորվում է ընդունել 1994 թվականի ընթացքում:

Այդ նախագիծը պարունակում է մրցակցության մասին ԵՄ օրենսդրությանը համահունչ հակամրցակցային վարքագծին վերաբերող դրույթներ:

Աստիճանական վերացում  
1996 թվականի դեկտեմբերի 31:

ԵՐԿԻՐ - ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ

Հատված  
Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ  
Ազգային

Նկարագրում

Ռուսաստանի Դաշնության մեջ ստեղծված են հակամենատիրական օրենսդրության

ծավալուն հիմքեր, բայց հարկ կլինի մշակել մյուս իրավական եւ կազմակերպական

միջոցները մենատիրական գործունեությունը եւ անբարեխիղճ մրցակցությունը կանխելու, սահմանափակելու կամ հաղթահարելու համար:

Աստիճանական վերացում  
2001 թվականի հուլիսի 1:

ԵՐԿԻՐ - ՍԼՈՎԵՆԻԱ

Հատված  
Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ

Ազգային

Նկարագրում

"Մրցակցության պաշտպանության մասին" 1993 թվականին ընդունված եւ Պաշտոնական N 18/93 ամսագրում հրապարակված օրենքը հակամրցակցային վարքագիծը քննության է առնում ընդհանրապես: Գործող օրենքը պայմաններ է սահմանում մրցակցության մարմիններ ստեղծելու համար: Ներկայումս մրցակցության հիմնական մարմինը հանդիսանում է տնտեսական հարաբերությունների զարգացման նախարարության մրցակցության պաշտպանության բյուրոն: Հաշվի առնելով էներգետիկ հատվածի կարելությունը՝ նախատեսվում է այդ կապակցությամբ առանձին օրենք, եւ, այսպիսով, ավելի շատ ժամանակ է պահանջում լրիվ համապատասխանության համար:

Աստիճանական վերացում  
1998 թվականի հունվարի 1:

ԵՐԿԻՐ - ՎՐԱՍՏԱՆ

Հատված  
Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ  
Ազգային

Նկարագրում

Վրաստանում ապամենատիրության օրենքը ներկայումս գտնվում է մշակման փուլում, այդ պատճառով պետությունը դեռեւս մենատիրություն ունի բոլոր էներգատարների եւ էներգառեսուրսների նկատմամբ. մի բան, որը սահմանափակում է մրցակցության հնարավորությունը վառելիքէներգետիկ համալիրում:

Աստիճանական վերացում  
1999 թվականի հունվարի 1:

ԵՐԿԻՐ - ՏԱՋԻԿՍՏԱՆ

Հատված  
Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ  
Ազգային

Նկարագրում

1993 թվականին Տաջիկստանում ընդունվել է ապամենատիրության եւ մրցակցության

մասին օրենքը: Սակայն Տաջիկստանի տնտեսական բարդ կացության պատճառով օրենքի գործողությունը ժամանակավորապես առկախված է:

Աստիճանական վերացում  
1997 թվականի դեկտեմբերի 31:

ԵՐԿԻՐ - ՈՒԶԲԵԿՍՏԱՆ

Հատված  
Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ  
Ազգային

Նկարագրում

Ուզբեկստանի Հանրապետությունում ընդունվել է 1992 թվականի հուլիսից գործում է "Մենատիրական գործունեության սահմանափակման մասին"

Ուզբեկստանի

Հանրապետության Օրենքը: Սակայն օրենքի գործողությունը (ինչպես նշված է 1-ին

հատվածում /3-րդ կետ/) չի տարածվում Էներգետիկայի բնագավառի ձեռնարկությունների գործունեության հետ կապված հարաբերությունների վրա:

Աստիճանական վերացում

2001 թվականի հուլիսի 1:

-----  
ԻՐՏԵԿ - շարունակությունը հաջորդ մասում

ԷՆԵՐԳԵՏԻԿ ԽԱՐՏԻԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
(4-րդ մաս)

ՀՈՂՎԱԾ 6 (5)

"Եթե մի Պայմանավորվող կողմը գտնի, որ այլ Պայմանավորվող կողմի տարածքում որեւէ կոնկրետ հակամրցակցային վարքագիծ բացասաբար է ազդում սույն հոդվածում սահմանված նպատակների հետ կապված Էական շահերի վրա, ապա այդ Պայմանավորվող

կողմը կարող է մյուս Պայմանավորվող կողմին տեղյակ պահել եւ կարող է առաջարկել,  
որ այդ Պայմանավորվող կողմի մրցակցության հարցերի մարմինները պատշաճ գործողություն ձեռնարկեն ստիպողական կատարման ուղղությամբ: Ծանուցող Պայմանավորվող կողմը այդպիսի ծանուցման մեջ մտցնում է բավարար տեղեկատվություն, որպեսզի ծանուցվող Պայմանավորվող կողմին հնարավորություն տա  
ի հայտ բերելու ծանուցման առարկա հանդիսացող հակամրցակցական վարքագիծը, եւ  
անում է առաջարկություն այդպիսի հետագա տեղեկատվության եւ համագործակցության  
մասին, որոնք ծանուցող Պայմանավորվող կողմն ի վիճակի է տրամադրելու:  
Ծանուցվող  
Պայմանավորվող կողմը կամ, հանգամանքներից կախված, մրցակցության հարցերի  
համապատասխան մարմինները կարող են խորհրդակցություններ անցկացնել ծանուցող  
Պայմանավորվող կողմի մրցակցության հարցերի մարմինների հետ եւ որոշում կայացնել  
այն մասին, թե հարկ կա՞ ձեռնարկելու գործողություն ստիպողական կատարման ուղղությամբ այն հակամրցակցային վարքագծի վերաբերյալ, որի մասին պնդվում է  
ծանուցման մեջ. լրիվ չափով հաշվի է առնվում ծանուցող Պայմանավորվող կողմի խնդրանքը: Ծանուցող Պայմանավորվող կողմը տեղեկացնում է իր որոշման մասին կամ  
մրցակցության հարցերի համապատասխան մարմինների որոշման մասին եւ կարող է, եթե  
նա այդ ցանկանում է, ծանուցող Պայմանավորվող կողմին տեղեկացնել ընդունված  
որոշման հիմքերի մասին: Եթե ստիպողական կատարման ուղղությամբ գործողություն է  
ձեռնարկվում, ծանուցվող Պայմանավորվող կողմը դրա արդյունքների մասին, հնարավորին չափ, ցանկացած նշանակալի միջանկյալ եզրահանգման մասին հաղորդում է  
ծանուցող Պայմանավորվող կողմին":

#### ԵՐԿԻՐ - ԱՂԲԵԶԱՆ

Հատված  
Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ  
Ազգային

Նկարագրում

Հակամենատիրական գործունեություն ծավալող պետական կառուցվածքներ կստեղծվեն  
հակամենատիրական օրենսդրության ընդունումից հետո:

Աստիճանական վերացում

2000 թվականի հունվարի 1:

ԵՐԿԻՐ - ԱԼԲԱՆԻԱ

Հատված  
Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ  
Ազգային

Նկարագրում

Ալբանիայում մրցակցության կանոնների ստիպողական իրականացման մարմիններ գոյություն չունեն: Այդպիսի մարմիններ կնախատեսվեն մրցակցության պաշտպանության մասին օրենքում, որը պլանավորվում է ավարտել 1996 թվականին:

Աստիճանական վերացում  
1999 թվականի հունվարի 1:

ԵՐԿԻՐ - ԲԵԼԱՌՈՒՍ

Հատված  
Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ  
Ազգային

Նկարագրում

Պետական հակամենատիրական մարմիններ կստեղծվեն հակամենատիրական օրենսդրության ընդունումից հետո:

Աստիճանական վերացում  
2000 թվականի հունվարի 1:

ԵՐԿԻՐ - ՀԱՅԱՍՏԱՆ

Հատված  
Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ  
Ազգային

Նկարագրում

Տվյալ կետի դրույթների ստիպողական կատարման հաստատություններ Հայաստանում դեռևս չեն հիմնվել:  
Մրցակցության պաշտպանության մասին եւ Էներգետիկայի մասին օրենքներում

պլանավորվում է մտցնել այդպիսի հաստատությունների ստեղծման դրույթներ:

Աստիճանական վերացում  
1997 թվականի դեկտեմբերի 31:

ԵՐԿԻՐ - ՂԱՉԱԽՍՏԱՆ

Հատված  
Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ  
Ազգային

Նկարագրում

Ղազախստանում ստեղծված է հակամենատիրական կոմիտե: Սակայն դրա գործունեությունը կարիք ունի ինչպես օրենսդրական, այնպես էլ կազմակերպական կատարելագործման՝ հակամրցակցային վարքագծի նկատմամբ պահանջների քննության արդյունավետ մեխանիզմի մշակման համար:

Աստիճանական վերացում  
1998 թվականի հունվարի 1

ԵՐԿԻՐ - ՂՐՂՉՍՏԱՆ

Հատված  
Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ  
Ազգային

Նկարագրում

Ղրղզստանում չկա հակամրցակցային երեւույթները եւ նորմատիվ-օրենսդրական բազան վերահսկող որեւէ մեխանիզմ: Անհրաժեշտ է համապատասխան հակամենատիրական մարմինների ստեղծում:

Աստիճանական վերացում  
2001 թվականի հուլիսի 1

ԵՐԿԻՐ - ՄՈԼՂՈՎԱ

Հատված  
Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ  
Ազգային

Նկարագրում

Մոլդովայի Հանրապետությունում մրցակցային վարքագծի դրույթների կատարումը վերահսկող մարմինը հանդիսանում է Էկոնոմիկայի նախարարությունը: Մոլդովայի Հանրապետության "Վարչական իրավախախտումների մասին" օրենքի մեջ մտցվել են համապատասխան լրացումներ, որոնք նախատեսում են որոշ վարչական պատիժներ մրցակցության կանոնները մենատերերի կողմից չկատարվելու եւ չպահպանվելու համար: "Մրցակցության մասին" օրենքի մշակվող նախագծում կարտացոլվեն մրցակցության կանոնների ստիպողական կատարման դրույթներ:

Աստիճանական վերացում  
1998 թվականի հունվարի 1:

ԵՐԿԻՐ - ՌՈՒՄԻՆԻԱ

Հատված  
Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ  
Ազգային

Նկարագրում

Տվյալ կետի դրույթների կատարման ապահովման հաստատություններ Ռումինիայում դեռեւս չեն հիմնվել: Մրցակցության մասին օրենքի նախագծում, որը պլանավորվում է ընդունել 1994 թվականի ընթացքում, նախատեսվում են այնպիսի հաստատություններ, որոնց խնդիրը մրցակցության կանոնների կատարման ապահովումն է: Նախագծում նաեւ նախատեսված է իննամսյա ժամանակահատված կատարումն ապահովելու համար՝ սկսած օրենքի հրապարակման թվականից: Ասոցիացիայի մասին Ռումինիայի եւ Եվրոպական համայնքների միջեւ կնքված համաձայնագրին համապատասխան՝ Ռումինիային տրված է հնգամյա ժամանակահատված մրցակցության կանոնների պահպանման համար:

Աստիճանական վերացում  
1998 թվականի հունվարի 1:

ԵՐԿԻՐ - ՎՐԱՍԱՆ



Հատված  
Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ  
Ազգային

Նկարագրում

Ապամենատիրության մասին օրենքները Վրաստանում ներկայումս մշակման փուլում են, եւ այդ պատճառով դեռեւս չեն ստեղծվել մրցակցության հարցերով մարմիններ:

Աստիճանական վերացում  
1999 թվականի հունվարի 1:

ԵՐԿԻՐ - ՏԱԶԻԿՍԱՆ

Հատված  
Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ  
Ազգային

Նկարագրում

Տաջիկստանի Հանրապետությունում ընդունվել են օրենքներ ապամենատիրության եւ մրցակցության մասին, սակայն մրցակցության կանոնների կատարման ապահովման հաստատությունները գտնվում են մշակման փուլում:

Աստիճանական վերացում  
1997 թվականի դեկտեմբերի 31:

ԵՐԿԻՐ - ՈՒԶԲԵԿՍԱՆ

Հատված  
Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ  
Ազգային

Նկարագրում

Ուզբեկստանի Հանրապետությունում ընդունվել է 1992 թվականի հուլիսից գործում է "Մենատիրական գործունեության սահմանափակման մասին" Ուզբեկստանի Հանրապետության օրենքը: Սակայն այդ օրենքի գործողությունը (ինչպես նշված է 1-ին հոդվածում /3-րդ կետ) չի տարածվում էներգետիկայի բնագավառի ձեռնարկությունների գործունեության հետ կապված հարաբերությունների վրա:

Աստիճանական վերացում  
2001 թվականի հուլիսի 1:

#### ՅՈՒՐԱԾ 7 (4)

"Այն դեպքում, եթե Էներգետիկ նյութերի եւ արտադրանքի տարանցումը չի կարող ձեռք բերվել առեւտրային պայմաններով Էներգիայի փոխադրման շինությունների օգնությամբ, ապա Պայմանավորվող կողմերը չպետք է խոչընդոտեն նոր հզորությունների ստեղծմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ այլ բան կարող է նախատեսված լինել կիրառվող օրենսդրության մեջ, որը համատեղելի է 1-ին կետի հետ":

#### ԵՐԿԻՐ - ԱՂՐԲԵՁԱՆ

Հատված  
Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ  
Ազգային

Նկարագրում

Անհրաժեշտ է Էներգետիկայի ուղղությամբ օրենքների համալիրի ընդունում, այդ թվում՝ տարանցման հարցերը կարգավորող՝ արտոնագրման ընթացակարգերի գծով:  
Անցումային ժամանակաշրջանի ընթացքում նախատեսվում է Էլեկտրահաղորդման գծերի, ինչպես նաեւ արտադրող հզորությունների շինարարություն եւ արդիականացում՝ դրանց տեխնիկական մակարդակը համաշխարհային պահանջներին հասցնելու եւ շուկայական տնտեսության պայմաններին հարմարացնելու նպատակով:

Աստիճանական վերացում  
1999 թվականի դեկտեմբերի 31:

#### ԵՐԿԻՐ - ԲԵԼԱՌՈՒՄ

Հատված  
Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ  
Ազգային

Նկարագրում

Ներկայումս մշակվում են օրենքներ Էներգետիկայի մասին, հողի մասին եւ այլ օրենքներ, եւ մինչեւ դրանց վերջնական հաստատվելը հանրապետության տարածքում

Էներգառեսուրսների փոխադրման համար տրանսպորտային նոր հզորությունների ստեղծման պայմանների մասում պահպանվում է անորոշություն:

Աստիճանական վերացում  
1998 թվականի դեկտեմբերի 31:

#### ԵՐԿԻՐ - ԲՈՒԼՂԱՐԻԱ

Հատված  
Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ  
Ազգային

Նկարագրում

Բուլղարիայում չկան Էներգետիկ նյութերի եւ արտադրանքի տարանցումը կարգավորող օրենքներ: Էներգետիկ հատվածում ընթանում է կառուցվածքային վերակառուցում, ներառյալ իրավական հիմքերի, օրենսդրության եւ նորմատիվ ակտերի մշակումը:

Աստիճանական վերացում

7-ամյա անցումային ժամանակաշրջան է անհրաժեշտ Էներգետիկ նյութերի եւ արտադրանքի տարանցմանը վերաբերող օրենսդրությունը սույն դրույթին լիակատար համապատասխանեցնելու համար:  
2001 թվականի հուլիսի 1:

#### ԵՐԿԻՐ - ԼԵՅՂԱՍԱՆ

Հատված  
Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ  
Ազգային

Նկարագրում

Էներգետիկայի մասին Լեհաստանի՝ եզրափակիչ փուլում գտնվող օրենքը նախատեսում է այն նորմերին համանման օրենսդրական նոր նորմերի ստեղծում, որոնք կիրառվում են շուկայական տնտեսություն ունեցող երկրներում (մշակման արտոնագրեր, Էներգակիրների փոխանցում, բաշխում եւ առեւտուր): Մինչեւ Խորհրդարանի կողմից դրա ընդունումը պահանջվում է սույն կետի համաձայն պարտավորությունների կատարման ժամանակավոր առկախում:

Աստիճանական վերացում  
1995 թվականի դեկտեմբերի 31

## ԵՐԿԻՐ - ՀՈՒՆԳԱՐԻԱ

Հատված  
Էլեկտրաէներգետիկա

Կառավարության մակարդակ  
Ազգային

Նկարագրում

Գործող օրենսդրության համաձայն՝ Էլեկտրահաղորդման բարձրավոլտ գծերի շինարարությունը եւ շահագործումը հանդիսանում է պետության մենաշնորհը: Էլեկտրահաղորդման բարձրավոլտ գծերի շինարարության, շահագործման եւ դրանց տիրանալու համար նոր իրավական օրենսդրական հիմքերի մշակումը գտնվում է պատրաստման փուլում:

Արդյունաբերության եւ առևտրի նախարարությունը արդեն նախատեսել է Էլեկտրաէներգիայի մասին նոր օրենքի մշակումը, որը ազդեցություն կունենա նաեւ

քաղաքացիական օրենսդրության եւ կոնցեսիաների մասին օրենքի վրա:  
Դրույթների

կատարման կարելի է հասնել Էլեկտրաէներգիայի մասին նոր օրենքի եւ հարակից օրենսդրական որոշումների ուժի մեջ մտնելուց հետո:

Աստիճանական վերացում  
1996 թ. դեկտեմբերի 31

### ՀՈՂՎԱԾ 9 (1)

"Պայմանավորվող կողմերն ընդունում են կապիտալի բաց շուկաների կարելիությունը կապիտալի հոսքի խրախուսման համար՝ Էներգետիկ նյութերի եւ

մթերքների առևտրի ֆինանսավորման, ինչպես նաեւ մյուս Պայմանավորվող կողմերի,

հատկապես անցումային ժամանակաշրջանի տնտեսություն ունեցող կողմերի տարածքում

Էներգետիկ հատվածում տնտեսական գործունեության մեջ կապիտալ ներդրումների

իրականացման եւ դրանց աջակցություն ցույց տալու նպատակով:

Համապատասխանաբար,

յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ ձգտում է մյուս Պայմանավորվող կողմերի ընկերությունների եւ քաղաքացիների համար ստեղծել կապիտալի իր շուկան մուտք

գործելու պայմաններ՝ Էներգետիկ նյութերի եւ մթերքների առևտրի ֆինանսավորման

նպատակով եւ մյուս Պայմանավորվող կողմերի տարածքում Էներգետիկ հատվածում

տնտեսական գործունեության մեջ կապիտալ ներդրումների նպատակներով այնպիսի հիմքի

վրա, որը նվազ նպաստավոր չէ, քան այն հիմքն է, որն այդ կողմը նման

հանգամանքներում տրամադրում է իր սեփական ընկերություններին եւ քաղաքացիներին կամ ցանկացած այլ Պայմանավորվող կողմի կամ ցանկացած երրորդ պետության ընկերությունների եւ քաղաքացիների՝ կախված այն բանից, թե որն է առավել նպաստավոր”:

#### ԵՐԿԻՐ - ԱՂՐԲԵԶԱՆ

Հատված  
Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ  
Ազգային

Նկարագրում  
Համապատասխան օրենսդրությունը գտնվում է մշակման փուլում:

Աստիճանական վերացում  
2000 թվականի հունվարի 1:

#### ԵՐԿԻՐ - ԲԵԼԱՌՈՒՄ

Հատված  
Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ  
Ազգային

Նկարագրում  
Համապատասխան օրենսդրությունը գտնվում է մշակման փուլում:

Աստիճանական վերացում  
2000 թվականի հունվարի 1:

#### ԵՐԿԻՐ - ՎՐԱՍՏԱՆ

Հատված  
Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ  
Ազգային

Նկարագրում

Անհրաժեշտ է մշակել օրենքների փաթեթ տվյալ հարցի վերաբերյալ:  
Վրաստանի  
Հանրապետությունում ներկայումս տարբեր էներգակիրների (Էլեկտրաէներգիա, բնական գազ, նավթամթերքներ, ածուխ) փոխադրման եւ տրանզիտի համար գոյություն ունեն գանազան պայմաններ:

Աստիճանական վերացում  
1999 թվականի հունվարի 1

ԵՐԿԻՐ - ՂԱԶԱԽՍՏԱՆ

Հատված  
Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ  
Ազգային

Նկարագրում

Ներկայումս մշակվում է արտասահմանյան ներդրումների մասին օրենքը, որը պետք է ընդունվի Խորհրդարանի աշխատանքային կոմիտեի կողմից՝ 1994 թվականին:

Աստիճանական վերացում  
2001 թվականի հուլիսի 1:

ԵՐԿԻՐ - ՂՐՂՁՍՏԱՆ

Հատված  
Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ  
Ազգային

Նկարագրում  
Ներկայումս մշակվում է համապատասխան օրենսդրություն:

Աստիճանական վերացում  
2001 թվականի հուլիսի 1:

ԵՐԿԻՐ - ՎՐԱՍՏԱՆ

Հատված  
Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ  
Ազգային

Նկարագրում  
Համապատասխան օրենսդրությունը գտնվում է մշակման փուլում:

Աստիճանական վերացում  
1997 թվականի հունվարի 1:

ՀՈԴՎԱԾ 10 (7)  
Կոնկրետ միջոցներ

"Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իր տարածքում մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների կապիտալ ներդրումների, ինչպես նաև դրանց հետ կապված նրանց

գործունեության վերաբերյալ, ներառյալ կառավարումը, սատարումը, օգտագործումը,

տիրանալը կամ տնօրինումը, տրամադրում է ոչ նվազ նպաստավոր ռեժիմ այն ռեժիմի

համեմատությամբ, որը նա տրամադրում է իր սեփական ներդրողների կամ այլ ցանկացած

Պայմանավորվող կողմի կամ ցանկացած երրորդ պետության ներդրողների կապիտալ

ներդրումների, ինչպես նաև դրանց հետ կապված նրանց գործունեության վերաբերյալ,

ներառյալ կառավարումը, սատարումը, օգտագործումը, տիրանալը կամ տնօրինումը`

կախված այն բանից, թե ինչն է առավել նպաստավոր":

#### ԵՐԿԻՐ - ԲՈՒԼՂԱՐԻԱ

Հատված

Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ

Ազգային

Նկարագրում

Օտարերկրյա անձինք չեն կարող ձեռք բերել հողի սեփականության իրավունք: Հիսուն տոկոսից ավելի օտարերկրյա մասնակցության բաժնեմաս ունեցող ընկերությունը չի կարող ձեռք բերել գյուղատնտեսական հողերի սեփականության իրավունք: Օտարերկրացիները եւ օտարերկրյա իրավաբանական անձինք չեն կարող ձեռք

բերել հողի սեփականության իրավունք, բացառությամբ որպես ժառանգություն` օրենքին համապատասխան. այդ դեպքում նրանք պարտավոր են այն հանձնել:

Օտարերկրյա անձը կարող է ձեռք բերել շենքերի սեփականության իրավունք, բայց

առանց հողի սեփականության իրավունքի:

Օտարերկրյա անձինք կամ վերահսկվող` օտարերկրյա մասնակցություն ունեցող

ընկերությունները պետք է թույլտվություն ստանան, մինչեւ կիրականացնեն գործունեության հետեւյալ տեսակները.

բնական ռեսուրսների հետախուզում, մշակում եւ արդյունահանում տարածքային

ծովից, մայրցամաքային ելուստից կամ տնտեսական բացառիկ գոտուց,

անշարժ գույքի ձեռք բերում նախարարների խորհրդի սահմանած

աշխարհագրական

տարածաշրջաններում.

թույլտվությունները տրվում են նախարարների խորհրդի կողմից կամ

նախարարների

խորհրդի լիազորած մարմնի կողմից:

Աստիճանական վերացում  
2000 թվականի հուլիսի 1:

ՅՈՒՐԱԿԱՆ 14 (1) (դ)

"Այդ կապիտալ ներդրման հետ կապված՝ արտասահմանում վարձված  
անձնակազմի  
չծախսված վաստակի եւ այլ վարձատրության փոխանցումը":

ԵՐԿԻՐ - ԲՈՒԼՂԱՐԻԱ

Չատված  
Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ  
Ազգային

Նկարագրում

Չիսուն տոկոսից ավելի օտարերկրյա մասնակցության բաժնեմաս ունեցող  
ընկերությունների կամ Բուլղարիայում որպես առանձին տրեյդեր կամ  
արտասահմանյան  
ընկերության մասնաճյուղ կամ ներկայացուցչություն գրանցված օտարերկրացու  
կողմից  
վարձված օտարերկրացիները, որոնք աշխատավարձ են ստանում Բուլղարական  
տարադրամով՝ լեւերով, կարող են արտասահմանյան տարադրամ գնել իրենց  
աշխատավարձի  
70 տոկոսը չգերազանցող գումարով, ներառյալ սոցիալական ապահովության  
վճարումները:

Աստիճանական վերացում  
2001 թվականի հուլիսի 1:

ԵՐԿԻՐ - ՅՈՒՆԳԱՐԻԱ

Չատված  
Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ  
Ազգային

Նկարագրում

Յունգարիայում "Օտարերկրյա ներդրումների մասին" օրենքի համաձայն (33-րդ  
հոդված)՝ օտարերկրյա բարձրագույն ղեկավար եւ կառավարչական  
անձնակազմը, դիտորդ  
խորհուրդների անդամները եւ օտարերկրյա ծառայողները կարող են իրենց  
խնայողությունները փոխանցել մինչեւ իրենց աշխատավարձի 50 տոկոսի չափով՝  
իրենց  
ընկերության դրամատան միջոցով հարկերը պահելուց հետո:



Աստիճանական վերացում

Տվյալ կոնկրետ սահմանափակման աստիճանական վերացումը կախված է տարադրամի փոխարկման ազատականացման այն ծրագրի իրականացման ասպարեզում հնարավոր առաջադիմություն ձեռք բերելուց, որի վերջնական նպատակն է ֆորինտի լիակատար փոխարկելիությունը: Այդ սահմանափակումը որեւէ խոչընդոտ չի ստեղծում օտարերկրյա ներդրողների համար: Աստիճանական վերացումը հիմնվում է այն բանի վրա, ինչ նախատեսված է 32-րդ հոդվածում: 2001 թվականի հուլիսի 1

ՀՈՂՎԱԾ 20 (3)

"Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ նշանակում է մեկ կամ ավելի թվով տեղեկատու կետեր, ուր կարելի է դիմել վերոհիշյալ օրենքների, օրենսդրական ակտերի, դատական վճիռների եւ վարչական որոշումների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու խնդրանքով, եւ այդպիսի նշանակման մասին անհապաղ հաղորդում է Քարտուղարությանը, որն այդ տեղեկությունները ներկայացնում է ըստ պահանջի":

ԵՐԿԻՐ - ԱՂԲԵԶԱՆ

Հատված  
Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ  
Ազգային

Նկարագրում

Ադրբեջանի Հանրապետությունում առայժմ չկան պաշտոնական տեղեկատու կետեր, ուր կարելի է դիմել համապատասխան օրենքների եւ մյուս օրենսդրական ակտերի մասին տեղեկություն ստանալու խնդրանքով: Ներկայումս այդպիսի տեղեկությունը կենտրոնացվում է զանազան կազմակերպություններում:

Աստիճանական վերացում  
1997 թվականի դեկտեմբերի 31:

ԵՐԿԻՐ - ԲԵԼԱՌՈՒՄ

Հատված  
Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ

Ազգային

Նկարագրում

Բելառուսի Հանրապետությունում առայժմ չկան պաշտոնական տեղեկատու կետեր, որոնք կարող են տեղեկություն հաղորդել օրենքների, օրենսդրական ակտերի, դատական վճիռների եւ վարչական որոշումների վերաբերյալ: Դատական վճիռների եւ վարչական որոշումների մասում բացակայում է դրանց հրապարակման պրակտիկան:

Աստիճանական վերացում  
1998 թվականի դեկտեմբերի 31:

ԵՐԿԻՐ - ՀԱՅԱՍՏԱՆ

Հատված  
Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ  
Ազգային

Նկարագրում

Հայաստանի Հանրապետությունում առայժմ չկան պաշտոնական կետեր, ուր կարելի է դիմել համապատասխան օրենքների եւ օրենսդրական մյուս ակտերի մասին տեղեկություն ստանալու ինդրանքով: Չկա նաեւ տեղեկատվական կենտրոն: Կա 1994-95 թթ. այդպիսի կենտրոն հիմնելու պլան: Պահանջվում է տեխնիկական օժանդակություն:

Աստիճանական վերացում  
1996 թվականի դեկտեմբերի 31:

ԵՐԿԻՐ - ՂԱԶԱԽՍՏԱՆ

Հատված  
Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ  
Ազգային

Նկարագրում

Ղազախստանում սկսված է օրենքների եւ օրենսդրական ակտերի մասին տեղեկատու կետերի ստեղծումը: Ինչ վերաբերում է դատական վճիռներին եւ վարչական որոշումներին, ապա դրանք Ղազախստանում չեն հրապարակվում (բացառությամբ

Ղազախստանի Հանրապետության Գերագույն դատարանի առանձին որոշումների), քանի որ չեն համարվում իրավունքի աղբյուրներ: Գոյություն ունեցող պրակտիկայի փոփոխումը կպահանջի երկարատեւ անցումային ժամանակաշրջան:

Աստիճանական վերացում  
2001 թվականի հուլիսի 1:

#### ԵՐԿԻՐ - ՄՈԼՂՈՎԱ

Հատված  
Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ  
Ազգային

Նկարագրում  
Անհրաժեշտ է ստեղծել տեղեկատու կետեր:

Աստիճանական վերացում  
1995 թվականի դեկտեմբերի 31:

#### ԵՐԿԻՐ - ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ

Հատված  
Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ  
Ռուսաստանի Դաշնությունը եւ Դաշնության կազմի մեջ մտնող հանրապետությունները

Նկարագրում

Ռուսաստանի Դաշնությունում առայժմ չկան պաշտոնական տեղեկատու կետեր, ուր կարելի է դիմել համապատասխան օրենքների եւ մյուս օրենսդրական ակտերի մասին տեղեկություն ստանալու խնդրանքով: Ինչ վերաբերում է դատական վճիռներին եւ վարչական որոշումներին, ապա դրանք չեն դիտվում որպես իրավունքի աղբյուր:

Աստիճանական վերացում  
2000 թվականի դեկտեմբերի 31:

#### ԵՐԿԻՐ - ՍԼՈՎԵՆԻԱ

Հատված  
Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ  
Ազգային

## Նկարագրում

Սլովենիայում առայժմ չկան պաշտոնական տեղեկատու կետեր, ուր կարելի է դիմել համապատասխան օրենքների եւ մյուս օրենսդրական ակտերի մասին տեղեկություն ստանալու խնդրանքով: Ներկայումս այդպիսի տեղեկություն տրվում է զանազան նախարարություններում: Օտարերկրյա ներդրումների մասին նախապատրաստվող օրենքը նախատեսում է այդպիսի տեղեկատու կետի ստեղծում:

Աստիճանական վերացում  
1998 թվականի հունվարի 1:

### ԵՐԿԻՐ - ՏԱԶԻԿՍԱՆ

Հատված  
Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ  
Ազգային

## Նկարագրում

Տաջիկստանի Հանրապետությունում առայժմ չկան տեղեկատու կետեր, ուր կարելի է դիմել համապատասխան օրենքների եւ մյուս օրենսդրական ակտերի մասին տեղեկություն ստանալու խնդրանքով: Դա կապված է ֆինանսական հիմնախնդիրների հետ:

Աստիճանական վերացում  
1997 թվականի դեկտեմբերի 31:

### ԵՐԿԻՐ - ՈՒԿՐԱԻՆԱ

Հատված  
Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ  
Ազգային

## Նկարագրում

Անհրաժեշտ է օրենքների գոյություն ունեցող հրապարակայնության կատարելագործում՝ հասնելու համար միջազգային պրակտիկայի մակարդակին: Ուկրաինան պետք է ստեղծի տեղեկատու կետեր օրենքների, օրենսդրական ակտերի, դատական վճիռների եւ վարչական որոշումների եւ ընդհանուր կիրառման նորմերի մասին տեղեկատվության համար:

Աստիճանական վերացում  
1998 թվականի հունվարի 1:

### ՀՈԴՎԱԾ 22 (3)

"Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ ապահովում է, որ եթե ստեղծում կամ պահում է կազմակերպություն եւ այդ կազմակերպությանը օժտում է օրենսդրական լիազորություններով, այդպիսի կազմակերպությունն այդ լիազորություններն իրականացնի սույն Պայմանագրով Պայմանավորվող կողմի պարտավորությունների հետ համատեղելի ձեւով":

### ԵՐԿԻՐ - ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Հատված  
Էներգետիկայի բոլոր հատվածները

Կառավարության մակարդակ  
Ազգային

Նկարագրում

Այն բանի համար, որ սպառվեն պետական նյութական ռեսուրսները, վարչության կողմից պահպանվող ուրանի հանքաքարի ռեսուրսները, ուրանի հանքաքարի եւ կոնցենտրատների ոչ մի ներմուծում չի արտոնագրվի, ներառյալ ուրան պարունակող ոչ չեխական ծագման կապուկները:

Աստիճանական վերացում  
2001 թվականի հուլիսի 1:

\* Պայմանագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1998 թվականի ապրիլի 19-ից: